

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը
քրեական գործերով

Դասավանդման նյութ

Հեղինակ՝
Դավիթ Մելքոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1. ԱՐԴԱՐԱՑԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻԵԿ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, «ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԲՆՈՒՅԹԸ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... 4

Թեմա 1. Արդարացի դատաքննության իրավունքի տեղը և դերը ՄԻԵԿ համակարգում, արդարացի դատաքննության իրավունքին առնչվող ՄԻԵԿ այլ իրավունքների համառոտ ներկայացում:..... 4

Թեմա 2. «Քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար բնույթը և բովանդակությունը 6

ԴԱՍ 2. «ԴԱՏԱՐԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԱՆՕՏԱՐԵԼԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՄԻԵԿ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ: ... 10

Թեմա 1. Քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի «դատարանի» իրավունքը և դատարանի ատրիբուտները..... 10

Թեմա 2. «Օրենքի հիման վրա ստեղծված դատարան». լեգիտիմություն, իրավասություն, անաչառություն, դատարանի գործողությունները և որոշումները, դատավորի դատական և արտադատական վարքագիծը 11

ԴԱՍ 3. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ԱՆՁԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ..... 17

Թեմա 1. Ազատության կանխավարկածը և քրեական դատավարությունում անձին ազատությունից զրկելու եղանակները ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի..... 18

Թեմա 2. «Հիմնավոր կասկածի» հասկացությունը և անձին ազատությունից զրկելու պայմանները 22

ԴԱՍ 4 . ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 32

Թեմա 1. Ձերբակալման պատճառների և առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացվելու, դատավորի առաջ կանգնելու և կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավունքը..... 32

Թեմա 2. Անօրինական ձերբակալման կամ կալանավորման համար փոխհատուցման իրավունք 37

ԴԱՍ 5. «ՄԱՏՉԵԼԻ ԴԱՏԱՐԱՆ». ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ: ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ և ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 39

Թեմա 1. Դատարանի իրավունք: Քննության ողջամիտ ժամկետը և պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: 39

Թեմա 2. Հրապարակայնություն. դոբրաց դատական քննությունը որպես մեղադրյալի և հասարակության իրավունք:..... 41

ԴԱՍ 6. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ: ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ՏԱՐԲԵՐԸ, ԼՈՒԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:	46
Թեմա 1. Անմեղության կանխավարկածի բովանդակության բացահայտումը ըստ եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի.....	46
Թեմա 2. Լռելու իրավունք և ապացուցման պարտականություն.....	54
ԴԱՍ 7. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ:	60
Թեմա 1. Առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացվելու և դրանից պաշտպանվելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունք:	60
Թեմա 2. Մեղադրյալի՝ իրեն անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանելու իրավունքը.....	64
ԴԱՍ 8. ՎԿԱՆԵՐԻՆ ԱՌԵՐԵՍ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ.....	67
Թեմա 1. «Վկա» հասկացության ինքնավար բնույթը: Հոդված 6 §§ 1 և 3(դ) առնչությամբ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ձևավորած հիմնական սկզբունքները	67
Թեմա 2. «Միակ և որոշիչ» ապացույց լինելու թեստը ըստ ՄԻԵԿ նախադեպային իրավունքի ...	71
ԴԱՍ 9. ՕՐԵՆՔԻ ԽԱՆՏՄԱՍԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ.....	74
Թեմա 1. Ապացույցների թույլատրելիությունն ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի:.....	74
Թեմա 2. Ոստիկանության քողարկված աշխատակիցների կողմից հանցագործության նմանակման միջոցով ձեռք բերվող ապացույցների թույլատրելիությունը:.....	80
ԴԱՍ 10. ՄԻԱՅՆ ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ	84
Թեմա 1. Պատասխանատվություն միայն օրենքի հիման վրա: Ելութական և դատավարական օրենքի հետադարձ ուժը	84
Թեմա 2. Նույն հանցագործության համար կրկին անգամ չդատվելու իրավունք.....	88
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	92

**ԴԱՍ 1. ԱՐԴԱՐԱՑԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻԵԿ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, «ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ» ՀԱՄԱՑԱՑՈՒԹՅԱՆ
ԻՆՔՆԱՎԱՐ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը խախտերարդարադատության շահերը:

**Թեմա 1. Արդարացի դատաքննության իրավունքի տեղը և դերը
ՄԻԵԿ համակարգում, արդարացի դատաքննության
իրավունքին առնչվող ՄԻԵԿ այլ իրավունքների համառոտ
ներկայացում**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Ընդհանուր առմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը Եվրոպական դատարանի պրակտիկայում առավել լայն կիրառություն ստացած կոնվենցիոնալ հոդվածն է, որի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավական հարուստ և բազմաբովանդակ նախադեպային իրավունք է ձևավորել:

Չնայած սույն իրավունքի կարևորությանը՝ դրա անվանման, սահմանման, կառուցվածքի և տարրերի հարաբերակցության հարցում միասնական մոտեցում չի ձևավորվել: *Գոլդերի* գործով Եվրոպական դատարանը մատնանշել է, որ «6-րդ հոդվածով ամրագրված են առանձին իրավունքներ, որոնք, սակայն, բխում են նույն հիմնարար գաղափարից և համակցության մեջ վերցրած՝ կազմում են մեկ միասնական իրավունք, որն առանձին եզրույթով հստակ սահմանված չէ» (*Golder c. Royaume-Uni, 21 février 1975, § 29*): Եվրոպական դատարանի գործունեության սկզբնական շրջանում այս իրավունքն ընդունված էր անվանել «արդարադատության պատշաճ իրականացման իրավունք» («Right to a good administration of justice»), սակայն ներկայումս առավել ընդունված է «արդար դատաքննության իրավունք» արտահայտությունը:

Ամեն դեպքում ցանկացած անվանում պետք է պայմանական համարել, քանի որ այս իրավունքը բարդ երևույթ է, որն ընդգրկում է թե՛ արդարադատության մարմնի կազմակերպմանը և թե՛ արդարադատության իրականացման ընթացակարգին վերաբերող բազմաթիվ փոխկապակցված տարրեր: Այդ տարրերը մարդու իրավունքների տարբեր հիմնարար փաստաթղթերում կարող են տարբեր ձևակերպումներ և բաշխում ունենալ: Եվրոպական կոնվենցիայում այս իրավունքի բոլոր տարրերը սահմանված են մեկ միասնական հոդվածով՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Արդար դատաքննության իրավունքի կիրառության շրջանակն են կազմում հետևյալ երկու ոլորտները՝ խախտված իրավունքների վերականգնումը և անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզումը: Այդ հասկացություններն ինքնավար սահմանադրաիրավական իմաստ ունեն, ուստի դրանց բացահայտման համար անհրաժեշտ է ելնել ոչ միայն և ոչ այնքան ներպետական օրենսդրությունից, որքան մարդու իրավունքների առնչությամբ միջազգային իրավունքում ձևավորված չափանիշներից:

Այսպես, «անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու» հասկացությունն արտահայտում է քրեական ոլորտը, որի սահմանադրաիրավական ծավալը կարող է ավելի լայն լինել, քան ճյուղային իրավականը: Դա բխում է *Էնգելի* գործով որոշմամբ Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումից, որի համաձայն՝ արարքին ներպետական իրավունքում տրված դասակարգումը (որակումը) միակ չափանիշը չէ, որով բնորոշվում է քրեական ոլորտը. անհրաժեշտ է հիմք ընդունել նաև՝ (ա) արարքի բնույթը և (բ) սանկցիայի ծանրության աստիճանը: Այլ կերպ, եթե արարքը պատժելի է ոչ թե ներպետական օրենքով, այլ ուրիշ օրենքով (ոչ թե հանցագործություն է, այլ վարչական կամ կարգապահական իրավախախտում), սակայն՝ (ա) այն իր բնույթով համարժեք է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի, և/կամ (բ) դրա համար սահմանված է քրեական պատժին

համարժեք պատասխանատվության միջոց, ապա այդ արարքով վարույթը պետք է ներառվի «ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզում» հասկացության շրջանակում:

Այդուհանդերձ, «խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությունը պարզաբանելիս նույնպես անհրաժեշտ է ելնել Եվրոպական դատարանի մշակված համապատասխան իրավական չափորոշիչներից և տրամաբանությունից:

Մասնավորապես, «խախտված իրավունք» հասկացությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ 6-րդ հոդվածի կիրառության համար իրավունքի խախտման փաստի արձանագրումը լինի նախապայման, այլ ոչ թե հնարավոր վերջնարդյունք, քանի որ այդ դեպքում արդար դատաքննության իրավունքը կդառնա երևութական:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության խնդիրը վերաբերում է ոչ միայն հորիզոնական, այլև ուղղահայաց հարթությանը՝ վերադաս դատական ատյաններին: «Դատարանի հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Դատարանը պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունից:

Թեմա 2. «Քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար բնույթը և բովանդակությունը

Կոնվենցիայի համակարգում «մեղադրանք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն և կիրառվում է անկախ «մեղադրանք» հասկացությանը ազգային իրավունքում տրվող բնորոշումից: Այսպես, *Դեվեերն ընդդեմ Բելգիայի* 1980 թվականի փետրվարի 27-ի գործով Եվրոպական դատարանը վճռել է, որ «մեղադրանք» հասկացությանն ավելի շուտ պետք է տրվի բովանդակային և ոչ թե «ձևական» նշանակություն, և որ դատարանը կոչված է տեսնելու այն, ինչ թաքնված է գործի հակառակ կողմում, և հետազոտելու քննարկվող ընթացակարգի իրական կողմերը: Այնուհետև, դատարանն ընդգծել է, որ «մեղադրանքը» 6-րդ հոդվածի նպատակներին համապատասխան կարելի էր սահմանել՝ որպես պետական իշխանության իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես ծանուցելը նրա կողմից քրեորեն

պատժելի իրավախախտում կատարած լինելու ենթադրության առկայության մասին (տե՛ս *Deweert v. Belgium*, 27 February 1980, § 44, Series A no. 35):

Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրանքը մեկնաբանվում է այդ հասկացության լայն իմաստով: Մեղադրանքից՝ որպես պաշտոնապես, ձևականորեն ամրագրված պահանջ, Եվրոպական դատարանն առանձնացնում է մեղադրանքը՝ որպես գործառույթ, այսինքն՝ գործունեության ուղղություն, ինչը հետապնդում է կա՛մ մեղադրանքի ձևավորման համար հիմքերի ստեղծման, կա՛մ առաջադրված մեղադրանքի հետագա պաշտպանության նպատակ:

Այսպես, *Տաեդոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի* 1997 թվականի դեկտեմբերի 16-ի գործով Եվրոպական դատարանը նշել է. «Այդ հասկացությունը ունի «ինքնավար բնույթ». այն պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի իմաստով, այլ ոչ թե միայն ներպետական իրավունքում դրա ունեցած նշանակությանը համապատասխան»: Մեղադրանքը կարող է սահմանվել «որպես պետական իշխանության իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես ծանուցելը նրա կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարած լինելու ենթադրության առկայության մասին»: Բացի այդ՝ (...) «որոշում ընդունել առաջադրված քրեական մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ» բառերը, որոնք օգտագործվում են 6-րդ հոդվածում, չեն նշանակում, որ այդ հոդվածն անտարբեր է մինչդատական վարույթի նկատմամբ»: Նմանատիպ մոտեցում է արտահայտվել նաև *Սերվեսն ընդդեմ Ֆրանսիայի* 1997 հոկտեմբերի 20-ի գործով:

Ասվածը նշանակում է, որ քրեական մեղադրանքը կարող է իրականացվել նաև ողջամիտ կասկածի առկայության դեպքում: Եվ եթե անձին մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պետք է հիմնվի հավաստի գիտելիքների վրա, որոնք բավարար կերպով վկայում են այդ անձի կողմից հանցավոր արարք կատարելու մասին, ապա քրեական մեղադրանքը (մեր դեպքում՝ նաև *քրեական հետապնդումը*) բնութագրող որոշ տարրերի դեպքում նման հավաստիություն չի պահանջվում: Մասնավորապես, խուզարկության կամ ձերբակալման դեպքում նշված հիմքերը կարող են լինել ոչ թե հավաստի, այլ միայն հավանական: Օրինակ՝ Եվրոպական դատարանը *Լաբիտան ընդդեմ Իտալիայի* 2000 թվականի ապրիլի 06-ի գործով նշել է, որ ողջամիտ կասկածի առկայության համար անհրաժեշտ են այնպիսի փաստեր կամ տեղեկատվություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող էր հանցանք կատարել:

Բացի այդ՝ Եվրոպական դատարանի վճիռների վերլուծությունը վկայում է, որ մեղադրյալ կամ կասկածյալ ասելով՝ դատարանը հասկանում է ոչ միայն այն անձանց, որոնց ձևականորեն ներկայացված է մեղադրանք, կամ որոնք ձևականորեն ճանաչվում են մեղադրյալներ կամ կասկածյալներ, այլ նաև այն անձանց, որոնց նկատմամբ ձեռնարկվում են նման կասկած ենթադրող

գործողություններ, և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ կասկածյալի վիճակի վրա (օրինակ՝ կալանք, բնակելի տարածության խուզարկություն կամ անձնական խուզարկություն): Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի հաշվարկման պահը կապում է ոչ թե մեղադրանքի առաջադրման, այլ դատավարության առավել վաղ փուլի հետ: Այսպես, *Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* 1982 թ. հուլիսի 15-ի գործում նշվում է, որ քրեական գործերով «ողջամիտ ժամկետը», որի մասին խոսվում է 6-րդ հոդվածի 1-ին մասում, սկսում է հոսել այն պահից, երբ անձին «մեղադրանք է առաջադրվել». դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործը կուղարկվի դատարան՝ կալանավորման օրվանից, այն պահից, երբ շահագրգիռ անձը պաշտոնապես ծանուցվել է, որ իր դեմ հարուցվել է քրեական գործ, կամ այն պահից, երբ անձն իմացել է, որ իր դեմ սկսվել է քննություն:

Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Եվրոպական դատարանը կարևորում է քննության ընթացքում անձի ոչ թե ձևական, այլ փաստացի կարգավիճակը, ինչը նշանակում է, որ այդ անձը պետք է օժտված լինի կոնվենցիոն երաշխիքներով՝ գտնվելով քրեական մեղադրանքի ներքո:

Քրեական մեղադրանքի ուսումնասիրության շրջանակներում կարևոր նշանակություն ունի նաև այն հարցը, թե ինչպես է որոշվում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով մեղադրանքի «քրեական» լինելը: Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ մեղադրանքի «քրեական» լինելը Եվրոպական դատարանը որոշում է երեք հիմնական չափանիշներով՝

- դասակարգումը ներպետական իրավունքի համակարգում,
- իրավախախտման բնույթը,
- պատժի բնույթը և խստության աստիճանը:

Այս կապակցությամբ, *Էնգելը և այլք ընդդեմ Նիդերլանդների* գործով Եվրոպական դատարանը նշել է. «Եթե պայմանավորվող պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ իրավախախտումը քրեականի փոխարեն սահմանել որպես կարգապահական (...), 6-րդ հոդվածի դրույթների գործողությունը կդրվեր կախվածության մեջ նրանց ինքնիշխան կամքից: Լիազորությունների նման ընդլայնումը կհանգեցներ Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի արդյունքների» (*տե՛ս Engel and others v. the Netherlands, Judgement of 08 June 1976, para. 81*):

Իրավախախտման բնույթի հետ կապված՝ առանձնացվում են խախտված իրավանորմի կիրառման ոլորտը և պատժի նպատակը:

Առաջինի հետ կապված, եթե քննարկվող իրավական նորմը կիրառելի է միայն խիստ որոշակի գործառույթներ իրականացնող սահմանափակ շրջանակի անձանց, օրինակ՝ որոշակի մասնագիտության ներկայացուցիչների նկատմամբ,

ապա դա նշանակում է, որ խոսքը վերաբերում է կարգապահական, այլ ոչ թե քրեական վարույթին: Մակայն եթե իրավական նորմի գործողությունն ընդհանուր է, ապա մեծ հավանականությամբ այն կհամարվի քրեական իրավունքի համակարգի բաղադրիչ, որի վրա կտարածվի 6-րդ հոդվածի գործողությունը:

Ինչ վերաբերում է պատժի նպատակին, ապա այդ չափանիշը օգնում է տարբերակելու պատասխանատվության քրեաիրավական միջոցները վարչականից:

Պատժի բնույթը և խստության աստիճանը: Որոշ իրավախախտումներ առանձին պետությունների ներպետական օրենսդրությամբ կարող են սահմանվել որպես վարչական կամ կարգապահական: Դա կարող է հետապնդել ինչպես դատարանները բեռնաթափելու, այնպես էլ անձի շահերը պաշտպանելու նպատակ: Դրա հետ միասին, կարևոր է, որ դա տեղի չունենա առանց հիմնավորման: Մասնավորապես այն դեպքերում, երբ պատասխանատվության միջոցն ունի «պատժիչ և սարսափեցնող» բնույթ, ապա կոնկրետ վարույթը պետք է կոչվի «քրեական»: Վերոգրյալի հետ կապված՝ Եվրոպական դատարանը *Էնգելը և այլք ընդդեմ Նիդերլանդների* գործով նշել է. «Այն հասարակությունում, որտեղ գործում է օրենքի գերակայության սկզբունքը, ազատագրկման ձևով պատիժները վերաբերում են «քրեական» ոլորտին՝ բացառությամբ այն պատիժների, որոնք իրենց բնույթով, տևողությամբ կամ կատարման եղանակով չեն կարող համարվել էական վնաս պատճառող: (...) Պայմանավորվող պետությունների ավանդույթները և անհատի ֆիզիկական ազատության հանդեպ Կոնվենցիայի կողմից ցուցաբերվող հարգանքը (...) պահանջում են, որպեսզի հենց այդպես էլ լինի»(կետ 82):

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան,, Ս. Դիրանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան,, Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիաթեր Սոուբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Գ. Ղազինյան, Դ. Մելքոնյան, Քրեական հետապնդման հարուցում, «Պետություն և իրավունք», Երևան, 2007, N1 (35), էջ 23-31:
5. Մ. Խաչատրյան, «Արդարացի դատական քննության իրավունք», Երևան, 2004 թ.:
6. Эндрю Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.

7. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.
8. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенции о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, М., 2001.

ԴԱՍ 2. «ԴԱՏԱՐԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԱՆՕՏԱՐԵԼԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՄԻԵԿ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ

Թեմա 1. Քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի «դատարանի» իրավունքը և դատարանի ատրիբուտները

Քրեական գործերով դատարան դիմելու իրավունքը ենթադրում է, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի, որ իրեն առաջադրված մեղադրանքը քննարկվի և լուծվի 6-րդ հոդվածի պահանջները բավարարող դատարանի կողմից: Սրանից չի բխում, որ «մեղադրվող» անձն ունի քրեական հետապնդումը շարունակելու և դատարանի կողմից քննելու պահանջի իրավունք: Նա միայն իրավունք ունի պահանջելու, որ իրեն առաջադրված մեղադրանքը որոշվի դատարանի կողմից (տե՛ս Report of 18 October 1985, Lutz, para. 48): Ամեն դեպքում, մեղադրյալը կզրկվի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքից այն դեպքում, եթե մեղադրանքը դադարեցվել է մեղադրյալի և քրեական հետապնդման մարմինների միջև կնքված ֆինանսական գործարքի արդյունքում՝ առանց մեղադրյալին ընտրության իրավունք տրամադրելու (տե՛ս Deweer v. Belgium, 27 February 1980, §§ 49-54, Series A no. 35): Բացի այդ, եթե մեղադրանքը հանվել է այնպիսի հիմքով, որը մեղադրյալի անմեղությունը կասկածի տակ է դնում, 6-րդ հոդվածի խախտում կարձանագրվի 6-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆով երաշխավորված անմեղության կանխավարկածի լույսի ներքո:

Վերադաս դատարան բողոքարկելու իրավունքը նախատեսված չէ և չի բխում 6-րդ հոդվածի բովանդակությունից (տե՛ս Belgian linguistic case (merits), 23 July, 1968, § 9, Series A no. 6, pp. 9): Ամեն դեպքում, եթե վերաքննության հնարավորություն

նախատեսված է, և նախաձեռնվել է վերաքննիչ վարույթ, և վերաքննիչ ատյանը կոչված է որոշում կայացնելու առաջադրված մեղադրանքի վերաբերյալ, 6-րդ հոդվածը գործում է (տե՛ս u Delcourt v. Belgium, judgment of 17 January 1970, Series A no. 11, p. 19, § 25): Սա միևնույն ժամանակ նշանակում է, որ եթե ներպետական օրենսդրությունը նախատեսում է վերաքննության հնարավորություն, ապա դրա մատչելիությունը չպետք է սահմանափակվի անհամաչափ ձևով կամ վտանգի դրա էությունը (տե՛ս u Poitrimol v. France, 23 November 1993, §§ 35-38, Series A no. 277-A): Եթե այս սահմանափակումն ունի դիսկրիմինացիոն բնույթ, սա, ի լրումն 14-րդ հոդվածի, առաջացնում է նաև 6-րդ հոդվածի խախտում (տե՛ս u Hoffmann v. Austria, 23 June 1993, § 66, Series A no. 255-C): Սակայն այս կանոնը չի սահմանափակում պետություններին՝ հատուկ պայմաններ սահմանելու վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան դիմելու համար: 6-րդ հոդվածի խախտումը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ անձի դատարան դիմելու հնարավորությունը սահմանափակվել է հենց վերջինիս դատավարական սխալի արդյունքում: Ամեն դեպքում, եթե վերանայման հնարավորությունը սահմանափակվել է դատական սխալի արդյունքում, առկա է 6-րդ հոդվածի խախտում (տե՛ս u Report of the Commission of 21 October 1998, Bogdanska Dimova, §§ 52-59): Ամեն դեպքում վերաքննիչ դատարանի կողմից բողոքի ընդունումն այն հիմքով, որ դիմումատուն կորցրել է իրավական հետաքրքրվածությունը, ըստ էության, չի սահմանափակում դատարանի իրավունքը (տե՛ս u Venema and Others, judgment of 29 January 2002, § 3):

Դատարանը նախատեսում է 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի իրավունքի սահմանափակման հնարավորություն (տե՛ս u Neumeister, judgment of 7 May 1974): Սակայն, ամեն դեպքում, այդ սահմանափակումը չի կարող խաթարել այս իրավունքի էությունը (տե՛ս u Asingdane, judgment of 28 May 1985, § 57), այն պետք է հետապնդի օրինական նպատակ և լինի համաչափ (տե՛ս u Asingdane, judgment of 28 May 1985, § 57):

Թեմա 2. «Օրենքի հիման վրա ստեղծված դատարան».

լեզվախիմություն, իրավասություն, անաչառություն, դատարանի գործողությունները և որոշումները, դատավորի դատական և արտադատական վարքագիծը

1. Օրենքի վրա ստեղծված դատարան

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորված Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն, որպեսզի արդարադատություն իրականացնող մարմինը Կոնվենցիայի իմաստով համարվի օրենքի վրա հիմնված անկախ և անաչառ դատարան, պետք է համապատասխանի Դատարանի առաջ քաշած օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներին: Օբյեկտիվ չափանիշները հիմնականում վերաբերում են պետության կառավարման համակարգում իշխանության ճյուղերի տարանջատմանը: Մասնավորապես դատական համակարգի անկախությունն ապահովելու տեսանկյունից առավել քան կարևորվում է գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են դատավորի վարձատրությունը, այլ մարմինների՝ դատարանների համար պարտադիր կատարման ենթակա կանոնների սահմանման հնարավորությունը, դատավորին այլ պաշտոնի տեղափոխելու վտանգի առկայությունը, այն հանգամանքներն են, որոնք վտանգում են դատավորի անկախությունը: *Բեսումարտինի* գործով, օրինակ, իշխանությունների տարանջատման հարցն առաջ եկավ, երբ Պետական խորհուրդը պայմանագրի մեկնաբանման հարցում ուղղեց արտաքին գործերի նախարարությանը և արդյունքում, հիմնվելով նախարարության տված եզրակացության վրա, մերժեց հայցը: Դատարանը որոշեց, որ դիմումատուները զրկվել են արդար դատաքննության իրավունքից հետևյալ հիմնավորմամբ. «Միայն այն հաստատությունը, որն ունի ամբողջական իրավագործություն և բավարարում է մի շարք այնպիսի պահանջների, ինչպիսիք են անկախությունը գործադիրից և դատավարության կողմերից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով կհամարվի Դատարան (տե՛ս *Beaumartin v. France*, 24 November 1994, § 38, Series A no. 296-B): *Վան դե Հուրկի* գործով վճռում դիմումատուն բողոքում էր, որ գործադիրի իրավագործությունը՝ որոշելու դատարանի կայացրած ակտն ի կատար ածելու հարցը, խախտում է 6 (1)-րդ հոդվածը: Դատարանն այս առումով նշել է. «Պարտադիր որոշում կայացնելու իրավունքը, որը չի կարող փոփոխվել դատական իշխանության կողմից՝ ի վնաս կողմի, բնորոշ է «դատարան» հասկացությանը...: Այս իրավունքը կարող է դիտվել նաև որպես 6-րդ հոդվածով երաշխավորված «անկախության» բաղադրիչ» (տե՛ս *Van de Hurk v. the Netherlands* (19 April 1994, Series A no. 288, p. 16, § 45):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի պահանջում դատական ատյանների (համակարգի) որոշակի կառուցվածք: 6-րդ հոդվածը չի պահանջում նաև ունենալ երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարություն: Սակայն, եթե պետությունը նախատեսում է երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարություն, ապա անկախության պահանջը տարածվում է նաև նրանց նկատմամբ: Այն պրակտիկան, երբ նշանակվում են *ad hoc* դատավորներ, կամ դատավորը նշանակվում է որոշակի սահմանափակ ժամանակով, չի վտանգում

դատարանի անկախությունը (տե՛ս Ringeisen v. Austria, 16 July 1971, Series A no. 13, § 95):

Ակարդին և այլք ընդդեմ Իտալիայի գործով ազգային դատարանը որոշում է կայացրել անչափահասներին հարցաքննելու նպատակով վարույթ ներգրավել հոգեբանի, և վերջիններիս հարցաքննության ժամանակ լքել է դահլիճը: Այս առումով դատարանը գտել է. «Այն փաստը, որ քննչական գործողությունների նկատմամբ վերահսկողության իր իրավունքն իրականացնելով՝ նա որոշում է կայացրել երեխաներին որոշակի հարցեր տալու նպատակով վարույթ ներգրավել հոգեբանի, որևէ կերպ չի փոխարինում այդ եզրակացությանը: Ինչ վերաբերում է այն փաստին, որ գործը քննող դատավորը լքել է սենյակը Y-ի հարցաքննության ընթացքում, ապա 1998 թ. հոկտեմբերի 16-ի դատական նիստի արձանագրությունը փաստում է, որ այդ տեղաշարժը կատարվել է երեխային հանգստացնելու համար, և, ամեն դեպքում, դատավորը շարունակել է հետևել հարցաքննության ընթացքին երկկողմանի հայելու միջոցով:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանը նշել է, որ չի կարող եզրակացրել, որ *Տլորենցիայի* գործը քննող դատավորը չի հանդիսացել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքով սահմանված կարգով ստեղծված դատարան» (տե՛ս Accardi and others v. Italy (dec.), no. 30598/02, 20 January 2005).

Լավենցն ընդդեմ Լատվիայի գործով վճռում դատարանը նշել է. «... դատարանը գտնում է, որ համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի դրույթների, դատավորը չի կարող մասնակցել այն գործի քննությանը... երբ իր մասնակցությամբ կայացված վճիռը կամ որոշումը ... բեկանվել է: Դատարանը գտնում է, որ այս դրույթը շարադրված է շատ պարզ, որը թույլ է տալիս դատարանի անդամներին համոզիչ կերպով նախատեսել իրենց պարտականությունների շրջանակները և դրանից բխող իրավական հետևանքները: Դրանից հետևում է, որ 1999 թ. դեկտեմբերի 14-ից սկսած՝ երկու դատավորների կողմից կայացված որոշման բեկանումից հետո այս դատավորները չէին կարող նույն կազմով մասնակցել նույն գործի քննությանը: Այսպիսով՝ շրջանային դատարանի կոլեգիան կազմված չէր օրենքին համապատասխան» (տե՛ս Lavents v. Latvia, no. 58442/00, § 114, 28 November 2002):

«Օրենքի վրա ստեղծված դատարանի» կանոնին Եվրոպական դատարանն անդրադարձել է նաև *Սոկուրենկոյի* գործով վճռում: Թեև այս գործը քրեական դատավարությանը չի առնչվում, այնուամենայնիվ դատարանի հետևությունները հավասարապես կիրառելի կլինեն նաև քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս: Այսպես, դիմումատուները բնակվում էին Չերկասի մարզի Սամգորոդոկ գյուղում: 2002 թ. փետրվարին «Ագրո-Ռոս» ՍՊԸ-ն քաղաքացիական գործ հարուցեց Սմիլյանսկի շրջանային խորհրդի և դիմումատուներից

յուրաքանչյուրի դեմ՝ վիճարկելով խորհրդի՝ դիմումատուներին հողատարածք տրամադրելու մասին որոշումը: 2003 թ. օգոստոսի 12-ին Չեքիասկի շրջանային տնտեսական դատարանը 2 վճիռ կայացրեց ընդդեմ դիմումատուների: 2003 թ. նոյեմբերի 18-ին Կիևի վերաքննիչ տնտեսական դատարանը մերժեց դիմումատուների բողոքները և ուժի մեջ թողեց առաջին աստիճանի դատարանի որոշումը: 2004 թ. մարտի 16-ին Ուկրաինայի բարձրագույն տնտեսական դատարանը դիմումատուների բողոքների հիման վրա բեկանեց ստորադաս դատարանների վճիռները և գործն ուղարկեց նոր քննության: 2004 թ. մայիսի 25-ին Ուկրաինայի գերագույն դատարանը «Ագրո-Ռոս» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա բեկանեց Ուկրաինայի բարձրագույն տնտեսական դատարանի որոշումն այն հիմքով, որ նրա հետևությունները չեն համապատասխանում հետազոտված փաստական հանգամանքներին և օրինական ուժ տվեց Կիևի վերաքննիչ տնտեսական դատարանի որոշմանը: Տվյալ ժամանակ գործող Առևտրային դատավարության օրենսգրքի 111-18 հոդվածի համաձայն՝ Ուկրաինայի գերագույն դատարանը, քննելով վճռաբեկ բողոքը կամ գլխավոր դատախազի՝ Ուկրաինայի բարձրագույն տնտեսական դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը, իրավասու է.

- 1) մերժել բողոքը և վճիռը թողնել անփոփոխ,
- 2) բեկանել վճիռը և գործն ուղարկել առաջին աստիճանի դատարան՝ հետագա քննության,
- 3) բեկանել վճիռը և անվավեր ճանաչել գործով դատավարությունը:

Դիմումատուները բողոքում էին, որ Գերագույն դատարանը իրենց գործով չի կարող համարվել «օրենքի հիման վրա ստեղծված դատարան», քանի որ իրենց գործի որոշումները չեն բխում օրենքից և խախտում են 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը:

Այս գործով Դատարանը, զարգացնելով *Zand v. Austria*, գանգատ թիվ 7360/76 և *Coëme and Others v. Belgium*, գանգատ թիվ 32492/96 վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ձևավորել է հետևյալ դիրքորոշումը.

«Դատարանը կրկնում է, որ որոշ իրավիճակներում ընդունելի է համարում, որ բարձրագույն դատական աստիճանը, որն իրավասու է օրենքի մեկնաբանություն տալ, կարող է այնպիսի որոշում կայացնել, որն ուղղակիորեն օրենքով նախատեսված չէ: Օրենքի նման կիրառությունն ամեն դեպքում կարող է ունենալ բացառիկ դրսևորումներ, և դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հստակ և համոզիչ պատճառներ ներկայացնի իր սովորական իրավասությունից թույլ տված շեղումների համար (տե՛ս *Julio Bou Gibert and El Hogar Y La Moda J. A. v. Spain* (dec.), no. 14929/02, 13 May 2003): Այնուամենայնիվ, սվյալ գործով Գերագույն դատարանը չի ներկայացրել որևէ պատճառ այնպիսի որոշում կայացնելու համար, որը գերազանցում է իր իրավասությունը՝ կանխամտածված խախտելով

Առևտրային դատավարության օրենսգիրքը և կայացնելով այդպիսի որոշում: Դատարանի կարծիքով, Գերագույն դատարանը, սահմանազանցելով իր իրավասությունը, որը հստակ նախատեսված է առևտրային դատավարության օրենսգրքով, վիճարկվող դատավարության առումով 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի իմաստով չի կարող համարվել «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» (տե՛ս Sokurenko and Strygun v Ukraine, application nom. 29458/04 և 29465/04, 20 July 2006):

2. Անկախ դատարան

Դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ պարզելու համար, թե դատարանը կարող է 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով համարվել «անկախ», պետք է *inter alia* քննարկվեն դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումներից պաշտպանվածությունը և այն հարցը, թե արդյոք այն ունի անկախության դրսևորում (տե՛ս Salov v. Ukraine, no. 65518/01, § 80, ECHR 2005-VIII (extracts)):

3. Անաչառ դատարան

Պերոտե Պելոն ընդդեմ Իսպանիայի գործով Դատարանը, տվյալ գործի հանգամանքները հաշվի առնելով գտել է, որ ազգային դատարանի անաչառությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս այնքանով, որ դրա նախագահը և զեկուցող դատավորը միջամտել են քննչական գործողություններին, մասնավորապես մերժվել է դիմողի՝ մեղադրական եզրակացությանը վերաբերող և նախնական կալանքի ժամկետը երկարացնող որոշումների դեմ բողոքը (տե՛ս Perote Pellon v. Spain, no. 45238/99, § 51, 25 July 2002):

Պիերսակի գործով քննարկման առարկա էր միևնույն վարույթին նույն անձի մասնակցության հարցը՝ սկզբում որպես դատախազ, այնուհետև՝ դատարանի նախագահ: Դատարանն այս գործով «անաչառությունը» գնահատեց որպես «կանխակալության» կամ «աչառության» բացակայություն: Բացի այդ՝ նշեց, որ դատարանը պետք է առաջարկի այնպիսի երաշխիքներ, որոնք բավարար կլինեն բացառելու որևէ հիմնավոր կասկած (տե՛ս Piersack v. Belgium, 1 October 1982, § 30 (d), Series A no. 53):

Դատարանը 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել նաև այն դեպքերում, երբ դատավորը նույն գործով մասնակցել է որպես քննիչ-դատավոր (տե՛ս De Cubber v. Belgium, 26 October 1984, Series A no. 86), երբ վերաքննիչ դատարանի դատավորը նախկինում ստորադաս դատարանի նախագահ է եղել (տե՛ս Ben Yaacoub judgment

of 27 November 1987, Series A, no 154), երբ նախագահող դատավորը մեղադրյալի նախնական կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ մի քանի որոշում է կայացրել (տե՛ս Hauschildt v. Denmark, 24 May 1989, § 50, Series A no. 154):

Սրան հակառակ՝ Դատարանը Հոդված 6-ի խախտում չի արձանագրել այն դեպքում, երբ անչափահասի գործով դատավորը նախկինում տվել է մեղադրյալին նախնական կալանքի ենթարկելու թույլտվություն (տե՛ս Nortier v. the Netherlands, judgment of 24 August 1993, Series A no. 267), կամ երբ նախագահող դատավորը իր որոշմամբ առաջադրված մեղադրանքը ճանաչել է հիմնավորված (տե՛ս Sairava de Crvalho, 22 April 1994, Series A, no. 286-B):

Մասնավորապես *Նորտիերի* գործով Դատարանը նշել է, որ ընդամենը այն հանգամանքը, որ անչափահասների գործերով դատավորի կողմից կայացվել են նաև մինչդատական որոշումներ, որոնք ներառում են կալանավորման հետ կապված որոշումներ, ինքնին չեն կարող դիտվել որպես նրա անկողմնակալության հետ կապված անհանգստության հիմնավորում: Բացի դիմողի կալանավորման հետ կապված որոշումներից՝ անչափահասների գործերով դատավորը որևէ այլ մինչդատական որոշում չի կայացրել՝ բացառությամբ դիմողին հոգեբուժական փորձաքննության ենթարկելու վերաբերյալ դատախազի միջնորդության բավարարման, որը չի վիճարկվել վերջինիս կողմից: Նա այլ կերպ չի օգտագործել իր՝ որպես գործը քննող դատավորի իրավասությունները:

Ինչ վերաբերում է դիմողի կալանավորման մասին որոշումներին, դրանք կարող են հիմնավորել որոշակի հանգամանքներում դատավորի անկողմնակալության հետ կապված անհանգստությունները... Այս գործում Դատարանը նման հանգամանքներ չի հայտնաբերել և նշել է, որ այն հարցերը, որոնց անչափահասների գործերով դատավորը պետք է պատասխաներ այս որոշումների կայացման ժամանակ, չեն համընկնում նրա վերջնական որոշման համար որոշիչ համարվող հարցերի հետ:

Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի գործով Դատարանը գնահատելու համար դատարանի անաչառությունը անդրադարձել է նրանց վարքագծի մի շարք ասպեկտների, որոնք ունակ են սուբյեկտիվ գնահատականի հարց բարձրացնելու:

Դատարանը ուշադրության է արժանացրել այն հանգամանքը, որ դատավորները դիմողի դատապարտման վերաբերյալ իրենց որոշումներում ընդունել են, որ իրենք «որպես մարդ» «խորապես ազդվել են» դիմողից...: Դատարանը եզրակացրել է, որ այս հայտարարությունն ինքնին ցույց է տալիս, որ դատավորներն անձնապես վիրավորվել են դիմողի բառերից և իրենց մասով ցուցաբերել են անձնական շահագրգռվածություն:

Երկրորդ՝ դատավորների կողմից որոշման մեջ արված հուզական ձևակերպումները վրդովմունքի և հուզմունքի զգացում են առաջացնում, որը

հակասում է դատական որոշումներից ակնկալվող անկողմնակալ մոտեցմանը... (տե՛ս u Kyprianou v. Cyprus [GC], no. 73797/01, § 118, ECHR 2005-XIII):

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ռ. Մելիքյան, Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, «Պետություն և իրավունք» թիվ 1-2 (39-40), 2013, էջ 3-17:
3. Գ. Ղազինյան, Ռ. Մելիքյան, Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, «Պետություն և իրավունք» թիվ 1-2 (39-40), 2008, էջ 3-18:
4. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
5. Էլիսբեթ Մոուրբեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
6. Գ. Ղազինյան, Դ. Մելքոնյան, Քրեական հետապնդման հարուցում, «Պետություն և իրավունք», Երևան, 2007, N1 (35), էջ 23-31:
7. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:
8. Эндрю Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
9. Алексеева Л. Б. Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.
10. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенции о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, М, 2001.

ԴԱՍ 3. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ԱՆՁԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Թեմա 1. Ազատության կանխավարկածը և քրեական դատավարությունում անձին ազատությունից զրկելու եղանակներն ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դատարարակցական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմինն ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին, թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

5-րդ հոդվածի տեքստից բխում է, որ այն պաշտպանում է երկու ինքնուրույն իրավունք՝ ազատության իրավունք և անձնական անձեռնմխելիության իրավունք (5-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասություն), մինչդեռ 5-րդ հոդվածով սահմանված երաշխիքները վերաբերում են դրանցից միայն առաջինին՝ ազատության իրավունքին (5-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասություն): Թեև այդ երկու իրավունքների նմանություններին ընդունված մոտեցումն այն է, որ դրանք տարբեր իրավունքներ են, այնուհանդերձ, ՄԻԵԴ նախադեպային իրավունքում անձնական անձեռնմխելիության իրավունքին ինքնուրույն անդրադարձ չի կատարվում, և այն ինքնուրույնաբար չի քննարկվում:

Կոնվենցիան, ըստ էության, սահմանում է երկու ընդհանուր երաշխիք՝

ա) անձը ազատությունից կարող է զրկվել միայն օրենքով սահմանված կարգով,

բ) անձը ազատությունից կարող է զրկվել բացառապես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում:

Նշված երկու երաշխիքները փաստացի ձևավորում են «ազատության կանխավարկածը», որը կարող է հաղթահարվել միայն նշված երկու պայմանների

միաժամանակյա առկայության դեպքում՝ օրենքով սահմանված ընթացակարգ և Կոնվենցիայով սահմանված դեպք:

Այսպիսով՝ Կոնվենցիան սահմանում է ազատության կանխավարկածի բավականին խիստ մոդել՝ անդամ պետություններին զրկելով ներպետական օրենսդրությամբ ազատությունից զրկելու որևէ նոր իրավաչափ դեպք սահմանելու հնարավորությունից:

Որպես լրացուցիչ ընդհանուր երաշխիք՝ Եվրոպական դատարանը սահմանել է, որ անձին ազատությունից զրկող ցանկացած միջոց պետք է համատեղելի լինի 5-րդ հոդվածի նպատակի հետ, այն է՝ անհատին պաշտպանելու կամայականությունից (տե՛ս Bozano v. France, 18/12/1986 թ. վճիռ, գանգատ թիվ 9990/82, կետ 54):

ՄԻԵԴ պրակտիկայում կարևոր գործնական նշանակություն է ստացել ազատությունից **զրկելը** ազատության առավել նվազ ծավալի սահմանափակման դեպքերից տարանջատելու հարցը: Այս խնդրի գործնական նշանակությունն այն է, որ 5-րդ հոդվածի երաշխիքային նշանակությունը, ըստ էության, վերաբերում է բացառապես ազատությունից զրկելու դեպքերին: Այլ կերպ, եթե չի հաստատվում ազատությունից զրկելու փաստը, ապա 5-րդ հոդվածը գործնականում կորցնում է կիրառելիությունը: Ազատությունից զրկում չհամարվող սահմանափակումները պաշտպանվում են Կոնվենցիային կից 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի ներքո:

Եվրոպական դատարանը չի սահմանափակվում ներպետական իրավական համակարգի շրջանակներում իրավիճակին տրված գնահատականով և իրականացնում է ինքնավար գնահատում (տե՛ս H. L. v. The United Kingdom, 05/10/2004 թ. վճիռ, գանգատ թիվ 45508/99, կետ 90):

Իրավիճակը «ազատությունից զրկում» գնահատելու համար Եվրոպական դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ՝ ազատությունից ենթադրաբար զրկվածի մոտ համապատասխան վայրը լքելու հնարավորության առկայությունը, անձի տեղաշարժի նկատմամբ վերահսկողության աստիճանը, մեկուսացման աստիճանը և սոցիալական հաղորդակցության հնարավորությունը (տե՛ս Guzzardi v. Italy, 06/11/1980 թ. վճիռ, գանգատ թիվ 7367/76, կետ 95, H. M. v. Switzerland, 26/02/2002 թ. վճիռ, գանգատ թիվ 39187/98, կետ 45, Storck v. Germany, 16/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 61603/00, կետ 73):

Ընդ որում՝ քրեական դատավարության ոլորտին վերաբերող գործերով ազատությունից ենթադրաբար զրկելու հանգամանքը գնահատելիս Եվրոպական դատարանը էական գործոն չի համարում անազատության մեջ պահելու հարաբերականորեն կարճ տևողությունը (տե՛ս Rantsev v. Cyprus and Russia, 07/01/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 25965/04, կետ 317, Iskandarov v. Russia, 23/09/2010, գանգատ թիվ 17185/05, կետ 140): Օրինակ՝ *Ռանցևի* գործով

դիմումատուին պահել էին մոտ երկու ժամ, իսկ *Իսկանդարովի* գործում՝ իր կամքին հակառակ տեղափոխել էին օդանավակայան և ուղեկցել Դուշանբե՝ հանձնելու Տաջիկստանի իրավապահներին:

Անգամ հանրային վայրում անձին ոստիկանության կողմից կանգնեցնելը և/կամ ոստիկանության բաժին տանելը կհամարվի «ազատությունից զրկում»՝ անկախ տևողությունից, եթե առկա է հարկադրանքի տարր (տե՛ս Gillan and Quinton v. the United Kingdom, 12/01/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 4158/05, կետ 57; Shimovolos v. Russia, 21/06/2011 թ. վճիռ, գանգատ թիվ [30194/09](#), կետ 50; and Brega and Others v. Moldova, 24/01/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 61485/08, կետ 43): Հարկադրանքի տարրի առկայության մասին կարող է վկայել ոստիկանության կարգադրությունը չկատարելու դեպքում ձերբակալվելու կամ պատասխանատվության ենթարկվելու մասին նրան հայտնելու փաստը: Օրինակ՝ վերը նշված *Գիլանի* գործով դիմումատուն կանգնեցվել և ենթարկվել է խուզարկության՝ տեղաշարժի ազատությունը կորցնելով շուրջ կես ժամ, իսկ *Շիմովոլոսի* գործում՝ տեղափոխվել է բաժին՝ ազատությունը կորցնելով շուրջ 45 րոպե:

Ազատության կանխավարկածի *առաջին* երաշխիքը միայն օրենքով սահմանված կարգով ազատությունից զրկելու պահանջն է: 5-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում «օրենքով սահմանված կարգի» ներքո հասկացվում է ներպետական իրավունքի ոչ միայն ընթացակարգային, այլ նաև նյութաիրավական վերաբերելի կանոնները (տե՛ս Del Río Prada v. Spain, 21/10/2013 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 42750/09, կետ 125), իսկ վերաբերելի դեպքերում՝ նաև միջազգային-իրավական պահանջները (տե՛ս Medvedyev and Others v. France, 29/03/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 3394/03, կետ 79, Toniolo v. San Marino and Italy, 26/06/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 44853/10, կետ 46), ինչպես նաև «օրենքի որակի» ընդհանուր կոնվենցիոն երկտարր ստանդարտը՝ օրենքի հասանելիություն և իրավական որոշակիություն (կանխատեսելիություն) (տե՛ս Del Río Prada v. Spain, նույն տեղում, Medvedyev and Others, կետ 80):

Ազատության կանխավարկածի երկրորդ երաշխիքը անձին ազատությունից զրկելու դեպքերի սպառիչ ցանկն է: Այդ դեպքերը առավելապես վերաբերում են լայն առումով քրեական իրավունքի ոլորտին և հատկապես քրեական դատավարությանը: Ստորև կներկայացվի դրանցից յուրաքանչյուրի քրեադատավարական բաղադրիչը.

Ա) Անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո

Ազատությունից զրկելու այս դեպքը վերաբերում է ինչպես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռներին, այնպես էլ չմտածներին: Այլ կերպ՝ առաջին աստիճանի դատարանի՝ անձին ազատությունից զրկել ենթադրող

պատժատեսակի կիրառմամբ դատավճռի հրապարակումից անմիջապես հետո դատապարտված մեղադրյալին ազատությունից զրկելը տեղավորվում է հենց 5-րդ հոդվածի 1-ին կետի «Ա» ենթակետի ներքո (տե՛ս u Wemhoff v. Germany, 27/06/1968 թ. վճիռ, գանգատ թիվ 2122/64, «Իրավունքի հարցեր» հատվածի կետ 9): Ընդ որում՝ Եվրոպական դատարանը առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճռի հրապարակումից հետո անձին ազատությունից զրկելը անիրավաչափ չի ճանաչել այն դեպքում, երբ գործի վերանայման արդյունքում բարձր ատյանի դատարանը արդարացրել է տվյալ անձին (տե՛ս u Benham v. the United Kingdom, 10/06/1996 թ. վճիռ, գանգատ թիվ 19380/92, կետ 42):

Բ) Անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով

Այս դեպքի առաջին ենթադեպքը՝ դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար ազատությունից զրկելը, ենթադրում է, որ անձը հնարավորություն ունեցել է կատարելու դատարանի պահանջը, սակայն չի կատարել. եթե անձը չի տեղեկացվել իր վերաբերյալ դատական կարգադրության մասին, ազատությունից զրկելու տվյալ դեպքը առկա չէ (տե՛ս u Beiere v. Latvia, կետ 49-50): Քրեական դատավարության ոլորտում այս դեպքի կիրառման դրսևորումներ են արյան նմուշ հանձնելու դատական որոշումը կատարելուց հրաժարվելը (տե՛ս u X v. Austria, Հանձնաժողովի որոշում), գրավի պայմանները խախտելը (տե՛ս u Gatt v. Malta):

Այս դեպքի երկրորդ ենթադեպքը՝ օրենքով նախատեսված պարտավորության կատարումն ապահովելու համար ազատությունից զրկելը, ենթադրում է, որ առկա է չկատարված պարտականություն, և դրա կատարումից հետո ազատությունից զրկելու այս դեպքը կորցնում է իր իրավական նշանակությունը (տե՛ս u Vasileva v. Denmark, կետ 36): Ընդ որում՝ համապատասխան պարտավորությունը պետք է հստակ և կոնկրետ բովանդակություն ունենա (տե՛ս u Ciulla v. Italy, կետ 36): Բացի այդ՝ տվյալ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով անձին ազատությունից զրկելը թույլատրելի է, միայն եթե բացակայում է տվյալ պարտավորության կատարումն ապահովող ավելի մեղմ միջոց (տե՛ս u Khodorkovskiy v. Russia, կետ 136): Քրեական դատավարության ոլորտում այս դեպքի կիրառման դրսևորումներից են հոգեբուժական փորձաքննության ենթարկվելու պարտավորությունը (տե՛ս u Nowicka v. Poland), հարցաքննության ներկայանալու պարտավորությունը (տե՛ս u Iliya Stefanov v. Bulgaria; Osypenko v. Ukraine; and Khodorkovskiy v. Russia):

Գ) Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա

հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար

Այս դեպքը միակն է, որ ունի բացառապես քրեադատավարական բնույթ: Այն կազմող երեք այլընտրանքային տարրերին անդրադարձ կկատարվի հաջորդ թեմայի շրջանակներում:

Թեմա 2. «Հիմնավոր կասկածի» հասկացությունը և անձին ազատությունից զրկելու պայմանները

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության մեջ «հիմնավոր կասկածի» առկայությունը պարտադիր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 «գ» ենթակետի ներքո անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպքի պարագայում: Այլ կերպ՝ հանցանք կատարած լինելու հիմնավորմամբ անձին ազատությունից զրկելու ցանկացած եղանակ (բերման ենթարկել, ձերբակալում, կալանավորում) կարող է իրավաչափ համարվել, եթե առնվազն առկա է եղել հանցանք կատարած լինելու «հիմնավոր կասկածը»:

Հանցանք կատարելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի *փաստերի և տեղեկությունների* առկայություն, որոնք *օբյեկտիվ դիտորդի* համար բավարար կլինեն հաստատելու տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու *հնարավորությունը* (տե՛ս Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, 30/08/1990 թ. վճիռ, գանգատ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32, Ilgar Mammadov v. Azerbaijan, 22/05/2014 թ. գանգատ թիվ 15172/13, կետ 88): Եվրոպական դատարանը հատուկ ընդգծում է, որ «հիմնավոր կասկածը» ավելի բարձր չափանիշ է ենթադրում, քան սուկ «բարեխղճությունը» (տե՛ս Ilgar Mammadov v. Azerbaijan, նույն տեղում):

Կարևոր է ընդգծել, որ «հիմնավոր կասկածը» պետք է վերաբերի հանցանքին (ինքնավար իմաստով): Ընդ որում՝ պետք է հստակ լինի, որ կասկածյալին վերագրվող արարքները հանցավոր են (կարող են որակվել որպես հանցագործություն): *Խաչատրյանը և այլքք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի ինքնին խախտում է ճանաչել այն, որ դիմումատուները ազատությունից զրկվել էին հանցանք չհանդիսացող արարքների համար կասկածի պայմաններում: Այլ կերպ՝ դիմումատուները խուսափել են այլընտրանքային ծառայությունից, մինչդեռ նրանց արարքները որակվել են որպես դասալքություն: Ընդ որում՝ արարքի հանցավոր չլինելու մասին Եվրոպական դատարանը հետևություն է արել՝ հիմք ընդունելով հետազայում հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու, ինչպես նաև այլընտրանքային ծառայությունից խուսափելը

հատուկ քրեականացնելու փաստերը (տե՛ս Khachtryan and Others v. Armenia, 27/11/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 23978/06, կետ 32, Ilgar Mammadov v. Azerbaijan, 22/05/2014 թ. գանգատ թիվ 15172/13, կետ 137-139):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից չի բխում, որ սկզբնական կալանքը հիմնավորելու համար ինքնին պահանջվում է ավելին, քան հանցագործություն կատարելու «հիմնավոր կասկածի» հաստատումը: Սակայն նույնը հնարավոր չէ պնդել կալանքի ժամկետի երկարացման մասին: Այն կարող է իրավաչափ համարվել, միայն երբ առկա են շարունակական կալանքն արդարացնող «համարժեք և բավարար» հիմնավորումներ (տե՛ս Khodorkovskiy v. Russia, 31/05/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 5829/04, կետ 182, Piruzyan v. Armenia, 26/06/2012 թ., գանգատ թիվ 33376/07, կետ 91):

Հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վահրամ Ռուդիկի Գևորգյանի գործով 2011 թ. փետրվարի 24-ին կայացված թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշմամբ (այսուհետ՝ Վ. Գևորգյանի գործով որոշում): Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը քննարկել է այն հարցը, թե արդյոք հիմնավորված և պատճառաբանված է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի այն հետևությունը, որ Վ. Գևորգյանն առնչություն ունի իրեն մեղսագրված արարքին: Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանն իր որոշման պատճառաբանական մասում հիմնավոր կասկածի հիմնավորվածության հարցին որևէ անդրադարձ չի կատարել: Վերաքննիչ դատարանը Վ. Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշման մեջ նշել է, որ ըստ ներկայացված նյութերի՝ առկա է հիմնավոր կասկած, որ Վ. Գևորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը: Վերաքննիչ դատարանը, սակայն, բավարարվելով հանցանքի կատարման մեջ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ օրենսդրական պայմանի պարզ շարադրանքով, իր որոշման մեջ չի նշել գործով ձեռք բերված որևէ փաստական տվյալ, որն ուղղակիորեն կմատնանշեր Վ. Գևորգյանի առնչությունը կատարված իրավախախտմանը, ինչպես նաև չի պատճառաբանել հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ իր հետևությունը: Վերաքննիչ դատարանը չի մատնանշել նաև բավարար հիմքեր (փաստեր)՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն հանցանքին, որի կատարման մեջ Վ. Գևորգյանը կասկածվում է: Այսպիսով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը, հանգել է հետևության, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի՝ ա) անձի առնչությունն իրեն մեղսագրվող

հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը: Ջարգացնելով այս իրավական դիրքորոշումը՝ Վ. Գևորգյանի գործով որոշման 19-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է. «(...) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է»: ՀՀ վճռաբեկ դատարանն այնուհետև ամրագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝ ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը, բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը, գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած...: Գնահատելով քննարկվող գործի փաստական հանգամանքները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է, որ հիմնավորված և պատճառաբանված չէ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի այն հետևությունը, որ Վ. Գևորգյանն առնչություն ունի իրեն մեղսագրված արարքին: Վերոշարադրյալ վերլուծությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է հիմնավոր կասկածի՝ որպես կալանավորման անհրաժեշտ և պարտադիր պայմանի առկայության և պատշաճ պատճառաբանվածության կարևորությունն ու անհրաժեշտությունը: Հիմնավոր կասկածի ապացուցման չափանիշներին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Հարություն Լարվենտի Խաչատրյանի գործով 2011 թ. դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ՏԴ2/0009/06/11 որոշման մեջ (այսուհետ՝ Շ. Խաչատրյանի գործով որոշում): Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը քննության է առել այն հարցը, թե Հարություն Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս դատարանն իրավասո՞ւ է արդյոք անդրադառնալ անձին առաջադրված մեղադրանքի էությանը և հիմնավորվածությանը: Այլ խոսքերով՝ հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասո՞ւ է արդյոք

դատողություններ կատարել անձի մեղավորության վերաբերյալ: Բարձրացված հարցն ուղղակիորեն առնչվում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության նպատակներին: Այսպես՝ դատական վերահսկողության նպատակներն են պաշտպանել քրեական դատավարության մասնակիցների իրավունքները, բացառել նրանց իրավունքների ապօրինի կամ անհիմն սահմանափակումը քրեական հետապնդման մարմինների կողմից և վերականգնել խախտված իրավունքները: Ինչ վերաբերում է կալանավորման թույլտվությունը միայն հիմնավոր կասկածի առկայության պարագայում տալու օրենսդրական պահանջին, ապա այդ նորմի նպատակն է նվազագույնի հասցնել մինչդատական վարույթում անձի ազատության իրավունքի կամայական և անհիմն սահմանափակման հավանականությունը: Հիմնավոր կասկածի ապացուցման համար բավական են կատարված արարքի հետ անձի օբյեկտիվ կապը հաստատող փաստեր կամ տեղեկություններ ունենալը և հաստատելը քննարկվող դեպքի և այն հանցագործության իդենտիկությունը, որի կատարման մեջ անձը մեղադրվում է: Միաժամանակ այդ փուլում անձի մեղավորությունը և մեղադրանքի էությունը քննարկելը չի բխում դատական վերահսկողության նպատակային նշանակությունից: Այդ հարցերը ենթակա են քննարկման և լուծման դատական քննության փուլում, քանի որ իրենցից ներկայացնում են արդարադատության իրականացում: Հ. Խաչատրյանի գործով որոշման 13-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ (...)»: Քննարկվող հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ դատարանն իրավունք չունի մինչև դատական քննության ավարտն իր որոշմամբ կամ որևէ այլ ձևով կարծիք արտահայտել մեղադրյալի մեղավորության վերաբերյալ: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները Հարություն Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշումներում փաստարկել են, որ առկա են ապացույցներ, որոնցով հիմնավորվում է մեղադրյալի առնչությունը կատարված արարքին, մասնավորապես մեղադրյալը հետևողականորեն պնդել է, որ չի պատրաստվում կատարելու իր քաղաքացիական պարտականությունը՝ կապված զինվորական կամ այլընտրանքային ծառայության հետ: Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանը

ստորադաս դատարանների որոշումներում մեղադրանքի էությունը կամ հիմնավորվածությունը գնահատելու հատկանիշներ չի արձանագրել:

Հիմնավորումների «համարժեքության» առումով Եվրոպական դատարանը մշակել է բավականին հստակ մոտեցումներ, համաձայն որոնց՝ շարունակական կալանքը կարող է իրավաչափ լինել միայն հետևյալ չորս պայմաններից մեկի կամ մի քանիսի հաստատման դեպքում՝

- ա) փախուստի վտանգ,
- բ) արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգ,
- գ) հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգ,
- դ) հանրային անկարգության վտանգ:

Փախուստի վտանգը գնահատելու համար կարող են հաշվի առնել հետևյալ գործոնները՝ անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, բնակության և աշխատանքի պայմանները, ունեցվածքը, ընտանեկան կապերը և հետապնդման երկրի հետ ունեցած բոլոր տեսակի այլ կապեր (տե՛ս *Becciev v. Moldova*, 04/10/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 9190/03, կետ 58):

Ընդ որում, օրինակ, մշտական բնակության վայր չունենալն ինքնին չի կարող բավարար համարվել փախուստի վտանգի մասին հետևություն կատարելու համար (տե՛ս *Sulaoja v. Estonia*, 15/02/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 55939/00, կետ 64):

Փախուստի վտանգը գնահատելու համար վերաբերելի գործոն է անձին սպառնացող պատժի խստությունը, սակայն մեղադրանքի խստությունը ինքնին չի կարող արդարացնել անձի երկարատև նախնական կալանքը (տե՛ս *Idalov v. Russia*, 22/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 5826/03, կետ 145, *Ilijkov v. Bulgaria*, 26/07/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 33977/96, կետ 80-81):

Արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգը (վարույթի խոչընդոտման վտանգը) չի կարող վերացական լինել: Այն պետք է հիմնված լինի փաստական տվյալների վրա (տե՛ս *Becciev v. Moldova*, 04/10/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 9190/03, կետ 59): *Խանզադյանն ընդդեմ Հայաստանի* գործով որոշմամբ Եվրոպական դատարանը իրավաչափ է համարել վարույթի նկատմամբ միջամտություն կատարելու վտանգի առկայության մասին ներպետական դատարանների հետևությունը: Եվրոպական դատարանը հատուկ ընդգծել է, որ անձը, լինելով նախկին քննիչ, մեղադրվել է իր պաշտոնական կարգավիճակում կատարված հանցագործության համար, որը ենթադրաբար կատարած է եղել ոստիկանության այլ ծառայողների հետ (տե՛ս *Khanzadyan v. Armenia*, 11/03/2014 թ., գանգատը անընդունելի հայտարարելու որոշում, գանգատ թիվ 68571/11, կետ 39):

Հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգը պետք է գնահատվի գործի հանգամանքների լույսի ներքո՝ հատկապես հաշվի առնելով

մեղադրյալի անցյալը և անձնավորությունը (տե՛ս Clooth v. Belgium, 12/12/1991 թ. վճիռ, գանգաստ թիվ 12718/87, կետ 40): Նախկին դատավածությունները կարող են ողջամիտ հիմնավորում լինել այն մտավախության համար, որ մեղադրյալը կարող է նոր հանցանք կատարել (տե՛ս Selçuk v. Turkey, 10/01/2006 թ. վճիռ, գանգաստ թիվ 21768/02, կետ 34): Դրան հակառակ՝ ընտանիք և աշխատանք չունենալը չի կարող վկայել այն մասին, որ մեղադրյալը հակված է կատարել նոր հանցանքներ (տե՛ս Sulaoja v. Estonia, կետ 64):

Հանրային անկարգության վտանգը (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ) վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության առանձնակի ծանրությունը և դրա նկատմամբ հանրային արձագանքը կարող են հանգեցնել հասարակական հուզումների: Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ ներկայացվեն փաստեր առ այն, որ մեղադրյալի ազատ արձակումը իսկապես խաթարելու է հանրային կարգը (տե՛ս Prencipe v. Monaco, 16/07/2009 թ. վճիռ, գանգաստ թիվ 43376/06, կետ 79):

Կալանավորման պատշաճ հիմնավորվածության հարցին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ. Գևորգյանի գործով որոշման մեջ՝ քննարկելով այն հարցը, թե իրավաչափ է արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից մեղադրյալ Վ. Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում վերջինիս կողմից մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու, ինչպես նաև գործով այլ մեղադրյալների նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու հանգամանքները դնելը: Գործի նյութերի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Վ. Գևորգյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ առաջադրված մեղադրանքը չընդունելու և իրեն մեղավոր չճանաչելու պայմաններում ավելանում է Վ. Գևորգյանի կողմից գործով մյուս մեղադրյալներ Մամիկոն և Յուրի Մարտիրոսյանների վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Այլ կերպ ասած՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ի վնաս մեղադրյալի է մեկնաբանել այն, որ վերջինս օգտվել է ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված՝ իր դեմ ցուցմունք չտալու, իր իրավունքներն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքներից, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված՝ իր անմեղության մասին հայտարարելու իրավունքից: Մինչդեռ քրեական դատավարության օրենսգրքի 65–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ «Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք»: ՀՀ վճռաբեկ դատարանը Վ. Գևորգյանի գործով որոշման 34–րդ կետում արձանագրել է. «(...) մեղադրյալի կողմից իր անմեղության մասին հայտարարելը, ինչը տվյալ դեպքում դրսևորվել է՝ մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմք դիտարկելու և մեղադրյալի կողմից մեղադրանքը չընդունելով պայմանավորված՝ վերջինին ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքից զրկելն իրավաչափ չէ: Նշված փաստարկումը սկզբունքորեն չի կարող դրվել անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հիմքում: (...): ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի քննարկվող որոշման մեջ որպես կալանավորման հիմնավորում օրենքին հակասող փաստարկներ նշելը հակասում է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության նպատակներին: Վերջինիս հենց նպատակն է նվազագույնի հասցնել մարդու իրավունքների անհիմն սահմանափակումները, երաշխավորել քրեական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանությունը, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է Ներսես Միսակյանի գործով 2009 թ. ապրիլի 10-ին կայացված թիվ ԱԲԴ1/0003/11/08 որոշման 12-րդ կետում. «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ (...): Նմանատիպ հարց ՀՀ վճռաբեկ դատարանը քննարկել է նաև Ա. Առաքելյանի գործով որոշման մեջ, որտեղ քննության առարկա է դարձել այն հարցը, թե իրավաչափ է արդյոք դատարանի կողմից կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման հիմքում մեղադրյալի՝ ցուցմունքներ տալուց հրաժարվելը (լռություն պահպանելը) դնելը: Գործի նյութերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մեղադրյալին կալանավորելու միջնորդությունը բավարարելիս որոշել է, որ քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Ա. Առաքելյանը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, կատարել է ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 5–10 տարի ազատազրկում, և նրան մեղսագրվող հանցագործության ծանրությունը կարող է բավարար լինել նրան ազատությունից զրկելու համար: Ինչպես և նախորդ գործում, կալանավորման միջնորդությունը բավարարվել է այնպիսի հիմնավորմամբ, որը ոչ միայն նախատեսված չէ օրենքով, այլև խախտում է ՀՀ Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքով և միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ անձի լռություն պահպանելու և պաշտպանության իրավունքները: ՀՀ վճռաբեկ դատարանը Ա. Առաքելյանի գործով որոշման 19-րդ կետում արձանագրել է.«(...) Մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես

խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար»: Ինչպես Վ. Գևորգյանի, այնպես էլ Ա. Առաքելյանի գործով որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը, փաստորեն, ամրագրել է, որ կալանավորման նպատակները չեն կարող հասկացվել այնպես, որ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը հավասարեցվի արդարադատության իրականացմանը խոչընդոտելու կամ նոր հանցանք գործելու վտանգին, և հանգեցնեն ազատության սահմանափակման, ինչը համատեղելի չէ ազատության իրավունքի ամրագրման սահմանադրական նպատակների և արժեքավորման հետ: Անթույլատրելի հիմքով կալանավորման ևս մեկ դեպքի ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ. Խաչատրյանի գործի որոշմամբ, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանը քննության է առել այն հարցը, թե իրավաչափ է արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից մեղադրյալ Հ. Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս որպես որոշման հիմնավորվածություն գործը դատարան ուղարկված լինելու և առաջին ատյանի դատարանի կայացրած՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը նույնը թողնելու հանգամանքները շարադրելը: Վերոնշյալ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ. Խաչատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումն անփոփոխ թողնելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անդրադառնալով Հ. Խաչատրյանի կալանավորման հիմքերին, ի թիվս մեղադրյալի կողմից նոր հանցանքներ կատարելու և պատասխանատվությունից խուսափելու հավանականության մասին հետևությունների, նշել է նաև այն, որ Հ. Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, և վերջինիս կողմից 2011 թ. օգոստոսի 19-ին կայացված՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնվել է նույնը: ՀՀ վճռաբեկ դատարանը, նշված գործի փաստական հանգամանքները քննարկելով Վ. Գևորգյանի գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո, վերահաստատել է իր սկզբունքային կողմնորոշումն այն մասին, որ կալանավորման հիմքում կարող են դրվել միայն այնպիսի հիմքեր, որոնք նախատեսված են օրենքով, ուստի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու չէր Հ. Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հիմքում դնել նրա վերաբերյալ քրեական գործը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ուղարկված լինելու և դատարանի կողմից 2011 թ. օգոստոսի 19-ին կայացված՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ Հ. Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը նույնը թողնելու հանգամանքները:

Կալանավորման հիմնավորվածության և պատճառաբանվածության հարցին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Տարոն Հակոբի Պիրապյանի գործով 2010 թ. հուլիսի 23-ին կայացված թիվ ԱԲԴ1/0028/06/10 որոշմամբ: Նշված գործով առաջին աստիճանի դատարանը կալանավորման միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշման մեջ շարադրել էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերո առանց հիմնավորելու, թե ինչու է կարծում, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է, և Ս. Պիրապյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խուսափել պատասխանատվությունից: Նույնը կարելի է ասել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ առաջին աստիճանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին որոշման վերաբերյալ: Կալանավորման նմանատիպ որոշումները, անշուշտ, անթույլատրելի են, ինչը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածից, որի 1-ին մասի համաձայն՝ «Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»: Ուստի Ս. Պիրապյանի գործով որոշման 14-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է.«(...) առաջին աստիճանի դատարանն անտեսել է այն իրավական պահանջը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, և կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: Փաստորեն դատարանը, առանց համապատասխան հիմքերի առկայության, հետևություն է արել Ս. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորված լինելու մասին և արդյունքում կայացրել անհիմն ու չպատճառաբանված որոշում»: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ստորադաս դատարանների կողմից կալանավորման որոշումները պատշաճ կարգով չհիմնավորելու և չպատճառաբանելու պրակտիկան ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից գնահատվել է որպես ոչ միայն կալանավորման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման վերաբերյալ դրույթների, այլև օրինականության սկզբունքի խախտում:

Կալանավորման ժամկետի երկարաձգման օրինականության և հիմնավորվածության չափանիշներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Գագիկ Արշակի Առաքելյանի գործով 2012 թ. հունիսի 8-ին կայացված թիվ

ԿԴ1/0040/01/11 որոշման մեջ՝ քննարկելով, թե Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները համապատասխանում են արդյոք դրա համար անհրաժեշտ հիմնավորվածության չափանիշին, և ստորադաս դատարաններն իրավասո՞ւ էին արդյոք Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումները հիմնավորելու բացառապես նրան մեղսագրվող հանցագործության ծանրությամբ և քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հստակ է այն հարցում, որ կալանքի ժամկետը չի կարող երկարացվել բացառապես քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտության հիման վրա, քանզի այդ հիմքը նախատեսված չէ օրենքով, բացի այդ՝ այն չի համարվում «վերաբերելի» և «բավարար» «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով:

Դասին առնչվող գրականություն

1. Դ. Ավետիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնարար մոտեցումները և այդ իրավունքի զարգացման ժամանակակից միտումները, Երևան, 2004:
2. Հ. Ղուկասյան, Ազատության իրավունքի ապահովման միջազգային և ներպետական երաշխիքները (համեմատական վերլուծություն), ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 75-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008:
3. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան., Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
4. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
5. Էլիսթեր Մոուրբեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն: Երևան, «Բավիդ», 2010:

ԴԱՍ 4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Թեմա 1. Ձերբակալման պատճառների և առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացվելու, դատավորի առաջ կանգնելու և կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավունքը

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Կիրառելիությունը

5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում օգտագործվող ձևակերպումները ենթակա են ավտոնոմ մեկնաբանության, մասնավորապես 5-րդ հոդվածի կոչմանը և նպատակին համապատասխան, այն է՝ պաշտպանել յուրաքանչյուրին ազատության կամայական զրկումից: «Ձերբակալում» հասկացությունը դուրս է գալիս քրեական դատավարությունում կիրառվող միջոցների շրջանակից, իսկ «ցանկացած մեղադրանք» հասկացությունը բնութագրում է անձի իրավական վիճակը, որը պետք է հաշվի առնվի նրան ազատությունից զրկելիս: 5-րդ հոդվածի ի երկրորդ մասը որևէ տարբերակում չի դնում, արդյո՞ք ազատությունից զրկված անձը ձերբակալված է, թե՞ կալանավորված: Ուստի չկա որևէ հիմք կալանավորումը 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի շրջանակներից դուրս թողնելու համար (տե՛ս *Van der Leer v. the Netherlands*, §§ 27 and 28):

Նպատակը

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆը պարունակում է տարրական երաշխիք առ այն, որ ձերբակալված յուրաքանչյուր անձ պետք է հստակ իմանա, թե ինչու է նա գրկվել ազատությունից: Բացի այդ՝ այս երաշխիքը 5-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության երաշխիքի բաղկացուցիչ մաս է: Երբ անձը տեղեկացվում է իր ձերբակալման կամ կալանավորման երաշխիքների մասին, նա ձեռք է բերում դրա օրինականությունը դատարանում վիճարկելու հնարավորություն (տե՛ս *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, § 40; *Čonka v. Belgium*, § 50):

Յուրաքանչյուր ոք, ով իրավասու է դիմելու դատարան՝ վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, չի կարող արդյունավետ ձևով իրացնել իր այդ իրավունքը, քանի դեռ նա անհապաղ և պատշաճ ձևով չի տեղեկացվել իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին (տե՛ս *Van der Leer v. the Netherlands* § 28; *Shamayev and Others v. Georgia and Russia*, § 413):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի ձևակերպումից հստակ է, որ պետությունը անձին ազատությունից զրկելու պատճառների մասին տեղեկացնում է հենց իրեն՝ ազատությունից զրկված անձին կամ նրա ներկայացուցչին (*Saadi v. the United Kingdom*, § 53): Եթե անձն ի վիճակի չէ ստանալու այս տեղեկությունները, համապատասխան տեղեկությունները պետք է հայտնվեն վերջինիս իրավաբանին կամ խնամակալին (տե՛ս *X v. the United Kingdom*, Commission Report, § 106):

Այն հարցը, թե արդյոք ազատությունից զրկելու պատճառներն անհապաղ են հայտնվել, պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Ամեն դեպքում Դատարանը սահմանել է, որ ազատությունից զրկվելու պատճառները հնարավորության դեպքում պետք է հայտնվեն հենց ձերբակալման պահին (տե՛ս *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, § 40; *Murray v. the United Kingdom* [GC], § 72): Դատարանը նորմալ է համարել նաև պատճառների մասին տեղեկացումը ձերբակալումից հետո՝ մի քանի ժամվա ընթացքում (տե՛ս *Kerr v. the United Kingdom* (dec.); *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, § 42): Ազատությունից զրկելու պատճառները պարտադիր չէ, որ սահմանվեն որևէ որոշմամբ, լինեն գրավոր կամ որևէ հատուկ ձև ունենան (տե՛ս *X v. Germany*, Commission decision; *Kane v. Cyprus* (dec.)): Ձերբակալման պատճառները կարող են տրամադրվել ձերբակալմանը հաջորդող հարցաքննությունների ընթացքում (տե՛ս *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, § 41; *Murray v. the United Kingdom* [GC], § 77; *Kerr v. the United Kingdom* (dec.)):

Այն հարցը, թե ազատությունից զրկելու պատճառների վերաբերյալ տեղեկությունների բովանդակությունը արդյոք բավարար է, պայմանավորված է կոնկրետ գործի փաստական հանգամանքներով (տե՛ս *Fox, Campbell and Hartley*

v. the United Kingdom, § 40): Ինչևէ, միայն ձերբակալման իրավական հիմքի մատնանշումը ինքնին բավարար է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի նպատակների տեսանկյունից (*տե՛ս Murray v. the United Kingdom* [GC], § 76; *Kortesis v. Greece*, §§ 61-62): Ձերբակալված անձանց պետք է պարզ, ոչ տեխնիկական, այլ նրանց համար հասկանալի լեզվով բացատրվի ձերբակալման հիմնական իրավական և փաստական հանգամանքները, այն հաշվով, որպեսզի վերջիններս անհրաժեշտության դեպքում դիմեն դատարան՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆին համապատասխան դրա օրինականությունը վիճարկելու համար (*տե՛ս Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, § 40; *Murray v. the United Kingdom* [GC], § 72): Ամեն դեպքում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի պահանջում, որպեսզի այդ տեղեկությունը պարունակի անձին առաջադրված մեղադրանքների սպառիչ ցանկը (*տե՛ս Bordovskiy v. Russia*, § 56; *Nowak v. Ukraine*, § 63; *Gasins v. Latvia*, § 53):

Եթե ձերբակալման որոշումը ձևակերպված է այնպիսի լեզվով, որին ազատությունից զրկված անձը չի տիրապետում, 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի պահանջները կատարված կլինեն, եթե մեղադրյալը հարցաքննվել է և դրա ընթացքում իրեն հասկանալի լեզվով տեղեկացվել է իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին (*տե՛ս Delcourt v. Belgium* (Commission decision of 7 February 1967 referred to in the Commission's report of 1 October 1968)):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով: Այս դրույթը երաշխիք է ընդդեմ կամայական կամ չարդարացված ազատագրկման (*տե՛ս Aquilina v. Malta* [GC], § 47; *Stephens v. Malta (no. 2)*, § 52): 5-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆի առաջին մասը կոչված է ապահովելու անհապաղ և ավտոմատ դատական վերահսկողություն նույն հոդվածի 1 (c) պարագրաֆի հիման վրա կատարված ոստիկանական կամ վարչական կալանքի նկատմամբ (*տե՛ս De Jong, Baljet and Van den Brink v. the Netherlands*, § 51; *Aquilina v. Malta* [GC], §§ 48-49): Ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է լինի անհապաղ (*տե՛ս McKay v. the United Kingdom* [GC], § 33): Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆը չի նախատեսում այս կանոնից որևէ բացառություն, նույնիսկ այն դեպքերի համար, երբ նախկինում դատական միջամտություն է եղել (*տե՛ս Bergmann v. Estonia*, § 45): Չորս օրը գերազանցող ցանկացած ժամանակահատված *prima facie* բավականին երկար է (*տե՛ս Oral and Atabay v. Turkey*, § 43; *McKay v. the United Kingdom* [GC], § 47; *Nastase-Silivestru v. Romania*,

§ 32): Ավելի կարճ ժամանակահատվածները նույնպես կարող են խախտել անհապաղության պահանջը, եթե չկան հատուկ դժվարություններ կամ բացառիկ հանգամանքներ, որոնք իշխանություններին զրկել են տվյալ անձին ավելի վաղ դատարան ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս *Ipek and Others v. Turkey*, §§ 36-37; and *Kandzhov v. Bulgaria*, § 66): Կալանքի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է լինի ավտոմատիկ և չպետք է պայմանավորված լինի կալանավորված անձի դիմումով (տե՛ս *McKay v. the United Kingdom* [GC], § 34; *Varga v. Romania*, § 52; *Viorel Burzo v. Romania*, § 107):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆի իմաստով կալանքի ժամկետը սահմանելիս հաշվի է առնվում այն ժամանակահատվածը, երբ մեղադրյալը փաստացի զրկվել է ազատությունից մինչև այն պահը, երբ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ որոշում է կայացվում, անգամ միայն առաջին ատյանի դատարանի կողմից (տե՛ս *Solmaz v. Turkey*, §§ 23-24; *Kalashnikov v. Russia*, § 110; *Wemhoff v. Germany*, § 9):

Ներպետական դատարանները պարտավորված են ստուգելու անձի շարունակվող կալանքի օրինականությունը՝ ապահովելու նրա ազատ արձակումը այն դեպքում, երբ հանգամանքներն այլևս չեն հիմնավորում հետագա շարունակական ազատազրկումը: Առնվազն սկզբնական փուլում հիմնավոր կասկածի առկայությունը կարող է արդարացնել ազատությունից զրկելը, սակայն որոշ ժամանակահատված անցնելուց հետո այն դադարում է բավարար լինել: Այն հարցը, թե արդյոք կալանավորման ժամկետը ողջամիտ է, թե ոչ, չի կարող գնահատվել վերացական ձևով, այլ պետք է գնահատվի յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով տվյալ գործի առանձնահատկությունները, չկան հստակ սահմանված ժամանակային սահմաններ, որոնք կարող են կիրառելի լինել բոլոր գործերով (տե՛ս *McKay v. the United Kingdom* [GC], §§ 41-45; *Bykov v. Russia* [GC], §§ 61-64; *Idalov v. Russia* [GC], §§ 139-141; see also *Labita v. Italy* [GC], §§ 152-153; and *Kudla v. Poland* [GC], §§ 110-111): Կալանքի ժամկետի քվադի-ավտոմատիկ երկարացումը հակասում է 5-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆում սահմանված երաշխիքներին (տե՛ս *Tase v. Romania*, § 40):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆը Կոնվենցիայի *habeas corpus*-ն է: Այն ազատությունից զրկված անձանց երաշխավորում է իրենց նկատմամբ կիրառված կալանավորման օրինականության վերանայման հնարավորություն (տե՛ս *Mooren v. Germany* [GC], § 106; *Rakevich v. Russia*, § 43): Այն փաստը, որ դատարանը չի արձանագրել 5-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի խախտում, չի նշանակում, որ ազատվում է այդ որոշումը 5-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆին համապատասխան վերանայելու պարտականությունից (տե՛ս *Douiyeb v. the Netherlands* [GC], § 57; *Kolompar v. Belgium*, § 45):

Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով որոշմամբ (ԵԱԴԴ/0085/06/09, կայացվել է 2009 թ. դեկտեմբերի 18-ին) Վճռաբեկ դատարանը վերհանել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն ընդգրկում է իրեն ազատությունից զրկելու պատճառի մասին տեղեկացվելու, ազատությունից զրկվելու մասին իր ընտրությամբ որևէ անձի հայտնելու, իր փաստաբանին հրավիրելու, լռելու, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում կարգավիճակ ստանալու իրավունքները:

Վճռաբեկ դատարանն արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ակոնոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չհայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից:

Տ. Վահրադյանի վերաբերյալ գործով (ԼԴ/0197/06/08, կայացվել է 2008 թ. դեկտեմբերի 26-ին) որոշմամբ՝ վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասով և 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված նորմերը, ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված դրույթները հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ

կապված խափանման միջոց ընտրելու անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո՝ արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը՝ նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնելու կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը: Հետևաբար, հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ:

Թեմա 2. Անօրինական ձերբակալման կամ կալանավորման համար փոխհատուցման իրավունք

5-րդ պարագրաֆում ամրագրված փոխհատուցման իրավունքը ենթադրում է, որ այլ պարագրաֆների խախտում է արձանագրվել ներպետական դատարանի կամ Եվրոպական դատարանի կողմից (տե՛ս *N. C. v. Italy* [GC], § 49; *Pantea v. Romania*, § 262; *Vachev v. Bulgaria*, § 78):

Ներպետական իշխանությունների կողմից, ուղղակի կամ ըստ էության, 5-րդ հոդվածի խախտում չարձանագրելու դեպքում Դատարանն ինքը պետք է նման խախտում արձանագրի՝ 5-րդ հոդվածի 5-րդ պարագրաֆի կիրառման համար (տե՛ս *Nechiporuk and Yonkalo v. Ukraine*, §§ 227 and 229; *Yankov v. Bulgaria*, §§ 190-193): Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ պարագրաֆի կիրառելիությունը կախված չէ ներպետական դատարանների կողմից կալանավորման անօրինականության հաստատումից (տե՛ս *Blackstock v. the United Kingdom*, § 51; *Waite v. the United Kingdom*, § 73): Ձերբակալումը կամ կալանավորումը կարող են ներպետական օրենսդրությամբ համարվել օրինական, սակայն ոչ համապատասխան 5-րդ հոդվածին, ինչը կիրառելի է դարձնում 5-րդ հոդվածի 5-րդ պարագրաֆը (*Harkmann v. Estonia*, § 50):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ պարագրաֆը է ներպետական դատարանների առաջ փոխհատուցման ուղղակի և իրացվելի իրավունք (տե՛ս *A. and Others v. the United Kingdom* [GC], § 229; *Storck v. Germany*, § 122):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ պարագրաֆը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ ազատությունից զրկումը իրականացվել է 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարագրաֆների պահանջների խախտմամբ (տե՛ս *Michalák v. Slovakia*, § 204; *Lobanov v. Russia*, § 54): Փոխհատուցման իրավունքը պետք է երաշխավորվի որոշակիության բավարար աստիճանով (տե՛ս *Ciulla v. Italy*, § 44; *Sakik and Others v. Turkey*, § 60): Փոխհատուցումը պետք է հասանելի լինի ինչպես տեսականորեն (տե՛ս *Dubovik v. Ukraine*, § 74), այնպես էլ գործնականորեն (տե՛ս *Chitayev and Chitayev v. Russia*, § 195):

Փոխհատուցման իրավունքն անմիջականորեն վերաբերում է նյութական փոխհատուցմանը (տե՛ս *Bozano v. France*, Commission decision):

Թեև նախադեպային իրավունքը փոխհատուցման կոնկրետ չափ չի սահմանում (տե՛ս *Damian-Burueana and Damian v. Romania*, § 89; *Çağdaş Şahin v. Turkey*, § 34), սակայն այն չի կարող պակաս լինել այն փոխհատուցման չափից, որը տվյալ իրավիճակում երաշխավորում է Դատարանը (տե՛ս *Ganea v. Moldova*, § 30; *Cristina Boicenco v. Moldova*, § 43):

Դասին առնչվող գրականություն

6. Դ. Ավետիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնարար մոտեցումները և այդ իրավունքի զարգացման ժամանակակից միտումները, Երևան, 2004:

7. Հ. Ղուկասյան, Ազատության իրավունքի ապահովման միջազգային և ներպետական երաշխիքները (համեմատական վերլուծություն), ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 75-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2008:
8. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
9. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
10. Էլիպթեր Մոուբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:

**ԴԱՍ 5. «ՄԱՏՉԵԼԻ ԴԱՏԱՐԱՆ». ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ: ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ
ՈՐՈՇՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

**Թեմա 1. Դատարանի իրավունք: Քննության ողջամիտ ժամկետը և
պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը**

«Անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու» հասկացությունը արտահայտում է քրեական ոլորտը, որի սահմանադրաիրավական ծավալը կարող է ավելի լայն լինել, քան ճյուղային իրավականը: Դա բխում է *Էնգելի* գործով որոշմամբ Դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումից, որի համաձայն՝ արարքին ներպետական

իրավունքում տրված դասակարգումը (որակումը) միակ չափանիշը չէ, որով բնորոշվում է քրեական ոլորտը. անհրաժեշտ է հիմք ընդունել նաև՝ (ա) արարքի բնույթը և (բ) սանկցիայի ծանրության աստիճանը (տե՛ս Engel v. The Netherlands, § 80-82, (No 1) (1976) 1 EHRR 647): Դատարանի իրավունքը չի ենթադրում տուժողի՝ քրեական վարույթ նախաձեռնելու կամ այդ նպատակով դատախազին դիմելու իրավունք (տե՛ս u Helmers v. Sweden, 29 October 1991, §§ 29, Series A no. 212-A): Այնուամենայնիվ, եթե քրեական դատավարությունը տուժողի համար քաղաքացիական կարգով վնասների հատուցում ստանալու միակ միջոցն է, ապա այս դեպքում իրավիճակն այլ է (տե՛ս u Assenov and Others v. Bulgaria, 28 October 1998, § 111-112, Reports 1998-VIII):

Այն հանգամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից՝ դիտարկելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տե՛ս u Siałkowska Sialkowskav. Poland, no. 8932/05, 22 March 2007):

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը:

Քրեական գործերով վարույթի ժամկետը հաշվարկվում է կա՛մ անձին կալանավորելու կամ ձերբակալելու պահից կա՛մ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կա՛մ նախնական քննությունը սկսելու պահից (տե՛ս u Eckle v. Germany, 15 July 1982, § 73, Series A no. 51; Corigliano v. Italy judgment of 10 December 1982, Series A no. 57, p. 13, § 34):

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր ատյանի դատարանում, այն է, երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում:

Դատարանը մշակել է չափանիշներ, որոնք հաշվի առնելով՝ որոշվում է ողջամիտ ժամկետի խախտման հարցը. գործի բարդությունը, դատական ու վարչական մարմինների վարքագիծը և ռիսկի աստիճանը դիմողի համար: Գործի բարդության աստիճանը որոշելիս կարևոր են դրա հետ կապված բոլոր հարցերը: Բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական հարցերի հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս այնպիսի գործոնների, ինչպիսիք են հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների

թվաքանակը, միջազգային գործոնները, տվյալ գործի միացումն այլ գործերին, ինչպես նաև նոր անձանց ներգրավումը դատավարությանը:

Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է: Այնուամենայնիվ, չի կարելի դիմողին մեղադրել այն բանում, որ նա ամբողջությամբ օգտագործել է ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցները:

Ողջամիտ ժամկետների խախտման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի նաև գործի քննությունը պետական մարմինների կողմից ձգձգելու հարցը:

Ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ դատարանները պետք է բավարար հստակությամբ հիշատակեն այն փաստարկները, որոնք ընկած են իրենց որոշումների հիմքում (տե՛ս *Hatjianastasiou v. Greece*, no. 12945/87, Commission decision of 4 April 1990, and *Berdzenishvili v. Russia* (dec.), no. 31697/03, ECHR 2004-II (extracts):

Դրա հետ մեկտեղ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ որոշումների պատճառաբանման պահանջը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Այն չի նշանակում, որ դատարանը պետք է մանրամասն անդրադառնա կողմերի բոլոր փաստարկներին: Այդ պարտականության ծավալը կարող է փոփոխվել՝ կախված որոշման բնույթից: Այդ պատճառով դատարանների կողմից որոշումների պատճառաբանման՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածից բխող պահանջի խախտման հարցը կարող է որոշվել՝ միայն ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (տե՛ս *Ruiz Torija v. Spain*, §§ 29 (9 December 1994, Series A no. 303-A); *Hiro Balani v. Spain* judgment of 9 December 1994, Series A no. 303-B, p. 31, §§ 27):

Թեմա 2. Հրապարակայնություն. դոնբաց դատական քննությունը որպես մեղադրյալի և հասարակության իրավունք

Կոնվենցիան, կարևորելով հրապարակայնությունը՝ որպես արդարադատության իրականացման կարևոր և պարտադիր պայման, այն դիտել է որպես արդարացի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է հրապարակայնության սկզբունքին, քանի որ Կոնվենցիան հրապարակայնությունը դիտում է որպես արդարացի դատաքննության իրավունքի բաղկացուցիչ և դրա ապահովման կարևորագույն երաշխիք: Դատարանն իր մի շարք որոշումներում նշել է. «6(1)-րդ հոդվածում ամրագրված՝ դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնիության

պայմաններում, հասարակական դիտարկումից դուրս արդարադատության իրականացումից: Միննույն ժամանակ այն ստորադաս և վերադաս դատարանների նկատմամբ վստահության ապահովման միջոցներից է: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելով՝ հրապարակայնությունը նպաստում է 6(1)-րդ հոդվածի նպատակի, այն է՝ արդարացի դատաքնության նվաճմանը, որի երաշխիքը Կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է» (տե՛ս Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, Series A no 72; Pretto v. Italy, 8 December 1983, Series A no 71; Sutter v. Switzerland, 22 February 1984, Series A no 74):

Թեև դատական քննության հրապարակայնությունը կարևոր նշանակություն ունի դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ձևավորման համար, սակայն անվիճելի է նաև, որ հրապարակայնության սկզբունքի բացարձականացումը կարող է դատական իշխանության վրա ներագդման միջոց դառնալ: Դեռ 1962 թ. Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է, որ որոշ գործերով ՁԼՄ-ների թշնամական գործունեությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ դատական քննության արդարացիության վրա և հանգեցնել պետության պատասխանատվության (տե՛ս X v. Austria, no. 1475/62, Coll. Dens.31, p.43 (1963)):

Սակայն Եվրոպական դատարանը ոչ միայն թույլատրելի է համարել ՁԼՄ-ների կողմից հասարակական մեծ հնչեղություն ունեցող դատավարությունների մեկնաբանությունները (տե՛ս X v. Norway, N3444/67, 13YBECHR 302 (1970); Sunday Times v. UK, Series A no 30 (1979), այլև նշել է, որ դատական քննության հրապարակայնությամբ հեշտ չէ ներագդել պրոֆեսիոնալ դատավորի վրա (տե՛ս Craxi v. Italy, մáŌáù N34896/97, 5 December, (2002)):

Կոնվենցիայի 6(1) հոդվածը սահմանում է դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիք՝ դոնբաց դատական քննություն և դատավճռի հրապարակում (տե՛ս *The European System for the Protection of Human Rights. Edited by R. St. J. Macdonald, F. Matscher, H Petzold. Martinus Nijhoff Publishers, Dordrecht, Boston, London. p. 393*):

Դոնբաց դատական քննության ապահովումն ինքնին բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից դատավարությունը հրապարակային բնութագրելու համար: Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրավիճակի բազմազանությունը՝ Դատարանն ընտրել է պրագմատիկ մոտեցում՝ նշելով հրապարակային դատական քննության ապահովման ձևական երաշխիքների երկրորդական նշանակությունը: Դատական քննության հրապարակայնության գնահատման տեսանկյունից Դատարանը կարևորել է դատավարության փաստական իրողությունների գնահատումը (ի՛նք Pretto, para. 22; Axen, para. 26; Sutter, para. 27; Campbell and Fell, para. 91): Սա է պատճառը, որ մի

կողմից՝ դատարանն ընդլայնում է հրապարակայնության սահմանները՝ ներառելով այնպիսի բաղադրիչներ, որոնք հայրենի քրեական դատավարությունը երբևէ չի դիտել որպես հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ, մյուս կողմից՝ դատարանը չի բացարձականացնում այս սկզբունքը, և այն դիտարկում է արդարացի դատաքննության բոլոր տարրերի հետ համակցությամբ:

Հրապարակային քննությունը նախ և առաջ կոչված է ապահովելու դոմբաց դատական քննությունը առաջին ատյանի դատարանում: Սակայն, տեխնիկական պատճառներից ելնելով, հրապարակային քննությունը երբեմն կարող է պարտադիր չհամարվել (տե՛ս Nuala Mole and Catharina Harby. *The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No.3, 2006, չԳ 20*): Եթե առաջին ատյանի դատարանում հրապարակային դատական քննություն չի անցկացվում, ապա դա կարող է փոխհատուցվել՝ ավելի բարձր ատյանի դատարանում հրապարակային քննություն անցկացնելով: Սակայն, այն պարագայում, եթե վերադաս դատարանը չի անդրադառնում կամ իրավասու չէ անդրադառնալու գործի փաստական կողմին, առկա է 6-րդ հոդվածի խախտում: Միննույն ժամանակ, եթե վերադաս դատական ատյանը հրապարակայնության բացակայության պայմաններում բեկանում է ստորադաս դատարանի կողմից հրապարակային քննության արդյունքում կայացրած արդարացման դատավճիռը, ապա առկա է 6-րդ հոդվածի խախտում: Նման դիրքորոշում Դատարանն արտահայտել է *Իգուալ Կոլն ընդդեմ Բսպանիայի* գործով, երբ հայցվորն արդարացվել է առաջին ատյանի դատարանում՝ դոմբաց դատական նիստի ընթացքում, սակայն շրջանային դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը: Այս գործով Դատարանը նշել է. «Տվյալ դեպքում շրջանային դատարանի կողմից իրականացված քննության սահմանները թույլ են տալիս Դատարանին համարելու, որ դոմբաց դատական նիստ անհրաժեշտ էր: Իրականում շրջանային դատարանը չի սահմանափակվել գործի օբյեկտիվ կողմին այլ իրավական մեկնաբանություն տալով, այլ նաև վերանայել և նորովի է գնահատել առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցված փաստերը: Վերջինս անցնում է ըստ իրավունքի քննության սահմանը: Հետևաբար, վերադաս դատարանը գործը վերանայել է ըստ իրավունքի և ըստ փաստի: Հաշվի առնելով հայցվորի արդարացումն առաջին ատյանի դատարանի կողմից՝ դոմբաց նիստի արդյունքում, որի ժամանակ ներկայացվել են բազմաթիվ ապացույցներ ինչպես իրեղեն՝ դատական սեկվեստրի բանկային հաշվից տեղեկանքներ, այնպես էլ անձնական՝ հայցվորի հայտարարությունը, Դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից հայցվորի դատապարտումը՝ առանց նրան լսելու, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արդար դատաքննության պահանջին» (տե՛ս *Hermi v. Italy /GC/, application nom. 18114/02, 18.10.2006, para. 78.*):

Եվրոպական դատարանը պարզեցված ընթացակարգով դատական քննությանը հրապարակայնության պահանջ չի ներկայացնում: Այսպես՝ *Հերմինն ընդդեմ Իտալիայի* գործով Դատարանը նշել է, որ «նիստերը հրապարակային չեն եղել դիմողի կամավոր խնդրանքի հիման վրա՝ պարզեցված քննության կիրառման արդյունքում: Պարզեցված քննությունն անվիճելի առավելություններ է նախատեսում մեղադրյալի համար. դատապարտման դեպքում նրա պատիժը էականորեն նվազեցվում է, և դատախազությունը չի կարող պատժի հետ կապված բողոք ներկայացնել... Մյուս կողմից՝ պարզեցված վարույթը հանգեցնում է ներպետական օրենսդրությամբ նախատեսված դատավարական երաշխիքների նվազեցման, դա վերաբերում է, մասնավորապես, լուսմների հասարակական բնույթին և գլխավոր դատախազի գրասենյակի կողմից գործում չներառված ապացույցներ ձեռք բերելու խնդրանք ներկայացնելու հնարավորությանը» (տե՛ս *Hermi v. Italy /GC/, N18114/02, 18.10.2006, § 78*): Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն ունակ է եղել հասկանալու պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ իր խնդրանքի հետևանքները, հիմք ընդունելով, որ այս վեճը հասարակական շահի հետ որևէ առնչություն է ունեցել՝ այդպիսով խոչընդոտելով վերոհիշյալ դատավարական երաշխիքներից հրաժարվելուն, ինչպես նաև այն հանգամանքը, որ Իտալիայի օրենսդրությամբ պարզեցված վարույթի ամրագրումն ուղղված է բացառապես քրեական դատավարության պարզեցմանը և արագացմանը, նշել է. «Այն փաստը, որ առաջին և երկրորդ ատյաններում գործի քննությունը կատարվել է դռնփակ և, հետևաբար առանց հասարակության ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի խախտում...» (տե՛ս *Hermi, para. 81*):

Եթե բացառիկ հանգամանքեր չկան, Դատարանը հրապարակային դատական քննության բովանդակության մեջ ներառում է նաև դատական քննության բանավորության պահանջը (տե՛ս *Fischer v. Austria, 26 April 1995, para.44*): *Սքսենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության* գործով կայացրած վճռում Դատարանը նշել է, որ քրեական գործերում բանավորությունը պարտադիր չէ, եթե վերաքննիչ դատարանը մերժում է բողոքը միայն իրավունքի հիմքով (տե՛ս *Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, para. 28*): Սակայն, եթե վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա և՛ փաստին, և՛ իրավունքին, և՛ մեղավորության կամ անմեղության, և՛ պատժի վերանայման հարցերին, բանավորությունն անհրաժեշտ է (տե՛ս *Ekbatani v. Sweden, 26 May 1988, and Cooke v. Austria, 8 February 2000*):

Թեև ընդհանուր կանոնի համաձայն դատական քննությունը դռնփակ է, և դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել միայն դատարանի որոշմամբ, այնուամենայնիվ, նույնիսկ դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանը պետք է զգուշություն ցուցաբերի, քանի որ որոշ

ապացույցների հրապարակային հետազոտումը կարող է հանգեցնել կոնվենցիոնալ մեկ այլ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման: Մասնավորապես՝ *Պանտելեյենկոն ընդդեմ Ուկրաինայի* գործով Դատարանը նշել է. «Անհրաժեշտ է նշել, որ վերաքննիչ դատարանը, վերանայելով գործը, հանգել է այն եզրակացության, որ դիմողի անձնական տեղեկության նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավորների վերաբերմունքը չի համապատասխանել հոգեբուժական տվյալների հավաքման, պահպանման, օգտագործման և տարածման համար հատուկ ռեժիմին... Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը եզրակացնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում» (տե՛ս Panteleyenکو v. Ukraine . N11901/02, 29.06.2006, para. 61, 62):

Կոնվենցիան դոնբաս դատական նիստում դատավճիռը հրապարակելու պահանջ չի ներկայացնում: *Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի* գործով Դատարանը նշել է. «1889 թ-ի օրենքի 197-րդ բաժնի համաձայն՝ Զինվորական վճռաբեկ դատարանի 1977 թ. հոկտեմբերի 21-ին կայացրած դատավճիռը տրամադրվել է կողմերին, սակայն չի հրապարակվել դոնբաս դատական նիստում... Յուրաքանչյուր ոք, ում համար դա հետաքրքրություն է ներկայացնում, կարող է ծանոթանալ Զինվորական վճռաբեկ դատարանի դատավճռի ամբողջական տեքստին կամ ձեռք բերել դրա պատճենը. բացի դրանից՝ այնպիսի կարևոր դատավճիռները, ինչպիսին է *Սուտերի* գործով կայացված որոշումը, հետագայում հրատարակվում են պաշտոնական ժողովածուներում: Դրա դատական պրակտիկան, հետևաբար, որոշ դեպքերում բաց է հասարակական վերահսկողության համար: Ինչ վերաբերում է Զինվորական վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով քննարկված հարցերին և վերջինիս որոշմանը, որի արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական էր դարձել, և ոչինչ չէր փոփոխվել պրն Սուտերի վերաբերյալ դրա հետևություններում, 6-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունը..., որը վերաբերում է դատավճռի կայացմանը, շատ կոշտ է թվում և ոչ անհրաժեշտ 6-րդ հոդվածի նպատակներին հասնելու համար... Այսպիսով՝ Դատարանը համաձայն է Կառավարության և Հանձնաժողովի մեծամասնության հետ՝ եզրակացնելով, որ Կոնվենցիան չի պահանջում դատավարության վերջին փուլում կայացված դատավճռի բարձրաձայն հրապարակում» (տե՛ս Sutter v. Switzerland, N8209/78, 22.02.1984, para. 31, 34):

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

Եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:

2. Դ. Մելքոնյան, Հրապարակային դատական քննության եվրոպական չափանիշները, «Պետություն և իրավունք», Երևան, 2010, N1 (40), էջ 33-39:
3. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
4. Էլիաթեր Սոուբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
5. Գ. Ղազինյան, Դ. Մելքոնյան, Քրեական հետապնդման հարուցում, «Պետություն և իրավունք», Երևան, 2007, N1 (35), էջ 23-31:
6. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:
7. Эндрию Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
8. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты. М., «Рудомино», 2000.
9. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, М, 2001.

ԴԱՍ 6. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ: ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԲԵՐԸ, ԼՌԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն օրենքով ապացուցված չէ:

Թեմա 1. Անմեղության կանխավարկածի բովանդակության բացահայտումըն ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի

Եվրոպական դատարանի պրակտիկայում անմեղության կանխավարկածի իրավունքը բնութագրող չափանիշներն առավել սպառիչ ներկայացված են *Բարբարան, Մեսսեզեն և Խաբարդոն* գործում: Եվրոպական դատարանը գտնում է, որ քրեական դատավարությունում դատարանը չպետք է գործի քննությունն իրականացնի այն համոզմամբ կամ ենթադրությամբ, որ մեղադրյալը կատարել է հանրորեն վտանգավոր այն արարքը, որի մեջ նրան մեղադրում են, և ապացուցման պարտականությունն ընկած է մեղադրանքի կողմի վրա, իսկ ցանկացած

կասկածանք մեկնաբանվում է հոգուտ մեղադրյալի: Դրանից նաև հետևում է, որ մեղադրանքի կողմը պետք է մեղադրյալին իրազեկի նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, որպեսզի վերջինս համապատասխանաբար կարողանա նախապատրաստվել և իրականացնել իր պաշտպանությունը, ինչպես նաև այն պետք է նրան դատապարտելու համար ներկայացնի բավարար ապացույցներ (տե՛ս Judgement of ECHR of 6 December 1988 Barbara, Messege and Jabardo v. Spain. Para. 77// www.echr.coe.int., Application H 5124/71, Xv. Unitad Kingdom, 42 Coil 135):

Եվրոպական դատարանը, արդար դատական քննության իրավունքից ելնելով, դատարանին արգելում է իրականացնել գործի քննություն անձի մեղավորության վերաբերյալ նախնական համոզմամբ կամ ենթադրությամբ: Դատարանի կայացրած ցանկացած որոշում կամ գործողություն չպետք է հիմք տա ենթադրելու, որ դատարանը ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ արդեն ունի կանխակալ մոտեցում:

Դատական քննության նախապատրաստման ընթացքում դատարանի կողմից կայացվող որոշումները և կատարվող գործողությունները չեն հանգեցնում անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման: Կարծում ենք, որ նույնը չենք կարող ասել դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու սահմանների օրենսդրական կարգավորման մասին:

Եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի խախտում է համարում այն դեպքը, երբ մինչև օրենքով սահմանված կարգով մեղադրյալի մեղավորությունն ապացուցելը, մասնավորապես առանց նրան պաշտպանության իրավունք վերապահելու, նրան վերաբերող դատավարական որոշումն արտահայտում է այն կարծիքը, որ նա մեղավոր է: Դա հնարավոր է նաև որևէ ձևական որոշման բացակայության դեպքում, երբ կան հիմքեր ենթադրելու, որ դատարանը մեղադրյալին համարում է մեղավոր:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ անձը պետք է մեղավոր ճանաչվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդար և հրապարակային դատական քննության արդյունքում: Պետական իշխանության բոլոր ներկայացուցիչները պարտավոր են ձեռնպահ մնալ դատական քննության ելքը կանխորոշելուց: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նման դիրքորոշում արտահայտել է *Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի և Ադոլֆին ընդդեմ Ավստրիայի* գործերով (տե՛ս Minelli v. Switzerland, 25 March 1983, Series A no. 62; *Allenet de Ribemont v. France*, 10 February 1995, § 35, Series A no. 308; *Adolf c. Autriche*, 26 mars 1982, série A no 49):

Այսպես, *Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի* գործով Եվրոպական դատարանն առաջին անգամ արձանագրեց Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում: Տվյալ գործով դիմողը զրպարտության վերաբերյալ մասնավոր

մեղադրանքի գործով պատասխանող էր: Չնայած քրեական վարույթի հայցը դադարեցվել էր վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, սակայն դատարանը որոշեց, որ դիմողը պետք է կրի մասնավոր մեղադրողի կրած որոշակի դատական ծախսերի հատուցում:

Ազգային դատարանը որոշում կայացրեց հատուցել ոչ միայն դատական ծախսերի մի մասը, այլև ենթադրյալ տուժողների կրած վնասները, նշելով, որ եթե չլիներ ժամանակի գործոնը, ապա դիմողն ըստ էության կդատապարտվեր: Այսպիսով՝ տվյալ դեպքում առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ ազգային դատարանի որոշումն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը գործում է քրեական դատավարության ողջ ընթացքում՝ անկախ մեղադրանքի ելքից և ոչ միայն մեղադրանքն ըստ էության քննելիս: Ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ ցանկացած դատողություն, որն արվում է դատավորի կողմից մինչև դատական քննության ավարտը կամ մեղադրյալին արդարացնելիս, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում:

Անմեղության կանխավարկածը խախտելու կամ պահպանելու հարցը սերտորեն կապված է մեղադրյալին առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու հնարավորություն վերապահելու հետ: Դրա համար անձին առաջադրվում է մեղադրանք, այսինքն՝ անձը պաշտոնապես իրազեկվում է իր կողմից քրեորեն պատժելի արարքը կատարելու ենթադրության առկայության մասին:

Նշված գործերով Եվրոպական դատարանի որոշումների վերլուծությունից հետևում է, որ.

1. Դատարանն իրավունք չունի մինչև դատական քննության ավարտն իր որոշմամբ կամ որևէ այլ ձևով կարծիք արտահայտելու մեղադրյալի մեղավորության վերաբերյալ:

2. Անմեղության կանխավարկածի սկզբունքը գործում է քրեական դատավարության բոլոր փուլերում:

3. Պաշտպանության իրավունքի խախտումը դիտվում է որպես մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է պահպանվի ոչ միայն դատական քննության ընթացքում, այլև արդարացման դատավճիռ կայացնելուց հետո: Եվրոպական դատարանը *Սեկանին ընդդեմ Ավստրիայի* գործով անմեղության կանխավարկածի խախտում համարեց ազգային դատարանի կողմից արդարացման դատավճիռ կայացնելուց հետո անձի մեղավորության վերաբերյալ կարծիք արտահայտելը: Տվյալ դեպքում դիմողը, որն արդարացվել էր սպանության մեջ մեղադրանքի գործով, միջնորդություն է հարուցում նախնական կալանքի տակ գտնվելու համար վնասի հատուցում ստանալու մասին: Ազգային դատարանը մեր-

Ժել է միջնորդությունը՝ վնասի հատուցման վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ հանցագործության կատարման վերաբերյալ կասկածները հնարավոր չեն դավ փարատել, իսկ երդվյալները որոշեցին նրան արդարացնել միայն չփարատված կասկածները նրա օգտին մեկնաբանելու հիման վրա: Ազգային դատարանը, մերժելով դիմողի միջնորդությունը, հենվում է ազգային օրենսդրության այն դրույթի վրա, որ անձին արդարացնելիս վնասի հատուցման իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, երբ հանցագործության կատարման մեջ անձի նկատմամբ կասկածը հանվում է:

Նշված գործով Եվրոպական դատարանի դիրքորոշումը հետևյալն է. ազգային դատարանները չպետք է կասկածեն անձի մեղավորության վերաբերյալ, եթե արդեն կայացվել է արդարացման դատավճիռ: Այսինքն՝ քրեական գործով կասկածանք կարող է լինել մինչև գործով վերջնական որոշման կայացումը, իսկ արդարացման դատավճիռ կայացնելուց հետո չի կարելի անձի անմեղությունը դնել կասկածի տակ:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը սերտորեն կապված է նաև քրեական գործի կարճման հետ: Այդ կապակցությամբ ուշագրավ է Եվրոպական դատարանի պրակտիկան՝ կապված քրեական գործերի կարճման հիմքերի հետ:

Անմեղության կանխավարկածի և ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու ինստիտուտի համապատասխանության անկյունաքարը, որը տարակարծությունների պատճառ է դարձել, նախնական քննության փուլում անձի մեղավորության որոշման հարցն է:

Այդ կապակցությամբ Եվրոպական դատարանը *Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի* գործով եկավ այն եզրակացության, որ արարքի ոչ մեծ վտանգավորության հիմքով քրեական գործի կարճումը համապատասխանում է անմեղության կանխավարկածին: Խնդրի էությունն այն է, որ շրջանային դատարանը, որը կարճել էր գործը, իր որոշման մեջ մատնանշում է դիմողի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելու մասին, ինչը, ըստ դիմողի, հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասին: Ավստրիայի Գերագույն դատարանը, ստուգելով նշված ակտի օրինականությունը, ընդգծեց, որ փաստարկման համար ոչ հաջող ձևակերպման ընտրությունը չի կարող այդ փաստարկումը զրկել կոնկրետ նշանակությունից, որն ի նկատի ունեւր, և դիմող անձի համար այն որևէ բացասական հետևանքներ չի կարող առաջացնել:

Եվրոպական դատարանը գտնում է, որ օկրուգային դատարանի որոշումը անհրաժեշտ է ընկալել Գերագույն դատարանի որոշման հետ զուգակցված և նրա լույսի ներքո: Եվրոպական դատարանը եզրակացրեց, որ տվյալ դեպքում չկա Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում (տե՛ս Adolff v. Austria, para. 16):

Անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է պահպանվի ոչ միայն դատարանի, այլև պետական մյուս մարմինների կողմից: Ալեն դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը նշեց հետևյալը. եթե դիմողին առաջադրվել է քրեական մեղադրանք, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի է ոչ միայն դատարանների, այլև մյուս պետական մարմինների պաշտոնատար անձանց համար:

Այսպես, 1976 թ. դեկտեմբերի 24-ին սպանվել է պառլամենտի պատգամավոր և նախկին նախարար պարոն Ժան դե Բրոլին: Ֆրանսիայի ՆԳՆ քննության բաժնի տնօրենը և քրեական ոստիկանության տնօրենը անցկացրին մամլո ասուլիս, որտեղ հայտարարեցին Ալեն դե Ռիբեմոնի անունը՝ որպես տվյալ հանցագործության հանցակից: Հետագայում քրեական գործը Ալեն դե Ռիբեմոնի նկատմամբ կարճվում է, և նա պահանջում է նյութական և բարոյական վնասի հատուցում:

Եվրոպական դատարանում տվյալ գործը քննելիս ֆրանսիական կառավարությունը հենվում էր այն բանի վրա, որ հայտարարությունը վնաս չի հասցրել անձի անմեղության կանխավարկածի իրավունքին, քանի որ այն կրել է տեղեկատվական բնույթ և չի կաշկանդել դատարանին, բացի դրանից՝ բոլոր պնդումները կարող էին հերքվել հետագա քննության ընթացքում:

Եվրոպական դատարանը չհամաձայնվեց նման մեկնաբանմանը, քանի որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության համոզում են հասարակությանը հավատալ, որ դիմողը մեղավոր է՝ նախքան դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները հետազոտելը: Տվյալ գործով Եվրոպական դատարանի հետևությունն այն է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը: Եվրոպական դատարանի որոշումից հետևում է, որ ոստիկանության, ինչպես նաև մյուս գերատեսչությունների պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվության միջոցներում արվող հայտարարությունները, որոնցում մինչև դատական քննությունը պնդում են որոշակի անձի հանցագործ լինելու մասին, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում:

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը պաշտոնատար անձանց իրավունք է տալիս հանրությանը տեղեկացնելու քննության ընթացքի մասին, նշելու, որ այս կամ այն անձը, ճիշտ է, կասկածվում կամ մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, բայց նրա մասնակցությունը հանցագործության կատարմանը պետք է հաստատի դատարանը: Տվյալ դեպքում արդեն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում չկա:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում անմեղության կանխավարկածի խախտումը զանգվածային լրատվական միջոցների կողմից: Արդյո՞ք անձի մեղավորության մասին մամուլի և լրատվության այլ միջոցների հրապարակումները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե՞ ոչ: Այս հարցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը միասնական չէ: Այսպես, Եվրո-

պական դատարանի նախադեպերից մեկում՝ *Սանդի Թայման ընդդեմ Միացյալ Թագավորության* նշված է. «Հանձնաժողովը նաև հնարավոր համարեց, որ մեղադրյալի դեմ որոշ անբարենպաստ հրապարակումներ, որ գրվում են մինչև դատական քննությունը, օրինակ՝ ի դեմս մամուլում անողոք արշավի, վնասում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զանգվածային լրատվության միջոցների նմանօրինակ արշավներն ազդել են դատավորների կամ երդվյալների վրա այն աստիճան, որ նրանք մոռացել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանության մասին»:

Նշենք, որ առաջարկվող բանաձևն ունի գնահատողական բնույթ և գործնականում, պրոֆեսիոնալ դատավորների առումով, հնարավոր չէ պարզել անմեղության կանխավարկածի պահանջների մոռացության խնդիրը: Ինչպես անմեղության կանխավարկածը, այնպես էլ կարծիքի արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից են, և մեկը մյուսի նկատմամբ որևէ առավելություն չունի: Դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Արգելել մամուլի հրապարակումը վերը նշված խնդրի վերաբերյալ այն հիմքով, որ դրանք դատավորի մոտ կարծիք են ձևավորում, կնշանակի ամրագրել դատավորի կողմից իր պարտականությունները չկատարելու կանխավարկածն այն դեպքում, երբ ամենաբարձր օրենքով ամրագրված է դատավորի անկախության և միայն օրենքին ենթարկվելու դրույթը:

Ինչպես արդեն նշել ենք, *Սլեն դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի* գործով Եվրոպական դատարանը, անդրադառնալով կարծիքի արտահայտման ազատության և անմեղության կանխավարկածի փոխհարաբերությանը, նշել է. «Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվող անձնական կարծիքի արտահայտման ազատությունը տարածվում է նաև տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության վրա: Հետևաբար, 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող խանգարել իշխանություններին՝ հասարակությանը տեղեկացնելու կատարվող քրեական հետաքննությունների մասին, սակայն այն պահանջում է, որ իշխանությունները դա անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը»:

Դրա հետ մեկտեղ Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ մասը բացառում է ազգային օրենսդրությունում անմեղության ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնող իրավական կամ փաստական կանխավարկածների գոյության հնարավորությունը: Սակայն ցանկացած դրույթ, որը բնորոշում է անմեղության ապացուցման բեռի տեղափոխումը կամ հնարավոր է դարձնում այնպիսի կանխավարկածի կիրառումը, որը գործում է մեղադրյալի դեմ, պետք է սահմանափակվի «ողջամիտ սահմաններով, որոնք հաշվի են առնում մեղադրյալի համար խիստ կարևոր հանգամանքները, և որոնք ապահովում են նրա

պաշտպանության իրավունքը» (տե՛ս Salabiaku v. France, Judgement of 07 October 1988):

Անմեղության կանխավարկածի կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրանքի կողմի վրա: Ապացուցման բեռի բաշխման տեսանկյունից ուշադրության է արժանի Եվրոպական դատարանի պրակտիկան, մասնավորապես *Փավ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի* գործով, որտեղ կասկածյալը ձերբակալվել էր Ֆրանսիայի սահմանին թմրամիջոց տեղափոխելիս: Ֆրանսիական օրենսդրությունը սահմանում է, որ արգելված ապրանքներ տեղափոխելը, որոնց շարքի մեջ է մտնում նաև հերոինը, համարվում է անօրինական, եթե այդ ապրանքը տեղափոխող անձը չի ապացուցում հակառակը, օրինակ՝ ներկայացնում է արդարացնող բավարար ապացույցներ կամ ապացուցում, որ գործողությունը կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կամ սխալի հետևանք է, որից խուսափելն անհնար էր: Նշված գործում պաշտպանության կողմը չի ներկայացրել արդարացնող ապացույցներ, իսկ մեղադրյալը հրաժարվել է տալ որևէ բացատրություն: Եվրոպական դատարանը, քննելով դիմողի բողոքը, ընդունել է, որ անթույլատրելի ոչինչ չկա այն ենթադրությունում, թե անձը, որ տիրապետում է ընդհանուր առմամբ արգելված որևէ բանի, պարտավոր է բավարար չափով բացատրել այդ փաստը, հակառակ դեպքում նա կճանաչվի մեղավոր:

Անմեղության կանխավարկածին Եվրոպական դատարանն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության դեմ կայացված երկու վճիռներով:

Մասնավորապես, *Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 34334/04), դիմումատուն բողոքում էր, որ վերաքննիչ դատարանում իրեն մետաղյա ճաղավանդակի մեջ պահելը խախտում է կողմերի հավասարության և անմեղության կանխավարկածի սկզբունքները: Մույն գործով դատարանը գտավ, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտված կլինի այն դեպքում, եթե նախքան մեղավորությունն օրենքի հիման վրա ապացուցված լինելը դատարանը կարծիք հայտնի քրեական գործով մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ: Բավարար է անգամ, որ պաշտոնական որոշման բացակայության պարագայում դատարանի դատողություններից երևա, որ այն մեղադրյալին մեղավոր է համարում (Minelli v. Switzerland):

Դատարանը նշում է, որ քրեական դատարանի առջև մեղադրյալի «ապակյա վանդակի» հայտնվելու վերաբերյալ գործով Հանձնաժողովը չգտավ արդար դատաքննության կամ անմեղության կանխավարկածի խախտում: Այդ գործով հանձնաժողովը նշեց, որ դա մշտական անվտանգության պահպանման միջոց էր, որն օգտագործվում էր այլ քրեական գործերի ժամանակ, բացի այդ՝ մեղադրյալը հնարավորություն ուներ խորհրդապահական կարգով շփվելու իր փաստաբանի հետ:

Սույն գործով Դատարանը նշեց, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից նման կարգը կիրառելի է եղել քննված բոլոր քրեական գործերի քննության ժամանակ:

Սակայն Եվրոպական դատարանը դատական քննության ընթացքում ճաղավանդակի հետևում պահելը դիտել է որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (Svinarenko and Slyadnev v. Russia): Սակայն նույն այս վճռով դատարանն անուղղակի ձևով նաև նշել է, որ մետաղյա ճաղավանդակի առկայությունը խախտում է նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռով (գանգատ թիվ 40094/05) ևս դատարանն անդրադարձել է անմեղության կանխավարկածի սկզբունքին: Ներպետական վարույթի ընթացքում, մասնավորապես քրեական հետապնդման մարմինները Վիրաբյանի նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ նշել էին. «Հաշվի առնելով այն փաստը, որ հանցանքի կատարման պահին [դիմումատուն] ևս կրել է իր առողջության համար միջին ծանրության վնաս, մասնավորապես նրա ամորձին վնասվել է, ենթարկվել վիրահատության և հեռացվել, ինչն անդառնալի է, և ըստ էության՝ զրկանքներ կրելով՝ նա փոխհատուցել է իր մեղքը և այդպիսի հանգամանքներում նպատակահարմար չէ նրա դեմ իրականացնել քրեական հետապնդում, ես որոշել եմ ... դադարեցնել հետապնդումը [դիմումատուի] նկատմամբ...»:

Դատարանը նշեց, որ դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական վարույթը կարճվել է նախադատական փուլում դատախազի 2004 թ. օգոստոսի 30-ի որոշմամբ՝ ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի նախկին 2-րդ կետի 2-րդ մասով սահմանված հիմքով, որով թույլատրվում էր վարույթի կարճում այն դեպքում, եթե դատախազի կարծիքով մեղադրյալը քավել է կատարածը տուժելու և այլ զրկանքների միջոցով, որոնց նա ենթարկվել է կատարածի առումով: Դատախազի որոշումը թողնվել է անփոփոխ ներպետական դատարանների կողմից:

Հաշվի առնելով դատախազի 2004 թ. օգոստոսի 30-ի որոշումը՝ Դատարանը նշեց, որ այս որոշումը ձևակերպվել է այնպես, որ կասկած չի առաջացել այն առումով, որ դատախազի կարծիքով դիմումատուն հանցանք է կատարել: Մասնավորապես, դատախազը սկզբում ամփոփ տեսքով հավաքել է գործի փաստական հանգամանքները, ինչպես նշված են դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի մեջ, և ներկայացրել այնպես, որ դրանով առաջարկվում էր հաստատել, որ ոստիկանը գործել է ինքնապաշտպանության նկատառումներով, իսկ դիմումատուն կանխամտածված վնասվածքներ էր հասցրել նրան: Այնուհետև դատախազը եզրակացրել է, որ նպատակահարմար չէր քրեական հետապնդում իրականացնել դիմումատուի նկատմամբ, քանի որ կատարվածի պատճառով նա նույնպես վնասվել է: Սա նշելով՝ դատախազը հատուկ օգտագործել է «Հանցանքը

կատարելու ժամանակ [դիմումատուն] նույնպես վնաս է ստացել» և «զրկանքների միջոցով [դիմումատուն] քավել է իր մեղքը» նախադասությունները:

Թեմա 2. Լռելու իրավունք և ապացուցման պարտականություն

Թեև լռելու իրավունքն ուղղակիորեն նախատեսված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում մեղադրյալի լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները դիտվում են որպես արդարացի դատական քննության իրավունքի և անմեղության կանխավարկածի բաղադրիչներ (6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ թեև լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չեն, այնուամենայնիվ դիտվում են որպես 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հասկացության հիմքում ընկած համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափորոշիչներ (*տե՛ս Funke v. France, 25 February 1993, § 44, Series A no. 256-A*): Դրանց նշանակությունը, *inter alia*, մեղադրյալի պաշտպանությունն է պետական իշխանության անհիմն հարկադրանքից, ինչը կօգնի խուսափել դատական սխալներից և կնպաստի 6-րդ հոդվածով նախանշված նպատակների իրագործմանը: Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, մասնավորապես ենթադրում է, որ քրեական հետապնդման մարմինները չպետք է օգտագործեն մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի կիրառման կամ ճնշման արդյունքում ձեռք բերված ապացույցները: Այս առումով նշված իրավունքը սերտորեն կապված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավարկածի հետ: Որպես կանոն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից ցուցմունք տալու հարկադրանք է դիտվում քրեական սանկցիաների կիրառումը կամ կիրառման սպառնալիքն այն անձի նկատմամբ, ով հրաժարվում է վարույթն իրականացնող մարմին տեղեկություններ հաղորդել այն հանցագործության կապակցությամբ, որի կատարման մեջ վերջինս կասկածվում կամ մեղադրվում է: Ընդ որում՝ սանկցիայի բնույթը կարող է տարբեր լինել՝ տուգանք (*տե՛ս և տե՛ս Funke v. France, 25 February 1993, § 44, Series A no. 256-A*), ազատազրկում (*տե՛ս և Heaney and McGuinness v. Ireland, no. 34720/97, §47-56, ECHR 2000-XII*): Ցուցմունք ստանալու նպատակով ուղղակի ֆիզիկական կամ հոգեբանական ներազդեցությունը որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է դիտվել որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (խոշտանգումների արգելում):

Մաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել, որ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի կարող ողջամտորեն սահմանափակվել միայն իրավախախտման կատարումն ընդունելու վերաբերյալ կամ մեղադրական ցուցմունքներով: Հարկադրանքի արդյունքում ստացված ցուցմունքները, որոնք առաջին հայացքից չեն դիտարկվում որպես մեղադրական ապացույցներ կամ պարզապես դիտողություններ կամ փաստերի մասին տվյալներ են, քրեական դատավարության ընթացքում կարող են օգտագործվել մեղադրական նպատակներով, օրինակ՝ մեղադրյալի այլ հայտարարություններին հակազդելու, դատարանում նրա տված ցուցմունքը կասկածի տակ դնելու կամ այլ եղանակով վերջինիս նկատմամբ վստահությունը խաթարելու նպատակով: Ուստի դատարանի կարծիքով, այս համատեքստում էականը դատական քննության ընթացքում հարկադրական եղանակով ստացված ապացույցների օգտագործման անթույլատրելիությունն է (տե՛ս *Saunders v. the United Kingdom*, no. 19178/91, §68):

Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է համարել դիմումատուին՝ արտասահմանյան բանկային հաշիվներից քաղվածներ տրամադրելուն մաքսային մարմինների կողմից հարկադրելը: Քանի որ պրն Ֆունկեն չի ներկայացրել պահանջվող բանկային փաստաթղթերը, մաքսային վարչությունը դիմել է Ստրասբուրգ քաղաքի ոստիկանական դատարան, որը պրն Ֆունկեին ենթարկել է տուգանքի: Դատարանն իր որոշման մեջ նշել է, որ մաքսային ծառայությունները որոշ փաստաթղթեր ստանալու նպատակով, որոնց գոյության մասին նրանք ենթադրել են, բայց լիակատար համոզվածություն չեն ունեցել, պրն Ֆունկեին մեղադրանք ներկայացնելու պրովոկացիայի են ենթարկել: Հնարավորություն չունենալով կամ չցանկանալով դրանք ստանալ որևէ այլ ճանապարհով՝ նրանք փորձել են դիմողին ստիպել՝ ներկայացնելու սեփական խախտման ապացույցներ: Մաքսային իրավունքի առանձնահատկությունները չեն կարող արդարացնել ցանկացած «մեղադրյալի» (6-րդ հոդվածի իմաստով) լռելու կամ ի հաստատումն իր մեղքի ցուցմունք չտալու իրավունքի խախտումը (տե՛ս *Funke v. France, judgment of 25 February 1993, Series A no. 256-A*):

Անձը պահպանում է լռելու իրավունքը անկախ իրեն վերագրվող հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից: Այս մոտեցումն է ընկած նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիմքում: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ անհրաժեշտ չի գտնում, հաշվի առնելով դատավարության ընթացքում հարցաքննությունների օգտագործման վերաբերյալ գնահատականները, վճիռ կայացնել այն մասին՝ արդյոք ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը կրում է բացարձակ բնույթ, թե դրանից շեղումները հատուկ հանգամանքներում կարող են արդարացվել: Ինչպես և հանձնաժողովը, նա ևս

գտնում է, որ 6-րդ հոդվածում առկա՝ արդարացիության պահանջները, ներառյալ՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, կիրառվում են քրեական դատավարության ժամանակ քրեորեն պատժելի բոլոր արարքների դեպքում՝ առանց ամենահասարակների և ամենաբարդերի միջև որևէ տարբերության: Չի կարելի հիմնվել հասարակական շահի վրա՝ ի արդարացումն արտադատական քննության ընթացքում հարկադրաբար ձեռք բերված պատասխանների օգտագործման, որը նպատակ ուներ մերկացնելու մեղադրյալին դատաքննության ընթացքում:

Չի կարելի բացառել, որ լռելու իրավունքից օգտվելն այն պայմաններում, երբ ակնհայտ էր կասկածյալի կամ մեղադրյալի բացատրության անհրաժեշտությունը, կարող է դատարանի կողմից հաշվի առնվել մեղադրանքի կողմի ապացույցները գնահատելիս: Այս հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանը նշել է. «Չի կարելի պահանջել, որ մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը դատարանը նրա մեղքը հաստատող ապացույցները գնահատելիս հաշվի չառնի: Այն հարցը՝ արդյոք ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքից օգտվելու դեպքում մեղադրյալի նկատմամբ անբարենպաստ կարծիք ձևավորելը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է, պետք է լուծվի գործի բոլոր փաստական հանգամանքների համատեքստում՝ հաշվի առնելով այն իրավիճակը, որի պայմաններում նման եզրահանգում է արվել, այն նշանակությանը, որը ներպետական դատարանները ապացույցները գնահատելիս տվել են այդ եզրահանգմանը և տվյալ իրավիճակին բնորոշ հարկադրանքի ծավալին: Միևնույն ժամանակ, քանի որ լռելու իրավունքը՝ որպես ինքնամերկացման դեմ արտոնություն, ընկած է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հիմքում, մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելն իր դեմ մեկնաբանելիս ազգային դատարանները պետք է հատուկ զգուշավորություն դրսևորեն: Այսինքն՝ դատարանը չի կարող անձին մեղավոր ճանաչել միայն այն բանի համար, որ վերջինս հրաժարվում է ցուցմունք տալուց: Միայն այն դեպքում, երբ մեղադրյալի դեմ ներկայացված ապացույցներն այնպիսին են, որ պահանջվում է վերջինիս բացատրությունը, ցուցմունք տալուց հրաժարվելը կարող է մեղադրյալի բացատրության բացակայության և նրա մեղավորության մասին եզրահանգման հիմք լինել: Սակայն, եթե մեղադրանքի կողմից ներկայացված ապացույցները բավարար չափով հիմնավոր չեն, ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող նրա մեղավորության մասին եզրահանգման պատճառ հանդիսանալ (*տե՛ս John Murray v. the United Kingdom, 8 February 1996, Reports of Judgments and Decisions 1996-I; Telfner v. Austria, no. 33501/96, § 15, 20 March 2001; Averill c. Royaume-Uni, no 36408/97, CEDH 2000-VI*):

Միրակ Սաքանյանի վերաբերյալ 2011 թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անմեղության կանխավարկածի սկզբունքին և ապացուցման պարտականությանը:

Նախաքննության մարմինը Ս. Սաքանյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2010 թ. հունվարի 19-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում վիճաբանության ընթացքում իր մոտ եղած դանակով դիտավորությամբ հարվածել է դատապարտյալ Հարություն Նարգիզյանի որովայնի շրջանին և վերջինիս առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ Ս. Սաքանյանի կողմից Հ. Նարգիզյանին մարմնական վնասվածքը դիտավորությամբ պատճառած լինելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց գործով ձեռք չի բերվել, գտել է, որ Ս. Սաքանյանի արարքում առկա է անզգուշությամբ մարմնական վնասվածք պատճառելու հանցակազմը, և այս արարքի համար էլ նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության:

Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա են հետևյալ ձևակերպումները. « (...) մեղքի ձևի գնահատումը իրավական որակման խնդիր է, այլ ոչ թե դատաբժշկական փորձագետի գնահատման, բացի այդ՝ նման եզրակացությունը դուրս է նաև վերջինիս իրավասության սահմաններից:

(...) նախաքննության մարմինը մեղադրանքի հիմքում դրել է նաև ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի աշխատակից Մամիկոն Ադամյանի ցուցմունքն այն մասին, որ դատապարտյալներ Միրակ Սաքանյանը և Հարություն Նարգիզյանը վիճաբանել են, սակայն պատճառներն ինքը պարզել չի կարողացել: Վկան նույն հանգամանքը պնդեց նաև դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներով՝ որևէ կերպ չմատնանշելով իր հայտնած տեղեկության ստացման աղբյուրը, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել անհայտ կամ դատական նիստում չբացահայտվող աղբյուրից:

(...)

Նախաքննության մարմինը, ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի հաղորդման բովանդակության մեջ պարունակվող՝ «ըստ ստացված տեղեկությունների՝ դատապարտյալներ Միրակ Սաքանյանի և Հարություն Նարգիզյանի միջև միջադեպը տեղի է ունեցել կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճի և պարտք ու պահանջի հետևանքով...» արտահայտությունը «օպերատիվ տեղեկատվություն» դիտելով, դրել է մեղադրանքի հիմքում: Սակայն, միննույն ժամանակ, նման տեղեկատվության տիրապետման պայմաններում նախաքննության մարմինը չի

պարզել և չի հիմնավորել կենցաղային հարցերի, պարտք ու պահանջի կամ վեճի բնույթը և առհասարակ դրա առկայության կամ բացակայության փաստը կամ ընդհանրապես դրա իսկությունը:

Վճռաբեկ բողոք է բերել մեղադրողը՝ փաստելով, որ Վերաքննիչ դատարանը ժխտողական վերաբերմունք է դրսևորել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալների նկատմամբ: Մինչդեռ, ըստ բողոք բերած անձի, քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն Վերաքննիչ դատարանը կարող էր դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները:

Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք դատարանը պարտավոր էր սույն գործով քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տվյալների տեղեկատվության աղբյուրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ դրանք որպես ապացույց չհամարելու փոխարեն դատական գործողությունների միջոցով ճշտել նշված փաստական հանգամանքների աղբյուրները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել քրեական դատավարությունում դատարանի կարգավիճակի և ապացուցման պարտականության հարցերը: Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը դատական քննության փուլում ապացուցման գործունեության հիմքում դրել է ոչ թե յուրաքանչյուր քրեական գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտադիր պայմանը, այլ մրցակցության և կողմերի իրավահավասարության ապահովման պահանջը, որը համարվում է արդարացի դատական ակտ կայացնելու գլխավոր պայմանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ մրցակցությունը և ապացուցման գործընթացում դատարանի ակտիվությունը չեն հակասում միմյանց, սակայն կարևոր է հստակ որոշել դատական ակտիվության սահմանները և նպատակը, որպեսզի թույլ չտրվի դատարանին ներքաշվելու մեղադրանքի կամ պաշտպանության կողմին օգնելու, մեղադրյալի մեղքի ապացուցման կամ հերքման գործին:

Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի վերաբերյալ գործով 2011 թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ նույնպես Վճռաբեկ դատարանն անդրադարձել է անմեղության կանխավարկածի սկզբունքին:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն էր. գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանը արդյո՞ք պարտավոր է որոշում կայացնել գործը մեղադրողին վերադարձնելու

մասին՝ առաջարկելով փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը, եթե պարզում է, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից:

Անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի: Ուստի դատարանը, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահը, իր գործողություններով, այդ թվում՝ որոշումներով, որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանը, պարզելով, որ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից, իրավասու չէ որոշում կայացնելու գործը մեղադրողին վերադարձնելու մասին՝ առաջարկելով վերջինիս փոփոխել կամ լրացնել առաջադրված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանի կարծիքով, գործը դատական քննության նախապատրաստելիս առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու առաջարկով գործը մեղադրողին վերադարձնելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի, ըստ էության, լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում: Ուստի, եթե առաջադրված մեղադրանքը փոփոխվի այս ինստիտուտի կիրարկմամբ և արարքին դատարանի նախաձեռնությամբ տրված նոր որակմամբ մեղադրական դատավճիռ կայացվի, ապա դատապարտյալն օբյեկտիվ հիմքեր կունենա պնդելու, որ գործը մեղադրողին վերադարձնելու պահից (նախքան դատավճռի կայացումը) դատարանն իր նկատմամբ որոշակի նախատրամադրվածություն է ունեցել:

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:

2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան: Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիսաբեթ Սոուրբեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը լռելու իրավունքի եվրոպական չափանիշների լույսի ներքո, «Պետություն և իրավունք» N 3(41), Երևան, 2008, 23-28 էջեր:
5. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:
10. Эндру Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
11. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.
12. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, –М., 2001.

ԴԱՍ 7. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Թեմա 1. Առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացվելու և դրանից պաշտպանվելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունք

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆում թվարկված իրավունքները ընդհանուր առմամբ արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ են (տե՛ս

Colozza v. Italy, 12 February 1985, § 26, Series A no. 89): Այս առումով 2-րդ պարագրաֆում առկա թվարկումը սպառիչ չէ, և եթե անգամ բավարարվել են անձի պաշտպանության իրավունքի իրացմանն ուղղված բոլոր պահանջները, այնուամենայնիվ դատավարությունն ընդհանուր առմամբ կարող է ոչ արդարացի համարվել:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը և մասնավորապես դրա 3-րդ պարագրաֆը կիրառելի են ոչ միայն դատական քննության փուլերի, այլ նաև մինչդատական վարույթի նկատմամբ, քանի որ 3-րդ պարագրաֆի պահանջների խախտումը մինչև գործը դատարան ուղարկելը կարող է վտանգել արդար քննությունը (տե՛ս *Berliński Berlinskiv. Poland, nos. 27715/95 and 30209/96, §§ 75, 20 June 2002*):

6-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆը մեղադրյալին շնորհում է առաջադրված մեղադրանքի բնույթի և դրա առաջադրման պատճառների մասին անհապաղ և մանրամասն տեղեկացվելու իրավունք այն լեզվով, որին նա տիրապետում է: Այս իրավունքը, որը դիտվում է որպես արդարացի դատական քննության նախապայման (տե՛ս *Sadak and Others v. Turkey (no. 1), nos. 29900/96, 29901/96, 29902/96 and 29903/96, § 42, ECHR 2001-VIII*), անմիջականորեն առնչվում է 3 (բ) պարագրաֆում երաշխավորված իրավունքին, քանի որ մեղադրյալը բավարար ժամանակ և հնարավորություն պետք է ունենա իր պաշտպանությունը կազմակերպելու համար (տե՛ս *Mattochia v. Italy, no. 23969/94, §§ 62-72, ECHR 2000-IX*): Ինչպես դատարանը նշել է *Պելիսիերի* գործով վճռում, այս դրույթը ենթադրում է մեղադրյալի իրավունքը՝ տեղեկացվել ոչ միայն մեղադրանք առաջադրելու պատճառների, այն է՝ իր կողմից ենթադրաբար կատարված արարքի մասին, որոնց վրա հիմնվում է մեղադրանքը, այլ նաև նա պետք է տեղեկացվի այդ արարքին տրված իրավական գնահատականի մասին (տե՛ս *Pélissier and Sassi v. France [GC], no. 25444/94, § 67, ECHR 1999-II*): Մեղադրյալին տեղեկացնելու՝ քրեական հետապնդման մարմինների պարտականությունը չի կարող իրացված համարվել՝ պարզապես մեղադրանքի վերաբերյալ տեղեկությունները հասանելի դարձնելով, առանց դրա մասին կոնկրետ պաշտպանության կողմին տեղեկացնելու (տե՛ս *Mattochia v. Italy, no. 23969/94, § 65, ECHR 2000-IX*):

Հարցը, թե արդյոք մեղադրյալն առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացվել է անհապաղ, պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում առանձին՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Մեղադրյալին իր պաշտպանությունը կազմակերպելու համար քրեական հետապնդման մարմինները պարտավոր են քրեական հետապնդում հարուցելուց կամ մեղադրանք առաջադրելուց հետո անհապաղ տեղեկացնել առաջադրված մեղադրանքի մասին: Սակայն, պատշաճ պաշտպանության ապահովումն արդեն իսկ կարող է էական նշանակություն ունենալ մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացնելուն նախորդող փուլերում և անգամ կարող է ազդել այդ որոշման կայացման վրա, ուստի

պարագրաֆներ 3(a) –ից և 3(բ)-ից բխում է, որ մեղադրանք առաջադրելու մասին ձևական որոշումից առաջ անգամ, մեղադրյալն այնքանով, որքանով հնարավոր է պետք է տեղեկացվի իր դեմ առկա կասկածանքի մասին: Օրինակ՝ *S-ն ընդդեմ Ավստրիայի* գործով Դատարանը արձանագրեց Հոդված 6(1)-ի խախտում՝ կապակցված Հոդված 6-ի(3)-ի հետ, քանի որ շրջանային դատարանը պահանջել էր դիմումատուից լրացնել պաշտպան ունենալու մասին իր խնդրանքը, առանց վերջինիս տեղեկացնելու, որ նա կասկածվում է իր նախորդ խնդրանքում կեղծ հայտարարություն անելու համար: Արդյունքում դատարանը դիմումատուին տուգանել էր իր դատավարական իրավունքը չարաշահելու համար (*տե՛ս T v. Austria, no. 27783/95*):

3(a) պարագրաֆը սահմանում է, որ մեղադրյալին պետք է տրամադրվեն իրեն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ դետալային տեղեկություններ, սակայն նույն պարագրաֆը որևէ ձևական պահանջ չի ներկայացնում, թե ինչ եղանակով մեղադրյալին նման տեղեկություն պետք է հաղորդվի (*տե՛ս Kamasinski v. Austria, 19 December 1989, § 79, Series A no. 168*): Յուրաքանչյուր դեպքում այդ դետալների բովանդակությունը պայմանավորված է կոնկրետ գործի հանգամանքներով, սակայն հստակ է, որ տրամադրվող տեղեկությունները պետք է բավարար լինեն առաջադրված մեղադրանքն ամբողջ ծավալով հասկանալու համար, որը հնարավորություն կտա պատրաստվելու համապատասխան պաշտպանության (*տե՛ս Kyprianou v. Cyprus [GC], no. 73797/01, §§ 65-68, ECHR 2005-XIII*):

Դատավարության ընթացքում առաջադրված մեղադրանքի փոփոխությունը ուղղակի ազդեցություն է ունենում մեղադրյալի պաշտպանության վրա: Հետևաբար, մեղադրյալը պետք է տեղեկացվի, որ իրեն առաջադրված մեղադրանքը կարող է փոփոխվել (*տե՛ս Pélissier and Sassi v. France [GC], no. 25444/94, § 56, ECHR 1999-II*): Այն դեպքում, երբ մեղադրանքի փոփոխությունը վերաբերում է դրա այնպիսի տարրի, որը բնորոշ է սկզբնական մեղադրանքին, Դատարանն այն դիրքորոշումն է արտահայտել, որ մեղադրյալը, ենթադրվում է, որ պետք է տեղյակ լինի մեղադրանքի փոփոխման հնարավորությանը (*տե՛ս De Salvador Torres v. Spain, judgment of 24 October 1996, §§ 30-33 Reports 1996-V*):

«Իրեն հասկանալի լեզվով» հասկացությունը նշանակում է, որ եթե մեղադրյալը ոչ բավարար չափով է տիրապետում դատավարության լեզվին, ապա մեղադրանքին առնչվող տեղեկությունները նրան ներկայացվում են թարգմանաբար: Դատարանն այս դեպքում նախապատվությունը տալիս է գրավոր տեղեկացմանը: Դատարանը մասնավորապես նշել է, որ մեղադրյալին առնչվող մեղադրանքի մասին տեղեկությունները բանավոր կերպով դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին ներկայացնելը բավարար հիմք չէ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (*տե՛ս Kamasinski v. Austria, 19 December 1989, § 79, Series A no. 168*): Պարագրաֆ 3(b)-ն մեղադրյալին երաշխավորում է բավարար

ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Այն հարցը, թե արդյոք մեղադրյալին բավարար ժամանակ և հնարավորություններ է երաշխավորվել իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, պետք է գնահատվի ավելի ուշ՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որոնցում հայտնվել են մեղադրյալը և նրա պաշտպանը, ինչպես նաև գործի բոլոր հանգամանքները (տե՛ս *Öcalan v. Turkey*, 12 March 2003, § 167-169):

Եթե մեղադրյալը վստահում է կոնկրետ իրավաբանի, սակայն վերջինս համապատասխան ժամանակահատվածում զբաղված է և չի կարող իրավաբանական օգնություն ցուցաբերել մեղադրյալին, դատարանները որքան հնարավոր է, այս հանգամանքը պետք է հաշվի առնեն: Մյուս կողմից՝ մեղադրյալը նման պարագայում չի կարող ակնկալել, որ դատարանը 6-րդ հոդվածի խախտում կարձանագրի: Եթե այս կամ այն պատճառով մեղադրյալը փոխում է իր պաշտպանին, նոր պաշտպանին բավարար ժամանակ պետք է տրամադրվի գործի նյութերին ծանոթանալու համար (տե՛ս *Twalib v. Greece judgment of 9 June 1998, Reports 1998-IV, pp. 1427-28, § 40*): Ամեն դեպքում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի կարող արձանագրվել, եթե մեղադրյալի վարքագծի պատճառով է ինքը հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ իր պաշտպանը նշանակվել է դատական քննությունից անմիջապես առաջ (տե՛ս *X v. Austria*, no. 8251/78, (1980), § 166):

Եթե առկա է բողոքարկման հնարավորություն, ապա բողոք բերելու համար պետք է սահմանվի այնպիսի ժամանակահատված, որը բավարար կլինի դատական ակտին ծանոթանալու և որոշելու համար, թե բողոք պետք է բերվի, թե ոչ, իր հերթին, եթե բողոք է բերվել, ապա պետք է բավարար ժամանակ տրամադրվի դատական քննությանը նախապատրաստվելու համար (տե՛ս *Kremzow v. Austria*, 21 September 1993, § 48, Series A no. 268-B):

Մեղադրյալն իրավունք ունի իրեն արդարացնելու կամ պատիժը նվազեցնելու նպատակով իր տրամադրության տակ ունենալ այն բոլոր կարևոր նյութերը, որոնք հավաքվել են իշխանությունների կողմից (տե՛ս *Edwards v. the United Kingdom*, no. 13071/87, § 36, 16 December 1992): Բավարար հնարավորություններ ունենալու իրավունքի կարևոր բաղադրիչ է գործի նյութերը ստուգելու հնարավորության ընձեռումը (տե՛ս *X v. Austria*, no. 8251/78, (1980), § 155): Թեև 3(b) հոդվածը երաշխավորում է գործի նյութերին ծանոթանալու իրավունքը, սակայն 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրվի, եթե այս իրավունքը վերապահվի միայն պաշտպանին (տե՛ս *Kremzow v. Austria*, 21 September 1993, § 52, Series A no. 268-B):

Արթուր Մերոբյանի գործով վճռաբեկ դատարանի 2007 թ. մարտի 30-ի ՎԲ-46/07 գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) Թե՛ առաջին աստիճանի դատարանը, թե՛ վերաքննիչ

դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կիսախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կիսախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուկ «քրեաիրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայագուրկ է:

Տվյալ գործով, օրինակ, խոսքը վերաբերում էր մեղադրյալին երկու կամ երեք կրակոց մեղսագրելուն: Թեև պատշաճորեն հիմնավորվում էր երեք կրակոցի փաստը, սակայն, քանի որ Սերոբյանին մեղադրանք էր առաջադրվել երկու կրակոց արձակելու համար, ուստի վճռաբեկը գտավ, որ դատարանները չեն կարող հաստատված համարել երեք կրակոցի փաստը:

Թեմա 2. Մեղադրյալի՝ իրեն անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանելու իրավունքը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆի (c) կետը մեղադրյալին իրավունք է վերապահում պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Պակեյի գործով վճռում Դատարանը, մեկնաբանելով այս իրավունքը, նշել է, որ «անձը, ում դեմ մեղադրանք է ներկայացվել, որը չի ցանկանում իրեն անձամբ

պաշտպանել, պետք է հնարավորություն ունենա իր ընտրությամբ դիմելու իրավաբանական օգնության, եթե նա բավարար միջոցներ չունի նման օգնության համար դիմելու, նա իրավասու է ստանալու անվճար իրավաբանական օգնություն, եթե դա է պահանջում արդարադատության շահը» (տե՛ս *Pakelli v. Germany*, 25 April 1983, § 31, Series A no. 64):

Իրեն անձամբ պաշտպանելու իրավունք

Մեղադրյալի՝ իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը անմիջականորեն կապված է դատական քննությանը ներկա գտնվելու իրավունքի հետ (տե՛ս *Zana v. Turkey*, 25 November 1997, § 68, Reports of Judgments and Decisions 1997-VII), որը պահանջում է մեղադրյալին իրավունք վերապահել մասնակցելու առնվազն առաջին աստիճանի դատարանում գործի քննությանը: Ինչ վերաբերում է վերաքննությանն ու վճռաբեկությանը, ապա 6-րդ հոդվածը ոչ միշտ է երաշխավորում դատաքննությանը անձամբ ներկա գտնվելու իրավունքը (տե՛ս *Kremzow v. Austria*, 21 September 1993, § 58, Series A no. 268-B): Թեև իրեն անձամբ պաշտպանելու՝ մեղադրյալի իրավունքը ենթակա է որոշակի սահմանափակումների, այդ սահմանափակումները չեն կարող կատարվել այն աստիճանի, որ Կոնվենցիայով երաշխավորված այդ իրավունքը վերածեն պատրանքայինի (տե՛ս *Kremzow v. Austria*, 21 September 1993, § 58, Series A no. 268-B):

Իրավաբանական օգնություն և պաշտպան ընտրելու իրավունք

6-րդ հոդվածը երաշխավորում է, որ մեղադրյալն իրավունք ունի պաշտպանի ծառայություններից օգտվել արդեն իսկ ռստիկանական քննության առաջին փուլում, թեև այս իրավունքը, որը հստակ Կոնվենցիայում սահմանված չէ, կարող է սահմանափակվել ողջամիտ պատճառով (տե՛ս *Magee v. the United Kingdom*, no. 28135/95, § 41, ECHR 2000-VI): 2-րդ պարագրաֆում ամրագրված այս դրույթը ենթադրում է մեղադրյալի իրավունքը՝ զադտնապահական կարգով, առանց երրորդ անձի ներկայության հանդիպել իր պաշտպանի հետ: Առանց այս իրավունքի ապահովման պաշտպանության իրավունքը չի լինի արդյունավետ և պրակտիկ (տե՛ս *S v. Switzerland*, 28 November 1991, § 48):

Պաշտպանի խուզարկությունը կամ կալանավայրի վարչակազմի կողմից մեղադրյալի և իր պաշտպանի նամակագրության վերահսկումը, ընդհանուր առմամբ, համատեղելի չեն 6-րդ հոդվածի հետ: Սակայն, որոշ դեպքերում նման միջոցները կարող են արդարացված համարվել, մասնավորապես, երբ իշխանությունները ծանրակշիռ փաստարկներ ունեն, որ պաշտպանն ինքն է

չարաշահում իր իրավունքը կամ թույլ է տալիս, որ այն չարաշահվի (տե՛ս *Campbell and Fell, 28 June 1984, § 108-111*):

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իր ընտրությամբ պաշտպան ունենալու մեղադրյալի իրավունքը բացարձակ չէ: Այն սահմանափակված է այն դրույթներով, որոնք գործում են համապատասխան իրավական համակարգում: Մասնավորապես, *Քրոխասանտի* գործով վճռում դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ ազգային դատարանները, երբ պաշտպան են նշանակում, պետք է հաշվի առնեն մեղադրյալի ցանկությունը, սակայն այդ ցանկությունները կարող են հաշվի չառնվել, եթե դա է պահանջում արդարադատության շահը (տե՛ս *Croissant v. Germany, 25 September 1992, § 29, Series A no. 237-B*):

Գագիկ Միքայելյանի վերաբերյալ 2009 թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ անդրադարձել է ազատությունից զրկված անձի պաշտպանության իրավունքին:

Վճռաբեկ դատարանը մասնավորապես դիրքորոշում է հայտնել, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածով անձին ազատությունից զրկելու կառուցակարգը կարող է ընդգրկել որոշակի տևողությամբ սկզբնական փուլ, որի ընթացքում անձը կարող է որևէ դատավարական կարգավիճակ չունենալ՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդրության որոշակիությամբ:

Ձերբակալումը ներառում է նաև արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու կառուցակարգերը:

Բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

1. իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը,
2. հրավիրելու իր փաստաբանին,
3. լռելու:

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան: Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիաթեր Մոուրբեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:

5. Эндрю Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
6. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.
7. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, М, 2001.

ԴԱՍ 8. ՎԿԱՆԵՐԻՆ ԱՌԵՐԵՍ ՀԱՐՅԱՔՆՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:

Թեմա 1. «Վկա» հասկացության ինքնավար բնույթը: 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) պարագրաֆների առնչությամբ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ձևավորած հիմնական սկզբունքները

«Վկա» հասկացությունը անկախ ազգային իրավունքում դրան տրված նշանակությունից և դասակարգումից Կոնվենցիայի համակարգում ունի ինքնավար նշանակություն: Երբ վկայի ցուցմունքը կարող է դատապարտման էական հիմք լինել, այն կոդիտվի որպես մեղադրանքի ապացույց, որի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) պարագրաֆներով սահմանված երաշխիքները կիրառելի կլինեն (տե՛ս, օրինակ՝ *Kaste and Mathisen v. Norway, nos. 18885/04 and 21166/04, § 53, ECHR 2006-XIII; S. N. v. Sweden, no. 72596/01, § 45, ECHR 2002-V*):

«Վկա» հասկացության տակ ընկնում են.

- *միևնույն գործով այլ մեղադրյալը* (co-accused) (տե՛ս, օրինակ՝ *Trofimov v. Russia, no. 1111/02, § 37, 4 December 2008*),
- *տուժողը* (տե՛ս, օրինակ՝ *Vladimir Romanov v. Russia, no. 41461/02, § 97, 24 July 2008*),
- *փորձազետը* (տե՛ս, օրինակ՝ *Doorson v. the Netherlands, 26 March 1996, §§ 81-82, Reports of Judgments and Decisions 1996-II*):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) պարագրաֆները կիրառելի են նաև *փաստաթղթերի* նկատմամբ (տե՛ս *Mirilashvili v. Russia, no. 6293/04, §§ 158-159, 11 December 2008*):

Դատարանը մասնավորապես, նշել է. «Թեև երկու անձինք, որոնց ինքնությունը չի բացահայտվել, դատարանին ուղղակի ապացույց չեն ներկայացրել, Հոդված 6 § 1 և 3(դ) –ի նպատակների տեսանկյունից նրանք պետք է դիտարկվեն որպես վկաներ՝ հասկացություն, որը ենթակա է ինքնավար մեկնաբանման (տե՛ս *the Bönisch v. Austria, 6 May 1985, §§ 31-32*), քանի որ նրանց ցուցմունքը, ինչպես զեկուցվել է ոստիկանության կողմից, ներկայացվել է մարզային դատարան, որը այն հաշվի է առել (տե՛ս § 12-14)»:

Հոդված 6 § 1 և 3(դ) առնչությամբ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը ձևավորել է հետևյալ հիմնական սկզբունքները.

1. *Հոդված 6 § 3(դ)–ն պետք է դիտարկվի 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆով երաշխավորված արդար դատական քննության ընդհանուր հայեցակարգի համատեքստում:*

Դատարանը, որպես կանոն, այս հոդվածին առնչվող իր վճիռներում իրավական պատճառաբանությունները սկսում է՝ կրկնելով, որ Հոդված 6 § 3(դ)-ում պարունակվող երաշխիքները Հոդված 6 § 1-ում սահմանված արդարացի դատական քննության հիմնական հայեցակարգի սպեցիֆիկ ասպեկտներն են: Հոդված 6 § 3(դ)-ում թվարկված իրավունքների ոչ սպառիչ ցանկը արտացոլում է քրեական դատավարությունում արդար դատական քննության հասկացության կոնկրետ դրսևորումները: Մասնավորապես, Հոդված 6 § 3(դ)-ն արտացոլում է մեղադրանքի և պաշտպանության միջև զենքերի հավասարության կարևորությունը (հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները): Երբ դատարանը 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆի խախտման հարց է քննում, երբեք այն չի դիտարկում իր արդար դատական քննության սկզբունքից անջատ: Դա է պատճառը, որ Դատարանը, որպես կանոն, 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆի առնչվող բողոքը քննում է 6-րդ *հոդվածի 1-ին պարագրաֆի* հետ միասին: Այն գործերով, որտեղ Դատարանը գտնում է Հոդված 6 § 3(դ)-ի խախտում, միաժամանակ արձանագրում է, որ դիմումատուն զրկված է եղել արդարացի դատական քննության իրավունքից:

2. *Բոլոր ապացույցները պետք է պատշաճ դիտարկվեն մեղադրյալի ներկայությամբ հրապարակային դատական քննության ընթացքում՝ հաշվի առնելով մրցակցության սկզբունքը:*

Ընդհանուր կանոնը, որից հնարավոր են որոշ բացառություններ, այն է, որ վկաները պետք է հարցաքննվեն մրցակցային դատավարության պայմաններում: Դատարանը բազմիցս նշել է, որ վկային հարցաքննելու հնարավորության ընձեռումը մեղադրյալին արդար դատական քննության կարևոր տարրերից է (տե՛ս *Tarau v. Romania*, no. 3584/02, § 74, 24 February 2009; *Graviano v. Italy*, no. 10075/02, § 38, 10 February 2005):

Այս սկզբունքից հնարավոր է կատարել բացառություններ, սակայն այդ դեպքում չպետք է խախտվի պաշտպանության իրավունքը, որը, որպես կանոն, պահանջում է, որպեսզի մեղադրյալին ընձեռվի բավարար և պատշաճ հնարավորություն՝ ներկայացնելու առարկություն և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին, ինչպես վկայի ցուցմունք տալու ընթացքում, այնպես էլ դատավարության հետագա փուլերում (տե՛ս, օրինակ՝ *Delta v. France*, judgment of 19 December 1990, § 36, Series A no. 191-A):

3. *Վկաների խաչաձև հարցաքննությունը հնարավոր է ինչպես դատական քննության ընթացքում, այնպես էլ մինչդատական վարույթում:*

Որպես կանոն, Հոդված 6 §§ 1 և 3(դ)-ով երաշխավորված իրավունքները պահանջում են, որ մեղադրյալին հնարավորություն ընձեռնվի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկային և վիճարկելու նրա տված ցուցմունքը՝ ցուցմունք տալու պահին կամ հետագա փուլերում (տե՛ս, օրինակ՝ *Van Mechelen and Others v. the Netherlands*, judgment of 23 April 1997, *Reports of Judgments and Decisions 1997-III*, p. 711, § 51):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆը չի պահանջում, որ մեղադրյալը վկաների հետ առերեսվի մինչև դատական քննությունը՝ երաշխավորելով, որ այդ վկաները կարող են կրկին լսվել և հարցաքննվել պաշտպանության կողմից դատական քննության ընթացքում (տե՛ս *cf. Dec. 8414/78, X v. Federal Republic of Germany, D.R. 17 p. 231*):

4. *ՀԿոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆով սահմանված ընդհանուր կանոնից թույլատրելի են բացառություններ, սակայն պաշտպանության կողմի իրավունքները պետք է հարգվեն:*

Ցուցմունքների հրապարակումն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆին: Որոշակի իրավիճակներում կարող է առաջանալ մինչդատական վարույթում տրված ցուցմունքներին հղում կատարելու անհրաժեշտություն (տե՛ս *Lucà v. Italy*, no. 33354/96, § 40, ECHR 2001-II): Մասնավորապես, նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, եթե.

- վկան մահացել է (տե՛ս *Mika v. Sweden (dec.)*, no. 31243/06, § 37, 27 January 2009; *Ferrantelli and Santangelo v. Italy*, 7 August 1996, § 52, *Reports of Judgments and Decisions 1996-III*),

- օգտվել է լռելու իր իրավունքից (տես *Sofri and others v. Italy (dec.)*, no. 37235/97, *ECHR 2003- VIII*; *Craxi v. Italy (no.1)*, no. 34896/97, § 86, 5 December 2002),

- վկայի ներկայությունն ապահովելուն ուղղված իշխանությունների հիմնավոր ջանքերն անօգուտ են եղել (տե՛ս *Mirilashvili v. Russia*, no. 6293/04, §§ 217, 11 December 2008):

Եթե վկայի ներկայությունը մրցակցային դատավարությանը հարգելի պատճառներով անհնար է, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնված տվյալ վկայի կողմից մինչդատական վարույթում տրված ցուցմունքի վրա հղում կատարելը, եթե այդ ցուցմունքն ամրապնդված է այլ ապացույցներով (տե՛ս *Mirilashvili v. Russia*, no. 6293/04, §§ 217, 11 December 2008; *Scheper v. the Netherlands (dec.)*, no. 39209/02, 5 April 2005):

5. *Արդար քննության սկզբունքները պահանջում են, որ որոշ գործերով պաշտպանության կողմի և հարցաքննության կանչված վկաների ու հանցագործության զոհերի շահերը հավասարակշռվեն:*

Ճիշտ է, 6-րդ հոդվածը հստակորեն չի պահանջում, որպեսզի հաշվի առնվեն այն վկաների և հանցագործության զոհերի շահերը, որոնք կանչվել են հարցաքննության: Այնուամենայնիվ, նրանց կյանքը, ազատությունն ու անվտանգությունը կարող են առաջնային պլան մղվել և ընկնել 8-րդ հոդվածի ազդեցության ոլորտ: Վկաների և հանցագործության զոհերի նման շահերը պաշտպանվում են Կոնվենցիայի այլ հիմնարար դրույթներով, ինչը ենթադրում է, որ պայմանավորվող կողմերը պետք է իրենց քրեական դատավարությունն այնպես կազմակերպեն, որ այդ շահերն անարդարացիորեն չվտանգվեն: Ասվածի հիման վրա արդարացի դատական քննության իրավունքի սկզբունքները նաև պահանջում են, որ որոշակի գործերով պաշտպանության կողմի և հարցաքննության կանչված վկաների ու հանցագործության զոհերի շահերը հավասարակշռվեն (տե՛ս *Doorson v. the Netherlands*, 26 March 1996, §§ 81-82, *Reports of Judgments and Decisions 1996-II*):

6. *Քրեական դատավարությունն այնպես պետք է կազմակերպվի, որ անչափահաս վկաները հնարավորինս պաշտպանված լինեն:*

Դատարանն ընդունել է, որ սեռական ոտնձգությունների վերաբերյալ գործերով կոնկրետ միջոցներ պետք է ձեռնարկվեն հանցագործության զոհերին

պաշտպանելու նպատակով. այն հաշվով, որ նման միջոցները պետք է զուգակցվեն պաշտպանության կողմի իրավունքների արդյունավետ և համարժեք իրականացմամբ:

Հաշվի առնելով սեռական հանցագործությունների առանձնահատկությունները՝ չի կարող այնպիսի մեկնաբանություն տրվել, որ 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆը պահանջում է, որպեսզի բոլոր գործերով հարցադրումները խաչաձև հարցաքննության կամ այլ միջոցներով առաջադրվեն ուղղակիորեն մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից (տե՛ս *S. N. v. Sweden, no. 72596/01, § 52, ECHR 2002-V; W. S. v. Poland, no. 21508/02, § 55, 19 June 2007*):

Մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա հետևելու հարցաքննվող վկայի վարքագծին (օրինակ՝ տեսաձայնագրությամբ) և վիճարկելու վկայի անձի և ցուցմունքի արժանահավատությունը՝ վերջինիս հարցեր ուղղելու միջոցով (տե՛ս *Bocos-Cuesta v. the Netherlands, no. 54789/00, § 71, 10 November 2005; Accardi and Others v. Italy, (dec.), no. 30598/02, ECHR 2005*):

Թեմա 2. «Միակ և որոշիչ» ապացույց լինելու թեստն ըստ ՄԻԵԿ նախադեպային իրավունքի

Պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումը անհամահունչ կլինի 6-րդ *հոդվածի* հետ այն դեպքում, երբ անձի դատապարտումը հիմնվի միայն և որոշիչ կերպով այն վկաների ցուցմունքի վրա, ում մեղադրյալը հարցաքննելու հնարավորություն չի ունեցել մինչդատական վարույթի ընթացքում կամ դատարանում:

Այս սկզբունքն առաջին անգամ առաջ քաշվեց Դատարանի կողմից *Դոբունի* վճռում 1996 թ., այնուհետև հստակեցվեց *A. M. v. Italy* գործով վճռում 1999 թ. և հետագայում իր կիրառումը ստացավ բազմաթիվ վճիռներում (տե՛ս այլոց թվում *Melnikov v. Russia, no. 23610/03, § 65, 14 January 2009; Tsotsos v. Greece, no. 25109/07, § 33, 30 April 2009; Vladimir Romanov v. Russia, no. 41461/02, § 100, 24 July 2008*):

Սակայն, պետք է նշել, որ ներկայումս «միակ և որոշիչ» ապացույց լինելու թեստը որոշակի վերափոխման է ենթարկվել: Մասնավորապես *Ալ-Գավայայի* գործով վճռում դատարանը հետևյալ մոտեցումն է ցուցաբերել. «... վերը նշված սկզբունքից բխում են երկու պահանջներ: Առաջին՝ պետք է լինի հարգելի պատճառ վկայի ներկայանալու համար: Երկրորդ, երբ դատապարտումը հիմնվում է միայն կամ վճռորոշ կերպով գրավոր ցուցմունքների վրա, որոնք տվել է անձը, ում մեղադրյալը չի կարողացել հարցաքննել ինքնուրույն նախաքննության կամ դատական քննության փուլում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այն չափով, որքանով չեն համապատասխանում 6-րդ

հողվածում ամրագրված երաշխիքներին (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], nos. 26766/05 and 22228/06, § 119, ECHR, 15 December 2011*):»

Այսպիսով՝ 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների առկայությունը.

- պետք է լինի հարգելի պատճառ վկայի չներկայանալու համար,
- դատարանը միայն և վճռորոշ կերպով չպետք է հիմնվի այն վկայի ցուցմունքի վրա, ում հարցաքննելու հնարավորություն մեղադրյալը չի ունեցել:

Բացակայող վկայի կողմից ներկայացված ապացույցներն ընդունելու համար լավ պատճառաբանման պահանջն առաջնային քննարկման խնդիր է, որը պետք է ուսումնասիրվի մինչ այդ ապացույցները միակը կամ վճռորոշը համարելը: Նույնիսկ երբ բացակայող վկայի ցուցմունքը միակը կամ վճռորոշը չի եղել, Դատարանը, այնուամենայնիվ, գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆի խախտում, քանի որ վկային չհարցաքննելու համար լավ պատճառաբանություն չի ներկայացվել: Սա այն պատճառով է, որ, որպես կանոն, վկաները պետք է տան ցուցմունքներ դատաքննության ընթացքում, և որ բոլոր ողջամիտ ջանքերը պետք է ներդրվեն նրանց ներկայությունն ապահովելու համար: Այսպիսով, եթե վկան չի ներկայանում բանավոր ցուցմունք տալու համար, ապա պարտավորվածություն կա տեղեկանալ, թե արդյոք այդ բացակայությունն արդարացված էր (տե՛ս *Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], nos. 26766/05 and 22228/06, § 120, ECHR, 15 December 2011; Gabrielyan v. Armenia, no. 8088/05, § 78, 10 April 2012*):

Ընդ որում, եթե բացակայում է առաջին պայմանը, ապա երկրորդ պայմանին Դատարանն ընդհանրապես չի անդրադառնում 6-րդ հոդվածի 3 (դ) պարագրաֆի խախտում արձանագրելու համար (տե՛ս *Rudnichenko v. Ukraine, no. 2775/07, §§ 103-110, 11 July 2013*):

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով դիմումատուն հայտնել է, որ զրկված է եղել իր դեմ ցուցմունք տված երեք վկաներին հարցաքննելու հնարավորությունից: Դատարանը գտել է, որ իշխանությունները բավարար ջանասիրություն չեն գործադրել նշված վկաների ներկայությունն ապահովելու համար և չեն ներկայացրել նրանց բացակայությունը արդարացնող հիմնավոր պատճառաբանություն:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով դիմումատուն բողոքում էր, որ իրեն հնարավորություն չի տրվել հարցաքննելու վկա Օ-ին, ում՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքները գործի քննության բոլոր փուլերում դրվել են իր մեղադրանքի հիմքում:

Սույն գործով դատարանը նշել է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ անզուգուշությամբ մարդու մահ առաջացնելու համար դիմումատուի

դատապարտման հիմքում, ի թիվս այլոց, դրվել է վկա Օ-ի կողմից նախաքննության ժամանակ տրված ցուցմունքը: Դիմումատուի և այդ վկայի առերեսում չի կատարվել: Վերջինս, չներկայանալով դատարան, նաև պնդել է, որ վախենում է իր հանդեպ հաշվեհարդարից: Ուստի, գործի քննության որևէ փուլում դիմումատուն այդ վկային հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Այնուամենայնիվ, Դատարանը նշել է, որ սխալ է պնդելը, որ դիմումատուի դատապարտման համար վճռորոշ է եղել վկա Օ-ի ցուցմունքը (տե՛ս *Verdam v. the Netherlands* (որոշում), թիվ 35253/97, 1999 թ. օգոստոսի 31, և, ի հակադրումն, *Van Mechelen and Others v. the Netherlands*, 1997 թ. ապրիլի 23, § 63, Վճիռների և որոշումների ժողովածու 1997-III): Նրա դատապարտման հիմքում դրվել են նաև երկու կարևոր ականատես վկաների՝ Ժ-ի և Մ-ի ցուցմունքները, երեք այլ վկաների ցուցմունքները, ինչպես նաև մի շարք փորձագետների եզրակացությունները և զննությունների արձանագրությունները:

Դատարանը եզրակացրել է, որ այն հանգամանքը, որ դիմումատուն չի կարողացել հարցաքննել վկա Օ-ին, սույն գործի պարագայում չի սահմանափակել պաշտպանության կողմի իրավունքներն այնքան, որ հանգեցնի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտման:

Հմայակ Սահակյանի գործով 2011 թ. հոկտեմբերի 20-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պաշտպանության միջոցների ներքո գտնվող երեք վկաների՝ չբացահայտված բովանդակությամբ ցուցմունքների օգտագործման իրավաչափությանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազիսյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան: Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիպթեր Մոուրբեյ: Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:
5. Դ. Խաչատրյան, ՀՀ քրեադատավարական որոշ նորմերի վերլուծությունը Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների տեսանկյունից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Հ-4-5, 2006, էջ 77-83:
6. Эндрю Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
7. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.
8. Моул Н., Харби К., Алексеева Л., Б., Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, –М., 2001.

ԴԱՍ 9. ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Թեմա 1. Ապացույցների թույլատրելիությունն ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի

Եվրոպական դատարանը ապացույցների թույլատրելիության խնդրին անդրադարձել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի(Արդարացի դատաքննության իրավունք) շրջանակներում: Միաժամանակ դատարանը բազմիցս նշել է, որ իր խնդիրը ոչ թե վկաների ցուցմունքների գնահատումն է, այլ պարզելը՝ արդյոք դատաքննությունը եղել է արդարացի՝ ներառելով նաև ապացույցների թույլատրելիության հարցը: Ինչպես նշվում է Եվրոպական դատարանի՝ *Մոնելն ու Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով կայացրած վճռում, «արդար դատաքննության պահանջը տարածվում է ոչ միայն կողմերի մասնակցությամբ դատաքննության, այլև ամբողջ դատավարության վրա» (տե՛ս *Monnell and Morris v. United Kingdom., Judgement of 2 March 1987, Series A., No.115. p. 25, para. 55-70*): Հետևաբար, արդարացի դատաքննության պահանջն իրագործելու համար

դատարանը պետք է անդրադառնա նաև ապացույցների թույլատրելիության խնդրին և կողմերի պահանջով անթույլատրելի ճանաչի օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները: Ավելին, 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան»: «Օրենքին համապատասխան» դրույթը ենթադրում է, որ մեղադրական դատավճռի հիմքում պետք է դրվեն միայն այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: Այս դրույթը կողմերին իրավունք է տալիս դատարանից պահանջելու իր վճիռները կայացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա:

Շենկն ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացրած վճռում դատարանը նշում է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, բայց չի սահմանում ապացույցների՝ որպես այդպիսին թույլատրելիության որևէ կանոն. դա ներպետական իրավունքի խնդիրն է: Դատարանը, այսպիսով, չի կարող սկզբունքորեն և *in abstracto* բացառել ապօրինաբար ձեռք բերված նույնաբնույթ ապացույցների ընդունելիությունը: Նա պետք է գնահատի միայն, թե արդյոք պրն Շենկի գործով դատաքննությունն ամբողջությամբ արդարացի է եղել» (տե՛ս Schenk v. Switzerland, 12 July 1988, Series A no. 140):

Կհանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դիմողը Միացյալ Թագավորություն է ժամանում իր զարմիկի հետ, որի մոտ թմրանյութ է հայտնաբերվում: Դիմողի խուզարկության արդյունքում նրա մոտ թմրանյութ չի հայտնաբերվում: Հինգ ամիս անց դիմողն այցելում է թմրանյութերի առք ու վաճառքով զբաղվող ընկերոջը, առանց որի իմացության նրա բնակարանում լսող սարք էր տեղադրվել: Արդյունքում ոստիկանությունը ստանում է դիմումատուի և նրա ընկերոջ գրույցի ձայնագրությունը, որտեղ դիմումատուն խոստովանում է, որ ներգրավված է եղել թմրանյութերի մաքսանենգության մեջ: Արդյունքում վերջինս ձերբակալվում է և մեղադրվում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար:

Եվրոպական դատարանում դիմողը պնդում էր, որ իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածը (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և 6-րդ հոդվածը: Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ բացակայում է գաղտնի լսողական սարքերի կիրառումը թույլատրող օրենք: Թեև հսկողությունը կատարվել է ներքին գործերի նախարարության ուղեցույցին համապատասխան, Դատարանը գտել է, որ այն հասարակության համար բավարար չափով մատչելի չէ: Այսպիսով՝ չի պահպանվել 8-րդ հոդվածում ամրագրված «նախատեսված է օրենքով» պահանջը,

որն անհրաժեշտ է միջամտության արդարացման համար: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ Դատարանը նշել է, որ դիմումատուն ունեցել է ձայնագրության նույնականությունն ու օգտագործման փաստը վիճարկելու լայն հնարավորություն: Այն հանգամանքը, որ նա հաջողության չի հասել, Դատարանի գնահատականներում փոփոխություն չի մտցրել: Այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ 8-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված նյութի օգտագործումը չի հակասում 6-րդ հոդվածով նախատեսված արդարացիության պահանջներին: Այսինքն՝ 6-րդ հոդվածի շրջանակներում ապացույցների թույլատրելիությանը անդրադառնալիս դատարանը չի հիմնվել այն հանգամանքների վրա՝ արդյոք ապացույցը ձեռք է բերվել ներպետական օրենսդրության պահպանմամբ, թե ոչ: Դատարանը գնահատել է ամբողջ դատավարության արդարացիությունը (տե՛ս Khan v. the United Kingdom, 12 May 2000.):

Սակայն, պետք է նշել, որ որոշ վճիռներում դատարանը դրսևորել է ավելի մեղմ, վերը նշվածից որոշակիորեն տարբերվող մոտեցում, որն իր արտացոլումն է ստացել *Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների* գործով դատարանի վճռում: Դատարանը մասնավորապես նշել է. «Դատարանը կրկնում է, որ ապացույցների թույլատրելիությունը հարց է, որը *հիմնականում* կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ և, որպես կանոն, հենց ներպետական դատարաններն են կոչված գնահատելու ներկայացված ապացույցները: Ըստ կոնվենցիայի՝ դատարանի խնդիրն է ոչ թե գնահատել վկաների ցուցմունքները, այլ համոզվել, որ դատաքննությունն արդարացի է եղել, ներառյալ և այն, թե ինչպես են ստացվել ապացույցները (տե՛ս Van Mechelen and Others v. the Netherlands, 23 April 1997, § 50, Reports of Judgments and Decisions 1997-III)»:

Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այն դեպքերում, երբ ներպետական դատարանները դատավճռի հիմքում դնում են օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ, Եվրոպական դատարանն այս փաստը հիմք չի համարում 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ ապացույցը համարվել է անթույլատրելի, այն հակասել է ոչ թե արդարացի դատաքննության իրավունքին, այլ Կոնվենցիայի այլ հոդվածներին: Մասնավորապես *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է համարել վկաների «խորացված հարցաքննությունը», քանի որ կիրառված մեթոդները թեև մարմնական վնասվածքներ չեն առաջացրել, սակայն լուրջ ֆիզիկական և հոգեկան տառապանք են պատճառել, հարցաքննվողներին նվաստացնելու, վարկաբեկելու, նրանց ֆիզիկական և բարոյական դիմադրությունը կոտրելու նպատակով վախի և անլիարժեքության զգացում են տարածել»:

Ապացույցների թույլատրելիության առումով նախ և առաջ հարկ է հիշատակել *Արմեն Սեյրանի Սարգսյանի* գործով 2009 թ. սեպտեմբերի 16-ին կայացված թիվ

ԵՔԲ/0295/01/08 որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը ուղենիշային է դարձել հետագա որոշումների կայացման համար: Նշված որոշման 15-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես, եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այսպիսով՝ ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում, կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալն անկախ գործի համար ունեցած նշանակությունից կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում»: Ապացույցի թույլատրելիության վերաբերյալ մեկ այլ կանոն ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է *Մ. Մարգարյանի* գործով որոշմամբ, որում, ի թիվս այլոց, քննարկման առարկա է դարձել տեսաձայնագրման փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևության իրավաչափության հարցը: Ըստ քրեական գործի նյութերի՝ տուժողը վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է իր ամուսնու կողմից կատարված՝ իր և ամբաստանյալի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լազերային սկավառակը: Դրա հիման վրա քննիչը, նպատակ ունենալով պարզել սկավառակի վրա առկա խոսակցության բովանդակությունը և խոսակցության մասնակիցներին, որոշում է կայացրել դատաձայնագրառման փորձաքննությունն նշանակելու մասին՝ փորձագետին տրամադրելով նշված լազերային սկավառակը: Փորձագետն իր եզրակացությանը, որպես հավելված, կցել է սկավառակի վրա առկա ձայնագրառման վերծանումը: Նշված եզրակացությունը՝ կից հավելվածով, նախաքննական մարմնի կողմից դրվել է ամբաստանյալին ներկայացված մեղադրանքի հիմքում: Առաջին ատյանի դատարանը դատաձայնագրառման փորձաքննության եզրակացությունը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ պատճառաբանելով, որ ձայնագրությունը կատարվել է քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից, չի պահպանվել այդ գործողության կատարման օրենքով սահմանված կարգը: Նշված գործով դիրքորոշում ձևավորելու համար ՀՀ վճռաբեկ դատարանը դարձյալ հենվել է Ա. Մարգարյանի գործով որոշման 17-րդ կետում արված

դատողությունների վրա: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) [Մ]ույն գործով քրեական դատարանն անձի դատապարտման հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնց բովանդակությունն ամբողջությամբ բխում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից: (...) Այդ ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին»: Այս համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ թեև նախաքննական մարմինն ամբաստանյալի և տուժողի խոսակցության ձայնագրառումը ինքնին որպես ապացույց չի դիտել և ամբաստանյալի մեղադրանքի հիմքում անմիջականորեն չի դրել, սակայն այդ ձայնագրառման հիման վրա նշանակված փորձաքննության արդյունքում ստացված եզրակացությունը և խոսակցության բովանդակությունն արտացոլող հավելվածը համարել է ամբաստանյալի մեղքը հիմնավորող ապացույց: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է, որ փորձագետի եզրակացությունը թույլատրելի ապացույց չէ, քանի որ եզրակացության հիմքում ընկած փաստական տվյալը՝ լազերային սկավառակի բովանդակությունը կազմող տեղեկատվությունը, ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին: Ուստի, ՀՀ վճռաբեկ դատարանի կարծիքով, տեսաձայնագրառման փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունն իրավաչափ է: Այսպիսով՝ նշված գործերով ձևավորված դիրքորոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանը գործնականորեն կիրառել է «թունավոր ծառի պտուղների» տեսությունը՝ սահմանելով, որ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց: Քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված ապացույցի թույլատրելիության հարց է քննարկվել նաև Կ. Սարուխանյանի գործով որոշմամբ: Նշված գործով Կ. Սարուխանյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում հարցաքննվել են երեք վկաներ: Սակայն նախաքննական մարմինը նրանց տված ցուցմունքներն օգտագործել է մեկ այլ՝ Կ. Սարուխանյանի կողմից սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ հարուցված քրեական գործով, որով այդ անձինք որպես վկա չեն հարցաքննվել: Մասնավորապես, վերջին գործով կազմված մեղադրական եզրակացության մեջ

նշվել է, որ Կ. Սարուխանյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորվում է նշված երեք վկաների՝ Կ. Սարուխանյանի առողջությանը վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով տված ցուցմունքներով: Վերոնշյալ փաստական հանգամանքներին իրավական գնահատական տալու համար ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի լույսի ներքո վերլուծել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ մասը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վկան նախազգուշացվում է տվյալ գործով իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է, որ վկայի ցուցմունքը պետք է դիտել որպես քննչական գործողության կարգի էական խախտմամբ ձեռք բերված, եթե նախքան ցուցմունք վերցնելը վկան չի տեղեկացվել, թե որ քրեական գործով է հարցաքննվում: Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կ. Սարուխանյանի սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ հարուցված քրեական գործով օգտագործված ցուցմունքները չեն եղել թույլատրելի ապացույցներ, քանի որ ձեռք են բերվել տվյալ քննչական գործողության՝ վկայի հարցաքննության կատարման կարգի էական խախտմամբ: Մեկ այլ՝ *Կարեն Ալեքսանդրի Հովհաննիսյանի* և այլոց գործով 2010 թ. օգոստոսի 27-ին կայացված թիվ ԵՔԲԴ/0063/01/08 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է պաշտպանի վճռաբեկ բողոքում առկա այն փաստարկին, որ իր պաշտպանյալի մեղադրանքի հիմքում դրվել են նրա բնակարանի խուզարկությամբ հայտնաբերված և նախաքննության մարմնի կողմից իրեղեն ապացույց ճանաչված թմրամիջոցները, որոնք, սակայն, քրեական գործի հետ միասին դատարան չեն ուղարկվել, դատարանի կողմից չեն հետազոտվել, հետևաբար չէին կարող օգտագործվել որպես ապացույց: Վճռաբեկ բողոքում վկայակոչված փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը պարզել է, որ Կ. Հովհաննիսյանի մեղավորությունը հաստատող ապացույցների զանգվածում ներառվել են վերջինիս վարձակալած բնակարանի խուզարկության արձանագրությունը և այդ խուզարկությամբ հայտնաբերված ու առգրավված թմրամիջոցների նկատմամբ իրականացված դատաքիմիական փորձաքննության եզրակացությունը, որոնք առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում հետազոտել է քրեական դատավարության օրենսդրության պահանջների պահպանմամբ: Ինչ վերաբերում է իրեղեն ապացույց ճանաչված թմրամիջոցներին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է, որ տվյալ ապացույցի թույլատրելիության խնդիրն ինքնին բացակայում է, քանի այն ստորադաս դատարանների կողմից որպես ապացույց չի օգտագործվել:

**Թեմա 2. Ոստիկանության քողարկված աշխատակիցների կողմից
հանցագործության նմանակման միջոցով ձեռք բերվող
ապացույցների թույլատրելիությունը**

Հանցագործության քննությանը գաղտնի գործակալների մասնակցության հարցին դատարանն առաջին անգամ անդրադարձել է *Լուդին ընդդեմ Շվեյցարիայի* գործով (տե՛ս *Lüdi v. Switzerland*, 15 June 1992, § 43, Series A no. 238), այնուհետև դատարանն այս հարցով իր իրավաբանությունը զարգացրել է *Տեիքսեիրա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի* գործով (տե՛ս *Teixeira de Castro v. Portugal*, 9 June 1998, Reports of Judgments and Decisions 1998-IV):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, մասնավորապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի արգելում հատուկ քննչական մեթոդների կիրառումը, մինչև որ ժամանակ սահմանելով, որ այդ մեթոդների կիրառումը չպետք է խախտի մարդու իրավունքները (տե՛ս *Ramanauskas v. Lithuania* [GC], no. 74420/01, §§ 49-51; *Eurofinacom v. France*, (dec.), no. 58753/00, ECHR 2004-VII):

Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի գործով Դատարանը նշում է. «Դատարանն ի սկզբանե հայտնում է, որ տեղյակ է ոստիկանության կողմից հանցանքների բացահայտման և քննության նպատակով ապացույցների որոնման և հավաքման դժվարությունների մասին: Այդ հանձնարարությունը կատարելու համար նրանք հատկապես ունեն գաղտնի գործակալների օգտագործման կարիք, մասնավորապես կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարում: Դատարանն այս առումով նշել է, որ քննության հատուկ մեթոդների, այնպիսին, ինչպիսին են գաղտնի գործակալների կամ քննության այլ քողարկված մեթոդների կիրառումը, ինքնին չի կարող խախտել մարդու իրավունքները և արդար դատաքննության իրավունքը, այնուամենայնիվ դրանց կիրառումը պետք է հստակ սահմաններ և երաշխիքներ ունենա (տե՛ս *Ramanauskas v. Lithuania* [G C], no. 74420/01, §§ 51):

Ազգային օրենսդրությունը պետք է այն աստիճան հստակ լինի, որպեսզի մարդկանց համար հասկանալի լինի, թե ինչպիսի հանգամանքներում և պայմաններում ոստիկանները կարող են գաղտնի քննչական միջոցներ կիրառել: Ավելին, պետությունը պոզիտիվ պարտավորություն է կրում ապահովելու, որ իր օրենսդրական ակտերը տրամադրեն այնպիսի երաշխիքներ, որոնք հնարավորություն կտան խուսափելու չարաշահումներից և պաշտոնական լիազորություններն անցնելուց այն դեպքերում, երբ անձը գաղտնի կերպով վերահսկվում է (տե՛ս *Kopp v. Switzerland*, 25 March 1998, § 64, Reports 1998-II):

Նախքան քննությանը «գաղտնի գործակալների» ներգրավմանը և վերջիններիս գործունեության իրավաչափությանն անդրադառնալն անհրաժեշտ է նշել, որ Դատարանը հստակ տարանջատում է երկու հասկացություն՝ «գաղտնի գործակալ» և «գործակալ պրովոկատոր»: Արդեն իսկ *Stecher v. Austria* գործով վճռում, Դատարանը, հիմնվելով պորտուգալացի իրավաբան գիտնականների մշակած տեսության վրա, տարանջատեց այս հասկացությունը՝ նշելով, որ «գաղտնի գործակալն» այն անձն է, ով սահմանափակվում է տեղեկություններ հավաքելով, մինչդեռ «պրովոկատորը» հրահրում է մարդուն հանցանք կատարել (տե՛ս *Teixeira de Castro v. Portugal*, § 27, 9 June 1998, Reports of Judgments and Decisions 1998-IV): Այս հասկացությունները սահմանազատելիս հիմնական չափանիշներից է նաև այն, թե արդյոք «գաղտնի գործակալի» ներգրավվածությունը սահմանափակվում է միայն արդեն իսկ ընթացող հանցագործությանը ներգրավվելով, թե ոչ: Դատարանը հստակ սահմանել է, որ արդեն իսկ ընթացող հանցագործության մեջ ներգրավվելը «գաղտնի գործակալի» իրավասության շրջանակում է, ուստի այն չի խախտում արդարացի դատական քննության իրավունքը (տե՛ս *Sequeira v. Portugal* (dec.), no. 73557/01, ECHR 2003-VI): Անդրադառնալով «պրովոկատորի» գործողությունների իրավաչափությանը՝ Դատարանը նշել է, որ վերջինիս գործողությունները հրահրում են անձին կատարելու հանցանք, որի համար արդյունքում նա դատապարտվում է, և չկա վկայություն առ այն, որ հանցանքը կկատարվեր առանց նման միջամտության (տե՛ս *Ramanauskas v. Lithuania* [GC], no. 74420/01, §§ 73; *Vanyan v. Russia*, no. 53203/99, § 47, 15 December 2005):

Դատարանը նշել է, որ գաղտնի գործակալի արարքը գնահատելու համար անհրաժեշտ է պարզաբանել հետևյալ հարցերը.

- արդյո՞ք առկա է ողջամիտ պատճառ կասկածելու, որ տվյալ անձը ներգրավված է համանման հանցանքի կատարման մեջ կամ նախկինում նման հանցանք է կատարել (տե՛ս *Teixeira de Castro v. Portugal*, § 38, 9 June 1998, Reports of Judgments and Decisions 1998-IV),
- գաղտնի գործակալի ներգրավման և գործունեության օրինականությունը (տե՛ս *Ramanauskas v. Lithuania* [GC], no. 74420/01, §§ 63-64),
- գաղտնի գործակալի ներգրավման սահմանները (տե՛ս *Ramanauskas v. Lithuania* [GC], no. 74420/01, §§ 63-64):

Ողջամիտ պատճառ կասկածելու, որ տվյալ անձը ներգրավված է համանման հանցանքի կատարման մեջ կամ նախկինում նման հանցանք է կատարել

Թեև դատարանը չի պարզաբանել «ողջամիտ պատճառ» հասկացությունը, այնուամենայնիվ այս հասկացության բովանդակության բացահայտման համար

կարող է կիրառվել «ողջամիտ կասկած» հասկացության վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքը: Դատարանը բազմիցս նշել է, որ «ողջամիտ կասկած» հասկացությունը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք օբյեկտիվ և անաչառ դիտորդի մոտ համոզմունք կձևավորեն, որ անձը հնարավոր է հանցանք կատարած լինի (տե՛ս *Fox, Campbell and Hartley v. United Kingdom*, 30 August 1990, §§ 32-35, Series A no. 182): Ամեն դեպքում, կասկածը պետք է հիմնվի կոնկրետ ապացույցների վրա, որոնք կվկայեն, որ «պաշտպանյալը» կատարել է որոշակի գործողություններ՝ ուղղված այն հանցանքի կատարմանը, որի համար նա արդյունքում մեղադրվել է (տե՛ս *Eurofinacom v. France ((dec.)), no. 58753/00, ECHR 2004-VII*): Սա է պատճառը, որ Դատարանը գաղտնի գործակալի ներգրավման համար «ողջամիտ պատճառ» չի համարել միայն ոստիկանության ունեցած տեղեկությունը, որ անձը ներգրավված է թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ (տե՛ս *Vanyan v. Russia*, no. 53203/99, § 49, 15 December 2005), երբ կասկածը հիմնված է եղել միայն անուղղակի ցուցմունքի վրա (տե՛ս *Ramanauskas v. Lithuania [GC]*, no. 74420/01, § 67), կամ տեղեկությունը, որ անձը նախկինում ներգրավված է եղել համանման հանցագործությունների կատարմանը, ստացվում է միակ աղբյուրից, այն է՝ ոստիկանական գործակալից (տե՛ս *Khudobin v. Russia*, no. 59696/00, § 96, ECHR 2006-XII (extracts): Գործերի մեծամասնությունում դատարանն արձանագրել է արդար դատաքննության իրավունքի խախտում բոլոր այն դեպքերում, երբ գաղտնի գործակալի ներգրավմամբ կատարված հանցանքի համար մեղադրվող անձինք նախկինում երբեք չեն դատապարտվել նույն կամ համանման արարքների համար (տե՛ս *Ramanauskas*, § 67), մինչդեռ դատարանը հակառակ դիրքորոշումն է հայտնել այն դեպքերում, երբ անձը նախկինում դատապարտված է եղել (տե՛ս *Eurofinacom*), սակայն սա միանշանակ կանոն չի կարող համարվել (տե՛ս *Miliniene v. Lithuania*, no. 74355/01, § 37, 24 June 2008): Վերջին գործով դատարանը մասնավորապես նշել է. « ... Ապացույցներ չկան առ այն, որ դիմողը նախկինում կատարել է որևէ, մասնավորապես կոռուպցիոն բնույթի հանցանք: Ինչևէ, սույն գործով նախաձեռնությունը պատկանել է Ս. Ս.-ին՝ գաղտնի գործակալի, ով, հասկանալով, որ դիմողը կաշառք կպահանջի իր գործով ցանկալի արդյունքի հասնելու համար, բողոք է ներկայացրել ոստիկանություն: Այնուհետև ոստիկանությունը գործին ներգրավել է հանրային մեղադրանք ներկայացնողին, ով սանկցավորել է գործի նախնական քննությունը և հետևել դրա հետագա ընթացքին քրեական վարքագծի կեղծման մոդելի շրջանակներում՝ Ս. Ս.-ին կասկածյալի դեմ ցուցմունք տալու դիմաց անձեռնմխելիություն տրամադրելով: Ինչ վերաբերում է նրան, որ Ս. Ս.-ն ունեցել է ոստիկանության օժանդակությունը դիմողին բավականաչափ մեծ ֆինանսական բավարարում առաջարկելու համար, և նրան տրամադրվել են տեխնիկական միջոցներ՝ իրենց խոսակցությունը ձայնագրելու

համար, ապա պարզ է, որ այս կապակցությամբ ոստիկանությունն ազդել է դեպքերի ընթացքի վրա: Մակայն Դատարանը չի գտնում, որ ոստիկանության դերը եղել է ոչ իրավաչափ՝ հաշվի առնելով հանցագործությունների վերաբերյալ հայտարարությունները ստուգելու և իրավական ու ժողովրդավարական պետության վրա դատական ոլորտի կոռուպցիայի քայքայիչ ազդեցությունը կանխելու նրանց պարտականությունը: Դատարանը չի գտնում նաև, որ ոստիկանությունը վճռորոշ դեր է ունեցել: Որոշիչ է եղել Ս. Ս.-ի և դիմողի վարքագիծը: Այս կապակցությամբ Դատարանը գտնում է, որ կարելի է ասել, որ ոստիկանությունն առավելապես «միացել է», քան կանխորոշել հանցագործությունը»:

Ամեն դեպքում նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքը որոշիչ չէ, քանի որ Դատարանն ամեն դեպքում ուշադրություն է դարձնում այնպիսի սուբյեկտիվ հանգամանքի վրա, ինչպիսին անձի հակվածությունն է կատարելու հանցագործություն՝ նախքան գաղտնի գործակալի ներդրումը կամ այլ գաղտնի միջոցի կիրառումը:

Գաղտնի գործակալի ներգրավման և գործունեության օրինականությունը

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնկրետ դատավարական գործողության կատարումը թույլատրող ընթացակարգը պետք է լինի հստակ, և թույլատրված քննչական գործողությանը վերաբերող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական՝ սահմանելով նման միջոց կիրառելու պատճառները, նպատակները և նման գործողության կատարմանը անձանց ներգրավման սահմանները (տե՛ս *Khudobin v. Russia*, no. 59696/00, § 135, ECHR 2006-XII (extracts): Ուստի տվյալ քննչական գործողությունը թույլատրող վարչական որոշումը, որը չի պարունակում տվյալ գործողության կիրառման նպատակների և պատճառների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ, չի կարող նման գործողության կատարման հիմք լինել (տե՛ս *Khudobin*, § 135):

Գաղտնի գործակալի ներգրավման սահմանները

Այս հարցի վերաբերյալ Դատարանի դիրքորոշումը միանշանակ չէ: Բազմաթիվ գործերով Դատարանը նշել է, որ գործակալներին թույլատրված է ներգրավվել արդեն իսկ ընթացող քննությանը և ոչ թե նախաձեռնել հանցանքի կատարումը (այս մասին տե՛ս *Ramanauskas v. Lithuania [GC]*, no. 74420/01, §§ 67; *Malininas v. Lithuania*, no. 10071/04, § 3, 1 July 2008; *Vanyan v. Russia*, no. 53203/99, § 47, 15 December 2005):

Դասին առնչվող գրականություն

1. Ղազինյան Գ., Դիլբանդյան Ս., Ղուկասյան Հ., Հարությունյան Ա., Մելքոնյան Դ., Թաթոյան Ա., Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան: Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիպթեր Մոուրբեյ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Դ. Մելքոնյան, Ապացույցի թույլատրելիության եվրոպական չափանիշները: «Պետություն և իրավունք», թիվ 4(42), Երևան, 2008, էջ 14-19:
5. Մ. Խաչատրյան, «Արդարացի դատական քննության իրավունք», Երևան, 2004 թ.:
6. Դ. Խաչատրյան, ՀՀ քրեադատավարական որոշ նորմերի վերլուծությունը Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների տեսանկյունից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Հ 4-5, 2006, էջ 77-83:
7. Դ. Խաչատրյան, Ապացույցների թույլատրելիության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական նախադեպային դիրքորոշումները», «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի լրատու», Հ 3, 2009, էջ 3-39:
8. Эндру Гротрайан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
9. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты. М., «Рудомино», 2000.
10. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии, М, 2001.

ԴԱՍ 10. ՄԻԱՅՆ ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Թեմա 1. Պատասխանատվություն միայն օրենքի հիման վրա: Նյութական և դատավարական օրենքի հետադարձ ուժը

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը պարունակում է հետևյալ երկու հիմնական սկզբունքները, որոնք օրինականության հիմնական բաղադրիչներն են.

1) քրեական պատասխանատվությունը կարող է հիմնվել միայն այն նորմի վրա, որը գոյություն ունի արարքը կատարելու պահին (*nullum crimen sine lege*).

2) չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին (*nulla poena sine lege*):

Հոդված 7-ի այս ձևակերպումը վկայում է, որ այն կոչված է առաջարկելու «հիմնարար երաշխիքներ ապօրինի քրեական հետապնդման, դատապարտման և պատժի դեմ» (տե՛ս *Kokkinakis v. Greece, 25 May 1993, § 52, Series A no. 260-A*):

Nullum crimen sine lege և *nulla poena sine lege* սկզբունքներին Դատարանն ավելացրել է ևս մեկը. քրեական օրենքը կիրառող մարմինները չպետք է այն, ի վնաս մեղադրյալի, ընդարձակ մեկնաբանման ենթարկեն, օրինակ՝ կիրառեն անալոգիա: Այս սկզբունքից բխում է, որ հանցագործությունը պետք է հստակ սահմանված լինի օրենքով (տե՛ս *Kokkinakis § 52*): Նոր, առավել խիստ օրենսդրությունը չի կարող կիրառվել մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած և շարունակվող իրավիճակի նկատմամբ (տե՛ս *Achour v France, 10 November 2004, § 37*):

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով «պատիժը» նշանակվում է «քրեական հանցագործության» համար դատապարտվելուց հետո: Ամեն դեպքում Կոնվենցիայի իմաստով «պատիժ» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն: 7-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցն առավել արդյունավետ դարձնելու համար Դատարանը կարող է գնահատել, թե արդյոք կոնկրետ միջոցը սույն հոդվածի իմաստով համարվում է «պատիժ» (տե՛ս *Welch v. the United Kingdom, 9 February 1995, § 27, Series A no. 307-A*): Այս առումով որոշիչ կարող են համարվել ներպետական օրենսդրությամբ կոնկրետ միջոցի կարգավիճակը, դրա բնույթն ու նպատակը, խստության աստիճանը (տե՛ս *Welch v. the United Kingdom, 9 February 1995, § 28, Series A no. 307-A*): Միայն այն հանգամանքը, որ դիմումատուի նկատմամբ կիրառվող սանկցիայի ազդեցությունը պատժիչ է, ինքնին բավարար չէ այն 7-րդ հոդվածի իմաստով «պատիժ» դիտելու համար (տե՛ս *Adamson v. the United Kingdom (dec.), no. 42293/98, 26 January 1999*):

Ջամիլի գործով վճռում Դատարանը որոշեց, որ ազատագրկման ժամկետի երկարացումը հանգեցրել է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառման: Դատարանը հաշվի առավ այն հանգամանքը, որ պատիժը, որը նշանակվել էր քրեական դատարանի կողմից, դիմումատուի նկատմամբ ուներ նրա վիճակը վատթարացնող նշանակություն և հանգեցնում էր ազատությունից զրկելուն (տե՛ս *Jamil c. France, 8 juin 1995, § 34-36, série A no 317-B*): Մյուս կողմից ապամոնտաժման (քանդման) կարգադրությունը, որ հիմնված չէր անձի մեղավորության հաստատման վրա և

ուներ վերականգնողական նշանակություն, 7-րդ հոդվածի իմաստով չի համարվում «պատիժ» (տե՛ս *Saliba v. Malta, (dec)*, 23 November 2004):

7-րդ հոդվածից բխում է, որ հանցագործությունը պետք է հստակ օրենքով նախատեսված լինի: Օրենքի դրույթները պետք է բավարար չափով կանխատեսելի և հասանելի լինեն (*G. v. France, § 24-25*, (27 September 1995, Series A no. 325-B): Այս պահանջը կարելի է բավարարված համարել, եթե օրենքի ձևակերպումը կամ անհրաժեշտության դեպքում նախադեպային իրավունքը անձին հնարավորություն է տալիս իմանալու, թե որ արարքի համար նա կարող է պատասխանատվության ենթարկվել (*Radio France and Others v. France, no. 53984/00, § 20, ECHR 2004-II*): Օրինակ՝ *Գրիգորիդասի* գործով վճռում դատարանը նշել է, որ բանակին վիրավորելու հանցակազմը ձևակերպված է բավականին տարածական ձևով, սակայն, այնուամենայնիվ, համապատասխանում է կանխատեսելիության չափանիշին (*Grigoriades v. Greece, 25 November 1997, § 38, Reports of Judgments and Decisions 1997-VII*): Դատարանը միևնույն ժամանակ նշել է, որ օրենքի ձևակերպումը պետք է բավականաչափ ճկուն լինի՝ փոփոխվող հանգամանքների նկատմամբ կիրառելի լինելու և չափից դուրս կարծրացած լինելուց խուսափելու համար:

Ցանկացած իրավական համակարգում, այդ թվում՝ նաև քրեական իրավունքում, որքան էլ հստակ մշակված լինի իրավական դրույթը, գոյություն ունի դատական մեկնաբանության անխուսափելի բաղադրիչ: Մշտապես կլինի կասկածելի կետերը պարզաբանելու և փոփոխվող հանգամանքներին հարմարեցնելու անհրաժեշտություն: Իսկապես, Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններում դատական օրինաստեղծ գործընթացների միջոցով քրեական օրենսդրության շարունակական զարգացումը իրավական ավանդույթի արմատավորված և անհրաժեշտ մաս է կազմում: Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող դիտարկվել որպես յուրաքանչյուր գործի դեպքում դատական մեկնաբանության միջոցով քրեական պատասխանատվության կանոնների պարզաբանումը օրենքից դուրս համարող հոդված՝ պայմանով, որ արդյունքում ստացված մշակված տարբերակը համապատասխանում է հանցանքի էությանը և կանխատեսելի է (տե՛ս *S. W., cited above, § 36; Streletz, Kessler and Krenz, cited above, § 50; and K.-H. W. v. Germany [GC], no. 37201/97, § 45, ECHR 2001-II*):

Սկզբունքորեն ազգային օրենսդրությունն ազատ է սահմանելու, թե որ արարքներն են հանցագործություն և ենթակա են քրեականացման: Այս առումով 7-րդ հոդվածը կիրառելի չէ: Եվրոպական կոնվենցիան այս առումով սահմանափակված է միայն այն հարցով, թե արդյոք դրա որևէ դրույթ խախտվում է տվյալ օրենսդրությամբ:

Հետադարձ ուժի արգելքը

7-րդ հոդվածը արգելում է քրեական օրենքի հետադարձ կիրառումը: Հոդված 7-ը միևնույն ժամանակ չի սահմանում մեղադրյալի վիճակը բարելավող օրենքը մեղադրյալի նկատմամբ հետադարձ կիրառելու պահանջ (տե՛ս *Kokkinakis v. Greece*, 25 May 1993, § 52, Series A no. 260-A): 7-րդ հոդվածում առկա՝ հետադարձ ուժի կիրառում ձևակերպումը նշանակում է նաև, որ արգելվում է կիրառել մոդիֆիկացված օրենքի հին ձևակերպումը կամ սանկցիան այն արարքի նկատմամբ, որը կատարվել է դրանից հետո (տե՛ս *X v. The Netherlands, D&R 11* (1978, p. 209 (211)):

Որոշ խնդիրներ կարող են առաջանալ տևող կամ շարունակվող հանցագործությունների դեպքում, այսինքն, երբ նման հանցագործությունների կատարման ընթացքում քրեական օրենքը փոփոխության ենթարկվի: Եթե մեղադրյալը դատապարտվում է շարունակվող հանցագործության համար, իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որպեսզի բացառվի օրենքի հետադարձ կիրառումը, շարունակվող հանցագործությունը բավականաչափ հստակությամբ մեղադրական եզրակացության մեջ ձևակերպված լինի (տե՛ս *Ecer and Zeyrek v. Turkey*, nos. 29295/95 and 29363/95, § 33, ECHR 2001-II):

2-րդ պարագրաֆի բացառությունը

7-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆը ունի 1-ին բացառություն՝ այն հանցագործությունների դատապարտման և պատժելու համար, որոնք դրանց կատարելու պահին իրավունքի համընդհանուր սկզբունքների համաձայն համարվել են հանցագործություն: Թեև այս դրույթը ձևակերպված է ընդհանուր ձևով, ակնհայտ է, որ այն ձևակերպվել է՝ հնարավորություն տալու ազգային կամ միջազգային օրենսդրությունը կիրառելու պատերազմական հանցագործությունների նկատմամբ (տե՛ս *X v. Belgium*, Yearbook IV (1961), § 324): Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, որ այս բացառությունը վերաբերում է միայն պատերազմական հանցագործություններին: 7-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆը վերաբերում է այն բոլոր հանցագործություններին, որոնք քաղաքակիրթ մարդկության կողմից համարվել են այդպիսին:

Նշված սկզբունքը Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ե. Մելքոնյանի* վերաբերյալ որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «Անձին հանցագործություն կատարելու մեջ մեղավոր ճանաչելու միակ հիմքը կատարման պահին նրա արարքի՝ օրենքով սահմանված կարգով հանցագործություն համարվելն է: Այսինքն՝ արարքը կարող է որպես հանցագործություն նախատեսվել միայն քրեական օրենքով, և ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժվի այլ կերպ, քան քրեական օրենքով ուղղակիորեն նախատեսված հանցանք կատարելու համար:

Այսպիսով՝ չկա հանցագործություն, չկա պատիժ, եթե արարքն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով (*nullum crimen, nulla poena sine lege*):

(...)

[Նշված] երաշխիքը (*nullum crimen, nulla poena sine lege*), հանդիսանալով օրենքի գերակայության անքակտելի տարր, առաջնային տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության համակարգում, որից որևէ շեղում չի թույլատրվում: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքից հետևում է, որ ցանկացած հանցագործություն և պատիժ պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով: Այդ օրենքը չի կարող տարածական մեկնաբանվել, և այն չի կարող կիրառվել անալոգիայով» (տե՛ս Երվանդ Մելքոնյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թ. մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշման 14-րդ և 16-րդ կետերը):

ՀՀ վճռաբեկ դատարանը *Ս. Հարությունյանի* վերաբերյալ որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել, որի համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության և գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են քրեական դատավարության օրենսգրքով:

(...)

Իսկ դատարանում գործի քննությունը սկսվում է այն պահից, երբ անձը համապատասխան դատավարական փաստաթուղթը (բողոքը, միջնորդագիրը) ներկայացնում է դատարան (տե՛ս Աշոտ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թ. հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

Թեմա 2. Նույն հանցագործության համար կրկին չդատվելու իրավունք

1. Ոչ որ չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա:

3. Սույն հոդվածի դրույթներից շեղում չի թույլատրվում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի հիման վրա:

7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի նպատակը վերջնական դատական ակտով եզրափակված քրեական դատավարության կրկնության արգելքն է (տե՛ս *Nikitin v. Russia, no. 50178/99, § 37, ECHR 2004-VIII*): Այս հոդվածը կիրառելի չէ այն դեպքերում, երբ միաժամանակ տարբեր սանկցիաներ են կիրառվել տարբեր մարմինների կողմից, օրինակ՝ քրեական և վարչական (տե՛ս *R. T. v. Switzerland, (dec.), 30 May 2000*): Կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը սահմանափակվում է միայն քրեական դատավարության շրջանակներով:

Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածը չի սահմանափակվում մարդու կրկնակի դատապարտումից ազատվելու իրավունքի ապահովմամբ, այլ իր ուժը տարածում է կրկնակիորեն քրեական պատասխանատվության չենթարկվելու կամ չդատվելու իրավունքի նկատմամբ: Հակառակ դեպքում, Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածում կարիք չէր առաջանա «դատվել» բառին հավելել «պատժվել» բառը, քանի որ դա պարզ կրկնություն կլիներ: Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածը կիրառվում է նույնիսկ այդ դեպքերում, երբ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում այն գործով, որի արդյունքով նրա նկատմամբ մեղադրական վճիռ չի կայացվել: Դատարանը մի քանի գործով սահմանել է, որ Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածը նախատեսում է երեք երաշխիքներ և նույն հանցագործության վերաբերյալ սահմանում է, որ ոչ ոք (i) ենթակա չէ դատական հետապնդման, (ii) չպետք է դատվի կամ (iii) պատժվի (տե՛ս *Nikitin v. Russia, no. 50178/99, § 36, ECHR 2004-VIII*):

4-րդ հոդվածը կիրառելի է միայն միևնույն պետության իրավագործության շրջանակներում իրականացված քրեական դատավարության նկատմամբ: Այն, ըստ էության, չի արգելում միևնույն հանցագործության համար անձի երկու կամ ավել անգամ դատապարտումը տարբեր պետություններում՝ պայմանավորված տվյալ պետության իրավագործությամբ (տե՛ս *Amrollahi v. Denmark, (dec.), 28 June 2001*):

4-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը սահմանում է, որ *ne bis in idem* սկզբունքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ անձի արդարացումը կամ դատապարտումը վերջնական է: Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի իմաստը «վերջնական» որոշմամբ ավարտված քրեական գործի կրկնումն արգելելու մեջ է (տե՛ս *վերը նշված Franz Fischer, § 22, և Gradinger, § 53*): Կոնվենցիայի թիվ 7

Արձանագրության 4-րդ հոդվածի բացատրական զեկույցի համաձայն, որն իր հերթին վկայակոչում է քրեական գործերով դատական որոշումների միջազգային ճանաչման մասին Եվրոպական կոնվենցիան, «որոշումը վերջնական է համարվում, եթե ավանդական արտահայտության համաձայն, այն *res judicata* ուժ է ձեռք բերել»: Դա տեղի է ունենում, երբ որոշումն օրինական ուժի մեջ է մտած, այսինքն, երբ այլևս հասանելի չեն սովորական իրավական պաշտպանության միջոցները, կամ երբ կողմերը սպառել են նման միջոցները կամ թույլ են տվել, որպեսզի սպառվեն այդ միջոցներին դիմելու ժամկետներն առանց դրանցից օգտվելու» (տե՛ս Explanatory Report, para. 29 *juncto* para. 22):

4-րդ հոդվածի իմաստով անձը չի կարող կրկին դատվել միայն միևնույն հանցագործության համար: «Միևնույն հանցագործություն» հասկացության չափանիշը ենթադրում է, որ մեղադրյալը 7-րդ Արձանագրության 7-րդ հոդվածով պետք է ստանա բավական ընդարձակ պաշտպանություն, քանի որ ազգային օրենսդրությամբ միևնույն փաստերի ամբողջությունը կարող է դիտվել որպես մի քանի հանցագործություն (տե՛ս *Gradinger v. Austria*, 23 October 1995, Series A no. 328-C):

4-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆը սահմանում է, որ *ne bis in idem* սկզբունքը չի խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա: Դատարանը հստակ տարբերակում է սահմանում 4-րդ հոդվածի 1-ին պարագրաֆում սահմանված կրկին անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և դատապարտելու արգելքի և միևնույն հոդվածի 2-րդ պարագրաֆում սահմանված՝ բացառիկ դեպքերում գործի վերանայման միջև: 4-րդ հոդված 2-րդ պարագրաֆը ամրագրում է նոր ապացույցների ի հայտ գալու կամ հիմնարար խախտման դեպքում դատական ակտի վերանայման հնարավորությունը: Այն համակարգը, որը թույլ է տալիս որոշման վերանայում դատական սխալի հիման վրա, և այն ընթացակարգը, որը կարող է դիտվել որպես բացառիկ վերանայման ընթացակարգ, գտնվում է 4-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի տիրույթում է:

Դասին առնչվող գրականություն

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Ն. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան. Ա. Թաթոյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:

2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան: Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիսաբեր Մուսբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

2. Հանձնարարվող փաստաթղթերը (հրավական ակտեր, կոնկրետ գործեր և այլն)

- 1.1. *Գիրակոսյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 31237/03, 02/12/2008 – հայերեն,
- 1.2. ՄԻԵԿ-ի տեքստը հայերեն,
- 1.3. *Ներսիսյանն ընդդ. Հայաստանի* (որոշում), թիվ (dec.), 15371/07, 19/01/2010,
- 1.4. *Գասպարյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 35944/05, 13/01/2009,
- 1.5. *Սեֆիլյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 22491/08, 2/10/2012,
- 1.6. *Գաբրիելյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 8088/05, 10/04/2012
- 1.7. *Պողոսյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 44068/07, 20/12/2011,
- 1.8. *Մարտիրոսյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 23341, 06, 05/02/2013,
- 1.9. *Գաբրիելյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 32283/04, 17/06/2008,
- 1.10. *Սափեյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 35735/03, 13/01/2009,
- 1.11. *Խաչատրյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 31761/04, 01/12/2009
- 1.12. *Մարգարյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 72733/10, 04/06/2013,
- 1.13. *Վալենտին Շոլոխովն ընդդ. Հայաստանի*, թիվ 40358/05,
- 1.14. *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 22999/06, 17/07/2012,
- 1.15. *Մինասյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 44837/08, 08/04/2014,
- 1.16. *Վիրաբյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 40094/05, 02/10/2012,
- 1.17. *Փիրուզյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 33376/07, 26/06/2012,
- 1.18. *Խաչատրյանը և այլք ընդդ. Հայաստանի*, թիվ 23978/06, 27/11/2012,
- 1.19. *Աշոտ Հարությունյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 34334/04, 15/06/2010,
- 1.20. *Հարությունյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 36549/03, 28/06/2007,
- 1.21. *Մամիկոնյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 25083/05, 16/03/2010,
- 1.22. *Մալխասյանն ընդդ. Հայաստանի*, թիվ 6729/07, 26/06/2012:
- 1.23. Ունկնդիրներին կներկայացվեն դասընթացում քննարկման առարկա դարձած՝ ՄԻԵԴ համապատասխան որոշումները:

2. Գրականություն (ձեռնարկներ և ընթերցվող նյութեր)

1. Գ. Ղազինյան, Ս. Դիլբանդյան, Հ. Ղուկասյան, Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Ա. Թաթոյան: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում, Մենագրություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Ջերեմի Մաքքրայդ, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, Իրավաբանական խմբագիր Վ. Ենգիբարյան, Երևան, «Անտարես», 2009:
3. Էլիսթեր Մոուբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Բավիդ», 2010:
4. Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան, Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը լռելու իրավունքի եվրոպական չափանիշների լույսի ներքո, «Պետություն և իրավունք» N 3(41), Երևան, 2008, էջ 23-28:
5. Դ. Մելքոնյան, Ապացույցի թույլատրելիության եվրոպական չափանիշները: «Պետություն և իրավունք», թիվ 4(42), Երևան, 2008 էջ 14-19:
6. Գ. Ղազինյան, Դ. Մելքոնյան, Քրեական հետապնդման հարուցում, «Պետություն և իրավունք», Երևան, 2007, N1 (35), էջ 23-31:
7. Մ. Խաչատրյան, Արդարացի դատական քննության իրավունք, Երևան, 2004 թ.:
8. Դ. Խաչատրյան, ՀՀ քրեադատավարական որոշ նորմերի վերլուծությունը Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների տեսանկյունից, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան», Հ 4-5, 2006, էջ 77-83:
9. Դ. Խաչատրյան, Ապացույցների թույլատրելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական նախադեպային դիրքորոշումները, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի լրատու», Հ 3, 2009, էջ 3-39:
10. Эндрю Гротрайдан, «Статья 6 Европейской конвенции по правам человека. Право на справедливое судебное разбирательство», Изд-во Совета Европы, 1994 г., с. 16-19.
11. Алексеева Л. Б., Практика применения статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. Право на справедливое правосудие и доступ к механизмам судебной защиты, М., «Рудомино», 2000.

12. Моул Н., Харби К., Алексеева Л. Б., Европейская конвенции о защите прав человека и основных свобод. Статья 6 Право на справедливое судебное разбирательство. Прецеденты и комментарии,–М., 2001.

3. Դասընթացի համար մշակված հատուկ ուսումնական նյութեր

3.1 Դասախոսության՝ էլեկտրոնային ներկայացման նյութեր (power point) ծրագրում ներառված բոլոր թեմաների մասով.

3.2 Ենթադրյալ իրավիճակային վարժություն վերջնական քննության համար:

ԴԱՍ 1: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Արդարացի դատաքննության իրավունքը ՄԻԵԿ համակարգում, «քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար բնույթը և բովանդակությունը)

«X&X» վարկային կազմակերպությունում ֆինանսների նախարարության կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել է 100 մլն ՀՀ դրամի չվճարված հարկային պարտավորություն: «X&X» վարկային կազմակերպությունը տուգանվել է 200 մլն դրամի չափով: Կազմակերպությունում կատարված ստուգման ընթացքում ֆինանսների նախարարության աշխատակիցների կողմից հարցման են ենթարկվել կազմակերպության հաշվապահը և գանձապահը: Կազմակերպության նկատմամբ տուգանքի նշանակումը հիմնավորվել է հիմնականում փաստաթղթային ստուգման արդյունքներով, սակայն վերջիններիս բացատրությունները ևս հաշվի են առնվել:

Կազմակերպությունը տուգանքի նշանակումը վիճարկել է դատական կարգով: Վարչական դատարանի 2011 թ. մայիսի 12-ի դատական նիստում կազմակերպության ներկայացուցիչը միջնորդում է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել «X&X» վարկային կազմակերպության հաշվապահին և գանձապահին: Իր այս պահանջը կազմակերպության ներկայացուցիչը հիմնավորում է՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) վրա հղում անելով: Դատարանը մերժում է միջնորդությունն այն

հիմնավորմամբ, որ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքը իրացվելի է միայն քրեական մեղադրանքի առկայության պարագայում, մինչդեռ այս գործով «X&X» վարկային կազմակերպության ղեկավարության նկատմամբ որևէ քրեական մեղադրանք առաջադրված չէ:

Հարց

Արդյո՞ք տվյալ դեպքում ՄԻԵԿ 6-րդ հոդվածի իմաստով առկա է «քրեական մեղադրանք»: Հիմնավորե՞ք Ձեր պատասխանը: Արդյո՞ք այս դեպքում «X&X» վարկային կազմակերպության ներկայացուցիչն իրավասու է օգտվելու ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից:

ԴԱՍ 2: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(«Դատարան» հասկացության ինքնավար բնույթն ու բովանդակությունը: Դատարանի մատչելիությունը, դրա անօտարելի հատկանիշներն ըստ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի)

Ա. Վ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով՝ բնակարան մուտք գործելով կատարած գողության համար: Գործը դատարան է ուղարկվել 2011 թ. հունիսի 4-ին, որն իր վարույթ է ընդունել ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Կ. Կ.-ն: Գործի դատական քննությունը տևել է մոտ 6 ամիս և նույն թվականի դեկտեմբերի 1-ին Կ. Կ.-ն կայացրել է մեղադրական դատավճիռ՝ Ա. Վ.-ին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման համար և դատապարտել 5 տարի ժամկետով ազատազրկման: Դատավճիռը Ա. Վ.-ին է հանձնվել 2011 թ. դեկտեմբերի 17-ին: Դեկտեմբերի 21-ին Կ. Կ.-ն Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր: 2012 թ. հունվարի 9-ին Ա. Վ.-ն ընդհանուր իրավասության առաջին աստիճանի 2011 թ.- դեկտեմբերի 1-ի դատավճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը՝ երեք դատավորի կազմով՝ նախագահող դատավոր Ս. Լ. և դատավորներ Ա. Լ. և Կ. Կ., բողոքի քննության արդյունքում բեկանում է առաջին աստիճանի դատարանի դատավճիռը և արդարացնում Ա. Վ.-ին: Դատավոր Կ. Կ.-ն չի համաձայնում մեծամասնության կարծիքի հետ, չի ստորագրում դատական ակտը և գրավոր շարադրում է իր հատուկ կարծիքը: Կ. Կ.-ի հատուկ կարծիքը վերաբերում է դատական ակտի ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասին:

Դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք է բերում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Հարց

Արդյո՞ք խախտվել է անձի՝ իր գործի անկախ և անաչառ դատարանի կողմից քննության իրավունքը: Եթե այո, ինչում է դրսևորվել խախտումը: Ձեր կարծիքով ինչ որոշում պետք է կայացնի Վճռաբեկ դատարանը:

ԴԱՍ 3: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Ազատության իրավունք: Անձին ազատությունից զրկելու հիմքերը)

2011 թ. հունիսի 7-ին ժամը 20:30-ի սահմաններում ճանապարհային ոստիկանության աշխատակիցները կանգնեցնում են Ս. Վ.-ի վարած ԲՄՎ X5 մակնիշի առանց պետհամարանիշի ավտոմեքենան: Ս. Վ.-ն ոստիկանի պահանջով նրան է ներկայացնում մեքենայի տեխնիկական անձնագիրը և իր վարորդական վկայականը: Դատելով Ս. Վ.-ի խոսելաձևից և շարժումներից՝ ոստիկանները կասկածում են, որ Ս. Վ.-ն ակոհոլային կամ թմրանյութային հարբածության վիճակում է և վերջինիս ու մեքենայի ուղևոր Ս. Տ.-ին առաջարկում են դուրս գալ մեքենայից: Ս. Վ.-ն և Ս. Տ.-ն դուրս են գալիս մեքենայից, որից հետո ոստիկանները վերջիններիս պահանջում են մնալ մեքենայի մոտ կանգնած, քանի որ իրենք հիմնավոր կասկած ունեն, որ Ս. Վ.-ն և Ս. Տ.-ն թմրանյութային հարբածության վիճակում են, ուստի պետք է զննության ենթարկեն մեքենան թմրամիջոց հայտնաբերելու նպատակով: Ս. Վ.-ն չի ընդունում իրենց կողմից թմրանյութ օգտագործելու հանգամանքը և ոստիկանից հետ է պահանջում իր փաստաթղթերը: Ոստիկանը մերժում է հետ վերադարձնել փաստաթղթերը և վերջիններիս պահանջում չհեռանալ, քանի որ իրենց մեքենան զննության պետք է ենթարկվի: Ոստիկաններից մեկը իր գործընկերոջը թողնելով Ս. Վ.-ի և Ս. Տ.-ի հետ՝ մտնում է մոտակայքում գտնվող մթերային խանութ՝ զննությանը որպես ընթերակա ներկա գտնվելու համար երկու անձանց հրավիրելու նպատակով: Այդ ընթացքում ժամը 20:45-ի սահմաններում Ս. Տ.-ն ոստիկանի ներկայությամբ դիմում է Ս. Վ.-ին և առաջարկում «հելինել տներով»: Ս. Վ.-ն չի համաձայնում՝ պատճառաբանելով, որ չի կարող թողնել ավտոմեքենան, իսկ իր փաստաթղթերը ոստիկանի մոտ են, որը չի համաձայնում վերադարձնել: Դա լսելով՝ Ս. Տ.-ն կանգնեցնում է պատահական մեքենա և հեռանում: Ժամը 20:55-ին կատարված

մեքենայի զննությամբ բեռնախցիկից հայտնաբերվում է պոլիէթիլենային փաթեթ՝ կանաչավուն զանգվածով: Նույն պահին Ս. Վ.-ն ձերբակալվում է թմրանյութ պահելու կասկածանքով: Նույն օրը՝ ժամը 23:45-ին, իր բնակարանից ոստիկանություն նույն կասկածանքով բերման է ենթարկվում նաև Ս. Տ.-ն: Վերջիններիս մեղադրանք է առաջադրվում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով (խոշոր չափով թմրամիջոցներ ապօրինի պահելը): Հունիսի 10-ին ժամը 21:00-ին քննիչը Ս. Վ.-ի և Ս. Տ.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացնում դատարան: Ժամը 21:30-ին դատարանն իր որոշմամբ մերժում է Ս. Վ.-ի նկատմամբ կալանքը կիրառել որպես խափանման միջոց, իսկ Ս. Տ.-ի վերաբերյալ միջնորդությունը բավարարում է և որպես խափանման միջոց՝ կիրառում կալանք: Դատարանն իր որոշումը հիմնավորում է նրանով, որ Ս. Տ.-ն առանց ոստիկանների թույլտվության լքել է դեպքի վայրը, դրանով իսկ փորձել է խուսափել քրեական պատասխանատվությունից, ուստի, մնալով ազատության մեջ, կարող է կրկին թաքնվել վարույթն իրականացնող մարմնից:

Հարց

Որ պահին են Ս. Վ.-ն և Ս. Տ.-ն զրկվել ազատությունից: Արդյոք մինչև 20:55-ըոպեն Ս. Վ.-ն եղել է ազատությունից զրկված: Արդյո՞ք Ս. Վ.-ի և Ս. Տ.-ի ձերբակալումը եղել է օրինական: Արդյո՞ք առկա էր հիմնավոր կասկած Ս. Վ.-ի և Ս. Տ.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար: Արդյո՞ք հիմնավորված էր Ս. Տ.-ի կալանավորումը:

ԴԱՍ 4: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Ազատությունից զրկված անձի իրավունքների պաշտպանության երաշխիքները)

2010 թ. հոկտեմբերի 11-ին Ա. Գ.-ն ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ այն արարքի համար, որ նա ուրիշի զգալի չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2009 թ. ապրիլի 7-ին՝ ժամը 03.50-ի սահմաններում, Երևան քաղաքի Հանրապետության փողոցի 00/0 շենքի 3-րդ հարկում գտնվող, տուժող Ո.-ին պատկանող բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով կատարել է զգալի չափի՝ 350 հազար դրամի կենցաղային իրերի գողություն:

Ա. Գ.-ն ՀՀ ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 2010 թ. հոկտեմբերի 8-ին՝ ժամը 02.20-ին: Ա. Գ.-ին ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2010 թ. հոկտեմբերի 8-ին՝ ժամը 23.45-ին: Հաշվի առնելով Ա. Գ.-ի հարբաժության աստիճանը, հոկտեմբերի 8-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, քննիչը զանգահարել է Ա. Գ.-ի բնակարան և վերջինիս կնոջը տեղեկացրել, որ «Ա. Գ.-ն ձերբակալվել է գողություն կատարելու համար»: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2010 թ. հոկտեմբերի 11-ին՝ ժամը 19-ի սահմաններում:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հիմնավորելու համար քննիչը դատարան է ներկայացրել կատարված հանցագործությանը Ա. Գ.-ի առնչությունը հիմնավորող նյութեր, որոնք տրամադրվել են նաև Ա. Գ.-ին: Դատարանը կատարված հանցագործությանը Ա. Գ.-ի առնչությունը հիմնավորելու համար քննիչից պահանջել է գործի բոլոր նյութերը, որոնք ներկայացվել են դատարան: Ա. Գ.-ի՝ գործը ծանոթացման համար նաև իրեն տրամադրելու պահանջը դատարանը մերժել է՝ պարզաբանելով, որ գործի մնացած

նյութերում չկա որևէ այլ ապացույց, որը կհիմնավորի իր առնչությունը դեպքին, իսկ վերաբերելի բոլոր նյութերն արդեն իսկ իրեն տրամադրվել են:

Դատարանը Ա. Գ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին որոշումը կայացրել է 2009 թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 21-ի սահմաններում:

Ընդհանուր իրավասության դատարանը մերժել է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննիչի ներկայացրած միջնորդությունը: Իր որոշման մեջ դատարանը նշել է նաև. «Ա. Գ.-ն բերման ենթարկվելուց հետո ծանր հարբածության վիճակում է եղել, և նրան այդ վիճակում ոստիկանությունում պահելը չի կարող դիտվել որպես նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում»:

Հարց

Արդյո՞ք խախտվել են Ա. Գ.-ի՝ ՄԻԵԿ 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները: Եթե այո՝, ապա կոնկրետ ո՞ր իրավունքներն են խախտվել: Արդյո՞ք Ա. Գ.-ի ձերբակալումը ՄԻԵԿ 5-րդ հոդվածի իմաստով եղել է օրինական:

ԴԱՍ 5: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(«Մատչելի դատարան». հասկացությունը, ապահովման երաշխիքները:
Դատական քննության հրապարակայնությունը, պատճառաբանված դատական
որոշում ստանալու անձի իրավունքը և քննության ողջամիտ ժամկետները)

Ա. Բ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ նա 2010 թ. մայիսի 24-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի ձեռք է բերել և իր բնակարանում պահել հրազեն հանդիսացող ինքնաշեն թմբուկավոր ատրճանակ: Բացի այդ՝ առանց իրացնելու նպատակի նույն բնակարանում ապօրինի պահել է թմբանյութ հանդիսացող 7,1 գ քաշով զգալի չափի մարիխուանա տեսակի թմբամիջոց:

2010 թ. սեպտեմբերի 30-ին Ա. Բ.-ի բնակարանում կատարված խուզարկության արձանագրության մեջ քննիչի կողմից մանրամասն նկարագրվել են հայտնաբերված հրազենի անհատական հատկանիշները, բացի այդ՝ այն ճանաչվել է Ա. Բ.-ի կողմից: Նախաքննության ընթացքում վկա Հ. Ծ.-ն ցուցմունք է տվել, որ բազմիցս այցելել է Ա. Բ.-ի բնակարան, որտեղ վերջինս մի քանի անգամ իրեն ցուցադրել է ինքնաշեն թմբուկավոր ատրճանակը:

2011 թ.-ի փետրվարի 7-ին գործով նախաքննությունն ավարտվել է և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատաքննության ժամանակ վկա Հ. Ծ.-ն ցուցմունք է տվել, որ երբևէ Ա. Բ.-ի բնակարան չի այցելել և Ա. Բ.-ն իրեն երբևէ զենք չի ցուցադրել: Ապրիլի 2-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ դատարանը որոշել է հետաձգել վկա Հ. Ծ.-ի նախաքննական ցուցմունքի հրապարակումը և այլևս չի անդրադարձել այդ հարցին:

Առաջին ատյանի դատարանի 2011 թ.մայիսի 22-ին կայացված դատավճռի «Ապացույցների հետազոտում» բաժնում, որպես Ա. Բ.-ի կողմից նրան վերագրվող հանցագործության կատարումը հիմնավորող ապացույց, դատարանը նշել է նաև Հ. Ծ.-ի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները: Բացի այդ՝ առաջին ատյանի դատարանը դատավճիռը հիմնավորել է նաև իրեղեն ապացույցներով, որոնց զննություն դատական քննության ընթացքում չի իրականացրել:

Ամբաստանյալի պաշտպանը առաջին ատյանի դատարանի 2011 թ. մայիսի 22-ի դատավճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք: Ըստ վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա փոստային կնիքի՝ բողոքը պաշտպանի կողմից փոստային ծառայությանն է հանձնվել հունիսի 15-ին, մինչդեռ պաշտպանը առաջին ատյանի դատարանի 2011 թ. մայիսի 22-ի դատավճիռը ստացել էր մայիսի 30-ին: ՀՀ վերաքննիչ դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով, պաշտպանի բողոքը՝ որպես ժամկետանց, թողել է առանց քննության:

Պաշտպանը վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկել է Վճռաբեկ դատարան: Իր բողոքում վերջինս նշել է, որ իր՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը հարգելի է, քանի որ 2011 թ-ի մայիսի 28-ից հունիսի 10-ը մի խումբ իրավաբանների կազմում գործուղվել է Փարիզ: Քանի որ խմբում եղել է նաև առաջին ատյանի այն դատավորը, որը կայացրել է 2011 թ. մայիսի 22-ի դատավճիռը, ինքը ձևական է համարել բողոք ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու միջնորդության ներկայացումը, և այս պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից իր բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելը խախտում է իր պաշտպանյալի «դատարանի» իրավունքը:

Վճռաբեկ դատարանը վերադարձրել է պաշտպանի բողոքը:

Հարց

Արդյո՞ք խախտվել է ամբաստանյալ Ա. Բ.-ի՝ պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: Արդյո՞ք վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՄԻԵԿ 6-րդ հոդվածի խախտում: Հիմնավորե՛ք պատասխանը:

ԴԱՍ 6: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Անմեղության կանխավարկած: Հասկացությունը և տարրերը, լռելու իրավունք,
ապացուցման պարտականություն)

2011 թ. մարտի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (գողությունը, որը կատարվել է պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով) հարուցվել է N 001 քրեական գործը: Նախաքննության մարմնի 2011 թ. մարտի 30-ի որոշմամբ Ֆ. Ն.-ն ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Մեղադրական եզրակացության համաձայն՝ «Ֆ. Ն.-ն 2011 թ. հունվարի 7-ին իր հետ նախապես վերցրած լինգի գործադրմամբ բացել է Լ. Բ.-ին պատկանող ավտոտնակի մետաղական դուռը և այդտեղից գողացել զգալի չափի՝ 80 000 ՀՀ դրամ արժողության երկու անվադող»: Ֆ. Ն.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռալու մասին ստորագրությունը:

2011 թ. ապրիլի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2011 թ. ապրիլի 25-ին Ֆ. Ն.-ի կնոջ՝ Ս.-ի հաղորդման հիման վրա քննիչի կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի (ծեծ) հատկանիշներով N 2 քրեական գործ հարուցելու մասին: Մայիսի 3-ին Ֆ. Ն.-ն N2 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել 2011 թ. ապրիլի 25-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, հեռախոսով խոսելու առիթով ծագած վեճի ընթացքում կնոջը՝ Ս.-ին ծեծելու համար:

Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2011 թ. հունիսի 3-ի դատավճռով Ֆ. Ն.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական

օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտել 1 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ֆ. Ն.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

Դատարանը որպես անձը բնութագրող հանգամանք է դիտել Ֆ. Ն.-ի դրական բնութագիրը, նախկինում դատապարտված չլինելը, ամբաստանյալի կողմից խոստովանական ցուցմունքներ տալը: Դատարանը միաժամանակ արձանագրել է, որ Ֆ. Ն.-ի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արյունքում վերաքննիչ դատարանը 2011 թ. նոյեմբերի 2-ի որոշմամբ պատժի մասով առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխել է և Ֆ. Բ.-ին դատապարտել է 2 տարի ժամկետով ազատազրկման: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում դատարանը ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել վերջինիս անձը՝ մասնավորապես այն հանգամանքը, որ Ֆ. Ն.-ին N 2 քրեական գործով մեղադրանք է առաջադրվել կնոջը՝ Ս.-ին ծեծելու համար»: Վերը նշված նկատառումներով վերաքննիչ դատարանը գտել է Ֆ. Ն.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի չէ, և նա նշանակված պատիժը պետք է կրի:

Հարց

Արդյո՞ք խախտվել է ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքը: Եթե այո՝, ո՞ւմ կողմից, և ինչպե՞ս է դրսևորվել խախտումը:

ԴԱՍ 7: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(մեղադրյալի պաշտպանության իրավունքը)

2010 թ. հունիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է քրեական գործ՝ Ա. Ա.-ի բնակարանից գիշերը 2:00-ից 3:00-ն ընկած ժամանակահատվածում կատարված գողության փաստով: Բնակարանից գողացվել են ոսկյա զարդեր և Ա. Ա.-ի անձնագիրը: Բնակարանում կատարված զննության արդյունքում հայտնաբերվել են մատնահետքեր, որոնք, հետագայում պարզվել է, պատկանում են նախկինում գողության համար դատապարտված Կ. Պ.-ին: Կ. Պ.-ն բերման է ենթարկվել ոստիկանություն, և քննիչը վերջինիս տեղեկացրել է, որ ցանկանում է մի քանի հարց տալ ուն Խ. Լ.-ի կողմից հունիսի 5-ի գիշերը իրենց բակից առևանգված մեքենայի վերաբերյալ և սկսել է հարցաքննությունը: Քննիչի այն հարցին, թե իրեն ինչ է հայտնի մեքենայի առևանգման վերաբերյալ, Կ. Պ.-ն պատասխանել է, որ իրեն ոչինչ հայտնի չէ, և ինքն ընդհանրապես այդ օրը տանը չի եղել: Քննիչի հաջորդ հարցին, թե ուր է եղել այդ օրը, Կ. Պ.-ն պատասխանել է, որ այդ օրը եղել է իր ծանոթ Գ.-ի տանը: Հաջորդ օրը քննիչը Կ. Պ.-ի ցուցմունքի արժանահավատությունը ստուգելու նպատակով հարցաքննել է Գ.-ին, որը հերքել է հունիսի 5-ին Կ. Պ.-ի հետ լինելու հանգամանքը: Դրանից հետո քննիչն անմիջապես առերեսել է Գ.-ին և Կ. Պ.-ին, և այն բանից հետո, երբ Գ.-ն պնդել է իր ցուցմունքը Կ. Պ.-ին առերես, պահանջել է Կ. Պ.-ից ասել ճշմարտությունը, որ այդ օրն ինքն իրականում տանը չի եղել և հենց այդ ժամանակ էլ գողություն է կատարել Ա. Ա.-ի բնակարանից: Լսելով այդ մասին՝ Կ. Պ.-ն հրաժարվել է ցուցմունք տալ և պաշտպան է պահանջել: Քննիչը մերժել է Կ. Պ.-ի պահանջը՝ պատճառաբանելով, որ առերեսմանը նա մասնակցում է վկայի կարգավիճակով, առերեսումն արդեն սկսված

է, և քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում արդեն իսկ ընթացող քննչական գործողությունը՝ պաշտպան հրավիրելու նպատակով ընդհատելու ընթացակարգ: Այնուհետև քննիչը Կ. Պ.-ին տեղեկացրել է, որ Ա. Ա.-ի բնակարանից հայտնաբերված մատնահետքերը համընկնում են իր մատնահետքերի հետ, ցուցադրել է դա հաստատող ապացույցեր, ինչից հետո Կ. Պ.-ն փաստերի ճնշման ներքո տվել է ինքնախոստովանական ցուցմունք՝ նշելով, որ ինքն է գողություն կատարել Ա. Ա.-ի բնակարանից, որտեղից գողացել է ոսկյա զարդեր և Ա. Ա.-ի անձնագիրը:

Հունիսի 7-ին Կ. Պ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով: Որպես մեղադրյալ հարցաքննվելիս Կ. Պ.-ն պնդել է իր ինքնախոստովանական ցուցմունքը:

Հունիսի 30-ին նախաքննությունն ավարտվել է, և մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկվել է դատարան: Ըստ մեղադրական եզրակացության՝ Կ. Պ.-ն մեղադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով, այն է՝ Ա. Ա.-ի բնակարանից ոսկյա զարդեր և անձնագիր գողանալու համար:

Ընդհանուր իրավասության դատարանը Կ. Պ.-ին մեղավոր է ճանաչել Ա. Ա.-ի բնակարանից կատարած գողության համար և նրան դատապարտել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը):

Կ. Պ.-ն առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք, որում, ի թիվս այլոց, նշել է, որ իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով մեղադրանք առաջադրված չի եղել, և ինքը դրանից պաշտպանվելու հնարավորություն չի ունեցել:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կ. Պ.-ի բողոքն այն հիմնավորմամբ, որ մեղադրանքի ձևակերպման մեջ անձնագիր հափշտակելու փաստը նշված է եղել, և ինքն ըստ էության ամբողջ դատական քննության ընթացքում հնարավորություն է ունեցել պաշտպանվելու այդ մեղադրանքից:

Հարց

Արդյոք խախտվել է Կ. Պ.-ի՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության իրավունքը: Եթե այո՝, ինչպե՞ս է դրսևորվել այդ խախտումը (խախտումները):

ԴԱՍ 8: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Վկաներին առերես հարցաքննելու իրավունք)

2010 թ. մարտի 4-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Ա. Բ.-ն և Գ. Դ.-ն Երևան քաղաքի Թումանյան փողոցով զբոսնելիս նկատել են քաղաքացիներ Ե.-ին և Զ.-ին: Վերջիններիս խոսակցությունից հասկանալով, որ նրանք զբոսաշրջիկներ են և մտածելով, որ Զ.-ի ձեռքի պայուսակում հնարավոր է՝ գումար լինի, որոշում են հափշտակել այն: Այդ նպատակով հետևում են նրանց և երբ Ե.-ն և Զ.-ն հասնում են Թումանյան-Աբովյան փողոցների խաչմերուկ, իրենց հանցավոր դիտավորությունն իրականացնելու նպատակով հետևի կողմից վազքով մոտենում են վերջիններիս, Ա. Բ.-ն Ե.-ի կողմից հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով նրան դեպի աջ կողմ է հրում և շարունակում վազել դեպի Սայաթ-Նովա փողոցի կողմը, իսկ Գ. Դ.-ն նույն պահին Զ.-ի ձեռքից խլում է պայուսակը և վազում Ա. Բ.-ի հակառակ ուղղությամբ: Նույն պահին հանցագործությանը ականատես է լինում ոստիկանության աշխատակիցը, որը հետապնդում է Գ. Դ.-ին, սակայն կարողանում է նրան բռնել այն ժամանակ, երբ վերջինս պայուսակը դեն նետած է լինում: Արդյունքում Գ. Դ.-ն ձերբակալվում է և բերվում ոստիկանություն: Նույն օրը Ե.-ն և Զ.-ն հանցագործության մասին հաղորդում են ներկայացնում, հարուցվում է քրեական գործ ՀՀ քր. օր. 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով:

2010 թ. մարտի 5-ին Ա. Բ.-ն և Գ. Դ.-ն որպես մեղադրյալ են ներգրավվում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Ա. Բ.-ի նկատմամբ հայտարարվում է հետախուզում:

Նույն օրը Ե.-ն և Զ.-ն հարցաքննվում են և իրենց ցուցմունքում մանրամասն նկարագրում են հանցագործության հանգամանքները: Գ. Դ.-ն ներկայացվում է

ճանաչման, որի արդյունքում Ե.-ն և Ջ.-ն ճանաչում են Գ. Դ.-ին, որպես կողոպուտը կատարած երկու անձանցից մեկի: Ե.-ն և Ջ.-ն պնդում են իրենց ցուցմունքը նաև Գ. Դ.-ի հետ առերես հարցաքննության ժամանակ: Ե.-ին և Ջ.-ին ներկայացվում է նաև Ա. Բ.-ի լուսանկարը, և լուսանկարով ճանաչման արդյունքում վերջիններս ճանաչում են Ա. Բ.-ին որպես իրենց նկատմամբ կողոպուտ կատարած երկրորդ անձի: Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, տուժողներ Ե.-ն և Ջ.-ն լքում են Հայաստանի Հանրապետությունը:

2010 թ. ապրիլի 2-ին Ա. Բ.-ն հայտնաբերվում է, վերջինիս նկատմամբ մեղադրանք է առաջադրվում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Ա. Բ.-ն հերքում է իր մասնակցությունը կատարված հանցագործությանը: Մայիսի 10-ին նախաքննությունն ավարտվում է, և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան:

Դատարանում Ա. Բ.-ն և Գ. Դ.-ն ցանկություն են հայտնում հարցաքննելու իրենց դեմ վկայություն տված անձանց և միջնորդում են դատարան հրավիրել Ե.-ին և Ջ.-ին: Դատարանի բոլոր ջանքերը՝ ապահովելու վերջիններիս ներկայությունը, ապարդյուն են անցնում:

Ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու համար մեղավոր է ճանաչում Ա. Բ.-ին և Գ. Դ.-ին: Դատարանն իր դատավճիռը հիմնավորում է տուժողների ցուցմունքներով, տուժողի և Գ. Դ.-ի առերես հարցաքննության արձանագրությամբ, անձին ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ, Գ. Դ.-ին ձերբակալած ոստիկանի ցուցմունքով և լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ:

Հարց

Արդյո՞ք Ա. Բ.-ի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը թույլ է տվել Կոնվենցիայի 6 § 3 (դ) հոդվածի խախտում, եթե այո՝, ինչու, եթե ոչ՝ ինչու:

ԴԱՍ 9: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանափակումները)

2010 թ. հունվարի 6-ին հարուցվել է քրեական գործ քննիչ Ս. Վ.-ի կողմից կաշառք ստանալու փաստի առիթով: Հունվարի 12-ին Ս. Վ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով և նույն մեղադրանքով 2010 թ. օգոստոսի 21-ին քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Ս. Վ.-ին վերագրվող հանցագործության հանգամանքները հետևյալն են.

2009 թ. դեկտեմբերի 30-ին Ս. Վ.-ին է մոտեցել Ա. Զ.-ն (Ս. Վ.-ին նախկինում անհայտ անձը), ում հետ նա ծանոթացել է Պ. Պ.-ի միջոցով: Ա. Զ.-ն խնդրել է կարճել երրորդ անձի նկատմամբ հարուցված քրեական գործը և առաջարկել դրա դիմաց 3000 ԱՄՆ դոլար կաշառք: Ս. Վ.-ն սկզբում մերժել, սակայն ավելի ուշ ընդունել է առաջարկը՝ մի քանի անգամ կրկնելուց հետո: Ա. Զ.-ն, ով, ոստիկանության հատուկ հակակոռուպցիոն ստորաբաժանման սպա էր, տեղեկացրել էր իր աշխատակիցներին, որ դիմողը համաձայնել է կաշառք ընդունել:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ղեկավարը դիմել է դատարան՝ Ս. Վ.-ի նկատմամբ «Կաշառքի նմանակում» ՕՀԳ կատարելու միջնորդությամբ, որը բավարարվել է, և ՕՀԳ կատարման օր է նշանակվել 2010 թ. հունվարի 5-ը:

2010 թ. հունվարի 4-ին Ա. Զ.-ն, նախապես իր վրա կրելով ոստիկանության համապատասխան մասնագետների կողմից ամրացված ձայնագրող սարք, հանդիպել

է Ս. Վ.-ին նախապես պայմանավորված սրճարանում, զրուցել առաջարկվող գումարի շուրջ, մասնավորապես՝ փորձել է նվազեցնել հնարավոր կաշառքի չափը: Այդ խոսակցությունն ամբողջությամբ ձայնագրվել է Ա. Ջ.-ի կողմից:

Հաջորդ օրը կատարվել է ՕՀԳ-ը, և դրանից անմիջապես հետո Ս. Վ.-ն ձերբակալվել է: Ընդհանուր իրավասության դատարանում Վ. Ս.-ն հայտարարել է, որ Ա. Ջ.-ն հրահրել է իրեն վերցնել կաշառքը: Բացի դրանից՝ նա հայտարարել է, որ իշխանությունները չունեին բավարար ծանրակշիռ պատճառ գաղտնի գործողություն ձեռնարկելու համար, և որ իրեն, հրահրելով հանցանք կատարելու, սահմանազանցել են իրենց լիազորությունները:

Ընդհանուր իրավասության դատարանը մեղավոր է ճանաչել Ս. Վ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ մասով: Մեղադրական դատավճիռն ընդհանուր առմամբ հիմնված է Ա. Ջ.-ի մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների, մասնավորապես ՕՀԳ արդյունքների և Ս. Վ.-ի հետ զրույցների գաղտնի կատարված ձայնագրությունների վրա:

Հարց

Արդյո՞ք առկա ոստիկանության աշխատակիցների գործողությունները կարելի է որակել որպես «դրդչություն»: Եթե այո՛, ապա ինչու: Արդյո՞ք ընդհանուր իրավասության դատարանը, մեղադրական դատավճիռ կայացնելով, թույլ չի տվել «արդար դատական քննության իրավունքի» խախտում: Եթե այո՛, ապա ինչպե՞ս է դրսևորվել խախտումը (խախտումները):

ԴԱՍ 10: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

(Միայն օրենքի հիման վրա պատասխանատվությունը)

2009 թ. մայիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հարուցվել է քրեական գործ: 2009 թ. մայիսի 29-ի որոշմամբ Ս. Պ.-ն ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով: Ս. Պ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա սեփականության իրավունքով իրեն պատկանող «Տոյոտա Պրադո» մակնիշի 00 LL 000 պետհամարանիշի մեքենայի մեջ պահել է գործարանային արտադրության 16 մմ տրամաչափի «MII» տեսակի 12457 համարի հրազեն հանդիսացող որսորդական ողորկափող հրացանից փողերի կարճեցմամբ կարճափողի վերափոխված հրացանը, որը ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի բեռնախցիկից և առգրավվել:

Համաձայն թիվ 1559 փորձագետի եզրակացության՝ «Ներկայացված կարճեցված փողերով հրացանը հանդիսանում է գործարանային արտադրության 16 տրամաչափի «MII» մոդելի 12457 համարի որսորդական ողորկափող հրացանից փողերի կարճեցմամբ կարճափողի վերափոխված հրացան (աբրեզ), որը պիտանի է կրակոցներ կատարելու համար և հրազեն է»:

2009 թ. օգոստոսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին աստիճանի դատարան):

Առաջին աստիճանի դատարանի 2009 թ. դեկտեմբերի 28-ի դատավճռով ամբաստանյալ Ս. Պ.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի

1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ և դատապարտվել 2 տարի ժամկետով ազատազրկման:

Առաջին ատյանի դատարանը, Ս. Պ.-ի նկատմամբ կայացնելով մեղադրական դատավճիռ, պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում ամբաստանյալ Ս. Պ.-ն գտնելու եղանակով ապօրինի ձեռք է բերել ողորկափող հրազեն, այսինքն՝ ողորկափող հրացանի փողերը կարճեցնելու դեպքում թեև այն շարունակում է մնալ ողորկափող հրազեն, սակայն դադարում է ողորկափող որսորդական հրացան լինելուց»:

Վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննության արդյունքում համապատասխանաբար Վերաքննիչ քրեական դատարանն ու ՀՀ վճռաբեկ դատարանը առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել են անփոփոխ:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պատժվում են [համապատասխան պատժով]:

(...):»:

1961 թ. մարտի 7-ի քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց համապատասխան թույլտվության հրազեն (բացի ողորկափող որսորդականից), ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, ձեռք բերելը, պատրաստելը կամ վաճառելը պատժվում են [համապատասխան պատժով] (...):»:

Հարց

Ս. Պ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ կայացնելով՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արդյո՞ք խախտել է ՄԻԵԿ 7-րդ հոդվածը, եթե այո՝, ինչո՞ւ: